



ՀԱՎԱԽՔԻ ԳՈՒՍԱՆՆԵՐԻ ԵՐԳԵՐ



Դիմիկ Բազրատունին տասնյակ տարիների
ընթացքում մեծ ջանասիրությամբ զբաղվում է
Զավախքի հայ աշուղների կյանքի ու ստեղծա-
գործության ուսումնասիրությամբ: Նա վերջերս
լույս ընծայեց «Աշուղ Քիֆիլի» (1982 թ.) և
«Զավախքի ժողովրդական երգեր» (1985 թ.),
որոնք ընթերցողի կողմից ընդունվեցին մեծ սի-
րով ու անմիջապես սպառվեցին: Աշուղական
երգեր սիրողներին ներկայացվում է Դ. Բազրա-
տունու՝ «Զավախքի աշուղների երգեր» նոր ժո-
ղովածուն:

Գրախոս՝ ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ

Կազմեց, առաջարանը և կենսագրու-
թյունները գրեց՝ Դ. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ



4702080100—149

Սր. 1/36 1987 ց.

М 604(08)-87

6637-87

© Издательство «Мерани» 1987 г.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ջավախքում աշուղական արվեստը սկսել է բուռն կերպով զարգանալ 19-րդ դարի երեսունական թվականներին: Այդ տարիներին թուրքական լծից ազատագրվելու նպատակով Կարինի, Արդահանի և Խնուսի գավառներից տասնյակ հազարավոր հայեր գաղթեցին, և նրանց մեծ մասը բնակություն հաստատեց Ջավախքի գյուղերում ու գավառի կենտրոնում (Ախալքալաքում):

Աշուղները սերված են աշխատավորական ընտանիքներից: Ներսիս աղբատ գյուղացիներ են կամ արհեստավորներ: Համարձակ են եղել աշուղները, ազատախոս, արձագանքել են աշխատավորներին հուզող հարցերին, բոլոր անցուղարձերին, նշանավոր դեպքերին, հորինել են խրատական երգեր, քննադատել շահագործողներին, հոգևորականներին, դեմ են եղել պատերազմներին: Բազմաշարժար հայ ժողովրդի փրկության հույսերը աշուղները կապում էին ուսման մեծ ժողովրդի հետ:

Գուսանների ստեղծագործությունների մեծ մասը սիրային երգերն են: Առանց սիրերգի աշուղ չի եղել: Այդ երգերում արտահայտված է ազատ, անշահախնդիր ու անդավաճան սիրո գաղափարը:

Իրենց գործունեության առաջին շրջանում գուսանները ելույթներ են ունեցել հայրենի գյուղերում, բայց երբ արդեն անուն են վաստակել, որոնք են լայն ասպարեզ: Շրջագայել են գյուղից-

գլուղ, քաղաքից-քաղաք, իսկ ամբի շառաղանդները՝ հասել են մինչև կենտրոնական քաղաքները:

Ջավախքում աշուղական ելույթները, հատկապես մրցույթները, միշտ էլ կրել են ինտերնացիոնալ բնույթ և զրանք ամրապնդել են եղբայր ժողովուրդների մշակութային կապերը: Շատ երգեր հորինվում ու երգվում էին երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն: Այդպիսի մի երգ զրի է առնված վրացական կոթելիա գյուղում աշուղ Սեֆիլ Լադոյից: Ահա մի քառյակ այդ երգից.

Մի լա. սիրեկանա. մի լա,
Յունախլաբն բունգզար գյուլա
(Այտերդ նման են վարդի),
Ջախխուլիս բոժղինվալե դիլա
(Ամառվա պայծառ օրը),
Շիտակ սառսան զենացվալե
(Ո՛րշտը դու ես, հոգուդ մեռնեմ):

* * *

Այս ժողովածուն կազմելու միտքը վաղուց էր հղացել, բայց կային բավականին լուրջ խոչընդոտներ: Ջավախքի գուսանների մի մասի վերաբերյալ գրավոր ոչ մի տեղեկություն չկար, զրի չէին առնված նրանց երգերը, իսկ մարդկանց հիշողության մեջ պահպանվածների մեծ մասը թուրքերեն էր: Մեզ մնում էր բազմիցս լինել աշուղների ծննդավայրերում, գրուցել տարեց մարդկանց հետ, ունկրնդրել երգեր կատարողներին և զրի առնել, վերջապես նամակներով դիմել նրանց հարազատներին ու բարեկամներին, որոնք ապրում են հեռավոր վայրերում:

Կատարելով այս գործը, մեր նպատակն է եղել լույս աշխարհ հանել Ջավախքի այն գուսաններին, որոնց մասին քիչ տեղեկություններ կան կամ բոլորովին մոռացության են մատնվել: Ընդհանուր է, Զիվանին և Հավասին իրենց երգերով ծանոթ են չայն հասարականությանը, սակայն Սիալին, Մաթինը, Ֆիրադին և Սուխանին մրնացել են անհատ: Թիֆլին, շնայած Զիվանու ժամանակակիցն էր,

րայց նրա երգերի փոքրիկ ժողովածուն լույս տեսավ միայն վերջերս: Ժամանակակից սերունդը այս գուսանների երգերին ծանոթ չէ:

Ջավախքում եղել են ու հիմա էլ կան «աշուղի համբավ վաստակած» երգիչներ, քայց նրանք այդ մակարդակին չեն հասել: Արժե հիշատակել նրանցից մի քանիսին՝ Սեդրակ Հախվերդյան, Շավարշ Կարախանյան, Գարեգին Մուքոյան, Փիլոս Դավթյան, Արտաշես Սարուխանյան, Բարսամ էլքակյան, Խաչատուր Արրա՛ամյան: և այլն: Այդ կարգի ստեղծագործողները համարվել են կոլտնտեսային բանաստեղծներ, որոնց երգերը մտել են ժողովրդական բանահյուսության գանձարանը: Դրանց երգերի լավագույն նմուշները տրպառվել են մեր կազմած «Ջավախքի ժողովրդական երգեր» գլրքույկում («Մերանի» հրատարակչություն, Թբիլիսի, 1985 թ.):

Ժողովածուի նյութերը հավաքելու ժամանակ մեզ օժանդակություն ցույց տալու համար շնորհակալությամբ ենք հալանում Արսեն Կարապետյանին, Արամ Մաթևոսյանին, Ալյոշա էլքակյանին, Գուրուտ Սմոյանին: Ուզում ենք հիշատակել նաև հանգուցյալ Վահագն Մկրտչյանին, որը մեր տրամադրության տակ դեռ գուսան Բիթլիու իր գրի առած երգերը:

ԴԻՄԻԿ ԲԱԳԲԱՏՈՒՆԻ



1846 թվականին Կարգախ գյուղում, Բանգոյենց Ստեփանի ընտանիքում մի մանուկ ծնվեց, պայծառ մի մանուկ, որը հետագայում լուսատու աստղի նման շողշողաց հայ աշուղական գրականության երկնակամարում: Դա Սերոր Բանգոյանն էր՝ ապագա աշուղ Զիվանին:

Դառն են եղել Զիվանու մանկության և պատանեկության տարիները: Հայրը մահանում է երիտասարդ հասակում, իսկ մայրը ամուսնանում է հարևան Դա-

դեշ գյուղում: Սերորը և նրա երկու եղբայրները՝ Քերոբն ու Փիլիփոսը, զրկվում են մայրական խնամքից ու գուրգուրանքից: Մորից բաժանվելու վիշտը ընդմիշտ մնում է Սերորի սրտում: Եվ այդ ազդեցության տակ նա հետագայում գրում է իր հռչակավոր «Մայրիկ» երգը:

Սերորի հորեղբայրը՝ Մարտիրոսը, որը Կարգախում ճանաչված մարդ էր, իր վրա է վերցնում երեք որբուկների խնամքը:

Ժամանակներն ու պայմանները թույլ չեն տալիս, որպեսզի Սերորը կարողանա սիստեմատիկ կրթություն ստանա: Գյուղական խալիֆայական դպրոցում նոր էր գրել-կարդալ սովորել, երբ հորեղբայրը Սերորին դպրոցից դուրս է բերում և կարգում հորթարած:

Բնածին տաղանդի տեր պատանին ընկերների հետ հորթերը արոտ տանելիս շարունակ երգում էր հորեղբորից և ուրիշներից լսած, իսկ այնուհետև իր հորինած երգերը: Ահա թե ինչ է պատմում նրա ընկեր Ավետիս Պողոսյանը. «Մի խումբ պատանիներ խոզափին լճի ափին անասուններ էինք արածեցնում: Մեզ հետ էր նաև Սերոբը: Նա հազվադեպ էր մասնակցում մեր ընկերական խաղերին, շարունակ առանձնանում էր, ցածր ձայնով երգում և հետն էլ ճիպոտի վրա «նվագում»: Մի օր էլ տեսնենք սա իր հետ բերել է տախտակի մի կտոր և ձիու պոչից քաշած մազ: — Ինչի՞ համար են դրանք, — հարցրնում ենք նրան: Սա թե՛ սաղ եմ շինելու: Երբ մենք սովորականի պես սկսեցինք մեր խաղը, Սերոբը առանձնացավ: Կեսօրին տեսնենք «սազը» պատրաստ է: Նա երգում էր հորեղբայր Մարտիրոսից սովորած մի երգ ու հետն էլ խփում «սաղի լարերին»: Ավա՛ղ, մենք ծիծաղում էինք ու շէինք ենթադրում, որ մեր դիմաց կանգնած է ապագա տաղանդավոր աշուղ Զիվանին»:

Կարգախը Ախալքալաքի գավառի մեծ գյուղերից մեկին էր: Այստեղ շարունակ աշուղներ էին գալիս և գյուղական օդաներում ելույթներ ունենում, որոնք մեծ հետաքրքրություն էին առաջ բերում երգ ու երաժշտություն սիրող կարգախցիների շրջանում:

Հորթարած Սերոբը դառնում է աշուղական երգերի ու հեթիաթների երեկոների մշտական հաճախորդը և կլանված ուշադրությամբ ունկնդրում: Ընդունակ պատանին լսած երգը անմիջապես սովորում էր և հաջորդ օրը երգում:

Աշուղական արվեստը Զիվանին սովորում է կարգախցի նշանավոր աշուղ Սիայու մոտ: Երկու տարվա ըն-

Թացքում պատանին այնպիսի առաջադիմութիւն է հանդես բերում, որ նույնիսկ դառնում է իր վարպետի մրցակիցը: Վարպետը հայրաքար օրհնում է իր սանին և անունը դնում Զիվանի:

Ներեկ աշուղի մտքերը թռիչք են գործում, նա չի ցանկանում գյուղում մնալ, ուզում է քաղաք գնալ և լայն առաքարեզ է որոնում: 1864 թվականին մի առիթով Զիվանին հորեղբայր Մարտիրոսի հետ մեկնում է Թիֆլիս, իսկ այնուհետև՝ Ալեքսանդրապոլ: Կարապետ և Հովհաննես Տալյանների սրճարանում Զիվանու ելույթը մեծ հաջողութիւն է ունենում, նրա համբավը արագութեամբ տարածվում է քաղաքում և ապա՝ ողջ Շիրակում:

Զիվանին ալլա չի էտրողանում գյուղում մնալ, շրենայած նրա համար շատ դժվար էր հարապատեկ ից ու հայրենի գյուղից բաժանվելը: Հետապաշտում այդ կարոտը աղտահայտում է «Պանդուխտի երգը» բանաստեղծութեան մեջ.

Յնեզաւայր, երբ բնգանից հեռացա,
Կարծես դախաւից զձովեր բնւս.
Ա՛խ, իմ երկիր, անուշ երկիր, հայրեական,
Պապլւս, մամբս, Լախնիկներխս օրեան:

Զիվանին մտերմանում է Կարգախ ժամանած աշուղ Սաղայու հետ և երկուսով մեկնում են Թիֆլիս: Ելույթի համար ընտրում են Կարապետ Սանոսյանի սրճարանը, ուր զույալ աղբյուրի նման կարկաչում են երիտասարդ աշուղների երգերը: Զիվանին Թիֆլիսում մնում է մի տարի: Այդ կարճ ժամանակամիջոցում նրա երգերը արժանանում են ջերմ ընդունելութեան: Շուտով Զիվանին Տալյան եղբայրներից հրավեր է ստանում և մեկնում Ալեքսանդրապոլ: Շիրակը իր հարուստ ֆուկլորով, պատմական հուշարձաններով գրավում է երգչին: Նրա վրա

մեծ ազդեցություն են գործում Ալեքսանդրապոլի նը-
շանավոր աշուղները:

* * *

1872 թվականին Ջիվանին ամուսնանում է սըր-
ճարանատեր Հովհաննես Տալյանի աղջկա՝ Աշխենի
հետ: Նրանք ունենում են վեց երեխա՝ երկու աղջիկ՝
Արաքսյան և Հռիփսիմեն, որդիները՝ Գարեգինը, Գուր-
գենը, Պարույրը և Լևոնը: Որդիները բոլորն էլ եղել են
նշանավոր մարդիկ, Գարեգինը ՀՍՍՀ արվեստի վաս-
տակավոր գործիչ էր, գրականագետ, արվեստաբան,
պրոֆեսոր, որն ապրեց մինչև 1947 թվականը:

Ջիվանու երկրպագուներին շատ է հետաքրքրում
սեպեկանալ նրա կենդանի մնացած ժառանգների մա-
սին: Ներկայումս աշուղի մեկ տասնյակից ավելի թու-
ներ ու ծոռներ ապրում են Թբիլիսիում, Երևանում և
Մոսկվայում: Արաքսիայի աղջիկը՝ Ռուզաննան (վախ-
ճանվեց վեղջերս), Թբիլիսիում ամուսնացել էր Ալեք-
սանյը՝ Նիժարաձեի հետ: Նրանց աղջիկը՝ Գրետան, ավար-
տել է օտար լեզուների ինստիտուտը և աշխատում է ժող-
տնտեսության կարևոր բնագավառներից մեկում, ամուս-
նակալ է պահպանում աշուղի բոլոր թոռների ու ծոռների
հետ: Երևանում են Գուրգենի որդին և աղջիկը՝ Վարու-
ժան և Անահիտ Լեոնյանները, Հռիփսիմեի որդին՝ Դիզ-
բեկը: Իրենց պապի հիշատակը հավերժացնելու նպա-
տակով ծոռներից երկուսին անվանակոչել են Ջիվան՝
Հակոբյան Ջիվան՝ Երևանում, Միխայիլով Ջիվան՝
Մոսկվայում, կոմպոզիտոր: Մոսկվայում է ապրում
Սերգեյ Գասպարյանը՝ Արաքսու թոռը և Ռուզաննան՝
Լևոնի աղջիկը՝ Ջիվան Միխայիլովի մայրը:

* * *

Ջիվանին իր խմբով շրջագայել է Հյուսիսային Կով-
կասի, Ղրիմի, Ուկրաինայի, Ռուսաստանի և այլ տեղերի
հայաբնակ վայրերում:

1895 թվականին աշուղը ընտանիքով ընդմիշտ տեղափոխվում է Թիֆլիս, որին ձոնել է մի ընդարձակ երգ.

Իմ կառողության շափ ուրբան ուր գիտեմ,
Պիտի գովեմ ես աննման Թիֆլիսը,
Կյանքիս մեջ ես վատություն տեսած չեմ,
Ինն հարգել է միշտ պատվական Թիֆլիսը:

Այստեղ ապրելու առաջին օրերին աշուղը այցի է գնում իր հայրենի Կարգախ գյուղը: Վերջին անգամ գո:սանը Կարգախում եղել է 1908 թվականի ամռանը: Կարգախցիները ջերմորեն են ընդունում իրենց պանդուխտ գավակին:

Ընտանիքի նյութական դրուժյունը բարելավելու ուղղությամբ աշուղի գործադրած բոլոր ջանքերը ապարդյուն են անցնում, կարիքը դառնում է նրա կյանքի մշտական ուղեկիցը: Պարտաքատերերին տեսնելիս նա ամաշում է: Կարգախցի կառապան Սեդրակ Միքայելյանը Զիվանուն և նրա խմբի անդամներին Ախալքալաքից պետք է տաներ Արդահան, ճանապարհը անցնում է Կարգախ գյուղի միջով: Աշուղը կառապանին խնդրում է ձիերը դանդաղ ընթացքով վարի, որպեսզի Կարգախ հասնեն ուշ գիշերին:

— Ինչո՞ւ, — զարմացած հարցնում է կառապանը:

Աշուղը հայտնում է, որ ինքը մի մեծ գումար է պարտք գյուղի քահանային:

— Ամոթ է, թող շիմանա, որ ես այս կողմերում եմ:

Ռեակցիայի տարիներին շատ է ծանրանում ժողովրդի սրտից խոսող գուսանի վիճակը: 1908 թվականի աշնանը Զիվանին ծանր հիվանդանում է և ընկնում անկողին: Անօգնական վիճակում հիվանդությունը ծանրանում է և տևում հինգ ամիս: 1909 թվականի մարտի 19 հանճարեղ երգիչը վախճանվում է:



Զիվանին երգեց ավելի քան 40 տարի, ժողովրդի համար ոչինչ չխնայեց: Նա հորինել է մոտ 800 երգ: Աշուղի անվան հետ են կապված «Աշուղ Ղարիբ», «Ասլի Քյարամ», ինչպես և արևելյան այլ սիրավեպեր: Նրա ստեղծագործությունները առանձին գրքերով լույս են տեսել 1882, 1912 թվականներին: Մեր օրերում լույս են տեսել տպագրված և անտիպ երգերի մի քանի ժողովածուներ:

Զիվանին իր երգերով հանդես է եկել իբրև մեծ հայրենասեր, առաջադիմական գաղափարների պրոպագանդիստ, անարդարության, հետամնացության դեմ անհաշտ մարտնչող: Հալածանքից խուսափելու նպատակով շատ մտքեր արտահայտել է այլաբանորեն: Այդ տեսակետից առավել բնորոշ է «Խելքի աշեցեք» հռչակավոր երգը:

Աշուղի երգերը տողորված են ինտերնացիոնալիստական գաղափարներով: Նա իր ազգը չի գերադասում ուրիշ ազգերից, սիրում և հարգում է մյուս բոլոր ժողովուրդներին:

Ես սիրում եմ մերձավորիս, բայց չեմ ատում օտարին,
Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ իր բարին:

Գուսանի սիրո թեմային նվիրված երգերը ունեն առանձնակի հնչեղություն և մեծ ժողովրդականություն են վայելում՝ «Նազելուս ամպ է իջել», «Պաղ աղբյուրի մոտ», «Գեղեցկուհուն» և այլն:

Հայ իրականության մեջ ոչ մի աշուղ այնպես չի սիրվել, ինչպես Զիվանին: Այսօր էլ գուսանի երգերը ամենուրեք հնչում են իրենց խոր բովանդակությամբ և հյուսիսից եղանակներով: Զիվանուն գիտեն բոլորը, գիտեն Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, գիտեն թե մեծերը և թե երիտասարդները: Շատ աշուղներ երգեր են ձոնել մեծ երգչին, իսկ շատշատերն էլ նրա անունը հիշատակել են իրենց երգերում:

Ամեն տարի հունիս ամսի երկրորդ կեսերին, Զիվանու հայրենի Կարգախ գյուղում, մեծ շուքով նշվում է ժողովրդական երգչի օրը: Տարրեր վայրերից ալյատեղ են ժամանում գուսանի տասնյակ հաղարավոր երկրպագուներ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու հայ մեծանուն գուսանին:



ԶԻՎԱՆԻՆ ԵՎ ԻՐ ԳՈՒԹԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
(1897 թ. Ալեքսանդրապոլ)

Անթե թռչնակ է աշուղը—
 Այսօր այստեղ, վաղը՝ այլ տեղ,
 Դարձող ճախրիկ է աշուղը,
 Այսօր, այստեղ, վաղը՝ այլ տեղ:

Մերթ անսփառ, ծախալ, սլապակ,
 Մերթ անհացող, մերթ հացողակ,
 Թափառում է նա շարունակ,
 Այսօր այստեղ, վաղը՝ այլ տեղ:

Մի տեսակ լուսատրտիկ է,
 Լուր տարածող մունետիկ է,
 Հողմից հալածված ամսիկ է,
 Այսօր այստեղ, վաղը՝ այլ տեղ:

Ջուր հույսերով խարխափում է,
 Գեղեր, քաղաքներ չափում է,
 Կայծակի նման խփում է,
 Այսօր այստեղ, վաղը՝ այլ տեղ:

Ջիվան, մի տեղ դադար չունի,
 Մեղվի պես միշտ կթռչկոտի,
 Այս ընթացքով պիտի մեռնի,
 Գուցե այստեղ, գուցե՝ այլ տեղ:

Հ Ո Վ Ի Կ

Առավոտյան քաղցր հովիկ,
 Գնա դեպ երկիրն Ջավախ,
 Ունիմ մեկ ժերունի մայրիկ,
 Գնա տես ի գյուղն Կարզախ:

Այնտեղ է աղզս, երամս,
Քույր ու եղբայր, բարեկամս,
Այնտեղ մեռած տապ ու մամս,
Գերեզմանք մտած են վաղ:

Ինձանից շատ բարե արա,
Երբ դու մորս լինես ներկա,
Գնա հատկասլես Կիլերիա,
Նա է մեր գյուղի մեջ մեկ թաղ:

Այն թաղի մեջն է մեր տունը,
Քերոք է եղբորս անունը,
Ինձ համար կարել է քունը,
Մայրս արտում ու անծիծաղ:

Հովիկ, Զիվանուցս լուր տար,
Թե հարցնեն ինձի համար՝
Ասա թե միշտ ձեռին քնար,
Աղզի համար կանչում է խաղ:

Մ Ա Յ Ր Ի Կ

Ջուխտակ շամամներդ դրախտ ծոցիդ մեջ,
Կաթնաղբյուր են եղել ինձ համար, մայրիկ,
Տատրակի պես շատ եմ արել ելևէջ,
Կրծքիդ վրա մաքուր՝ սուրբ տաճար, մայրիկ:

Ինձ համար հոյակապ կազմդ ես մաշել,
Հրճվել, ուրախացել, վրաս ես աշել,
Մինչև մեծանալս ինչե՞ր ես քաշել,
Մնացել ես անքուն, անդադար, մայրիկ:

Փոխարենը ես քեզ ոչինչ չեմ արել,
Մոտդ չեմ մնացել, չեմ մխիթարել,

Քու սուրբ պատվերներդ ճիշտ չեմ կատարել,
Թողել եմ իղձերդ անկատար, մայրիկ:

Ջիւլանին եմ, սխալմունքս զգում եմ,
Ես քու հոգուդ համար միշտ աղոթում եմ,
Ներիր քու մեղաւոր որդուդ, խնդրում եմ,
Եղիր երկնքումը ինձ սատար, մայրիկ:

Ը Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը՝ մարդուն
Փայլեցնում է արևի պես պատկերը մարդուն,
Ինչ մարդ ունենա յուր մոտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կյանքդ նվիրես ընկերի լավին, քիչ է դարձյալ,
Լէյնպես է հոգեկան լուսատու լապտերը մարդուն,
Ընկեր եմ ասում, հաստատակամ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները յուր վերա գալած ժամանակը,
Կտրիճ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն,
Ով որ ունենա մտերիմ ընկեր, Ջիւլան աշրդ,
Զի՛ սպիտակեր ամենևին մեկ հերը մարդուն:

ՍՊԻՏԱԿ ՄԱԶԵՐ

Գույներդ փոփոխվեց, եղաք ցրտահար,
Աշնան վարդի նման, սպիտակ մազեր,
Զեր դուրս գալու տեղը իմ հոգիս դուրս գար,
Զընկնեի այս օրվան, սպիտակ մազեր:

Կանայք երես ե՛ն դարձնում ձեզանից,
Ձեր պատճառով չեն ախորժում ինձանից,
Աշխույժ երիտասարդներու շրջանից
Ձրկեցիք անպիտան, սպիտակ մազերու:

Ձնոտ ամսի նման շոքեցիք գլխիս,
Արես բռնվեց, տխրեցավ հոգիս,
Այդքան շուտով չէիք գտնի անբախտիս,
Թե լինեիք լավ բան, սպիտակ մազերու:

Ջիւղանու քնարին մեծ հարված տվիք,
Ձեզ տեսնելով ինձ չեն կանչում հարսանիք,
Իմ գործիս ահագին վնաս հասցրիք,
Ձախորդության նշան, սպիտակ մազերու:

ԵՍ ՔԵՉ ՏԵՍԱ

Ես քեզ տեսա մեջը այգուն,
Ճտվտալով ինչպես թռչուն,
Սրտիս սաստիկ դուր եկար դուն,
Ա՛խ, իմ սիրեկան, անուշ սիրեկան,
Կյանքիս հատորը դու ես, աննման:

Վառա, վառա, ես վառա,
Կրակիդ ճարակ դառա,
Հանգստություն չունեցա,
Մինչ իմ կարոտս չառա:

Այն օրվանից շունիմ դադար,
Ինչ քեզ տեսա, գեղատիպար,
Իսկապես եղա սիրահար,
Ա՛խ, իմ սիրեկան, անուշ սիրեկան,
Կյանքիս հատորը դու ես, աննման:
(Վառա, վառա և այլն):

6637-82

Աչքերիցդ մի կայծ թռավ,
Թռավ սրտիս մեջը ընկավ,
Ինչ կամեմ չի հանդիւր բնավ,
Ախ, իմ սիրեկան, անուշ սիրեկան,
Կյանքիս հատորը դու ես, աննման:
Վառա, վառա և այլն:

Փափան ես ոսկեփետուր,
Աչքերիդ մեջ կցուա հուր,
Թողուն հին ես թռչնոց հանուր,
Ախ, իմ սիրեկան, անուշ սիրեկան,
Կյանքիս հատորը դու ես, աննման:

Վառա, վառա, ես վառա,
Կրակիդ ճարակ դառա,
Հանգստություն չունեցա,
Մինչ իմ կարոտս շառա:

Ն Վ Ե Ր

Իմ քոս Լուսիկին

Դրախտի տունկ, խնկի ծառ ես, Լուսաբեր,
Անուշահոտ մեկ բուրվառ ես, Լուսաբեր,
Ի՞նչ անեմ քեզ, ի՞նչ անուն տամ, հոգյակս,
Ոսկուց ձուլված գեղափայլ ես, Լուսաբեր:

Մնողներիդ նոր, անդրանիկը, նուպարը,
Նրանց անպին մարգարիտը, գոհարը,
Դու աստղերու աշխարհից ես վար իջել,
Նրա համար շատ պայծառ ես, Լուսաբեր:

Դու Գալուստյանց շառավիղ ես, մատաղ կույս,
Ստեփանյան բուրաստանից նորաբույս,
Արաքս գետի ալիքներից գոյացած,
Սիրո ծնունդ աշխույժ պառն ես, լուսաբեր:

Ջիվանուց էլ մի մաս ունիս, անուշիկ,
 Լեոնյանց տան արենակից շատ մոտիկ,
 Սովորում ես մորդ լեզուն խնդալով,
 Թոթովելով կբարբառես, Կուսաբեր:

ԳՈՎԵՍՏ ԱՐԱՔՍԻ ԴՍՏԵՐՍ

Այսուհետեւ ինձ լույս չէ հարկավոր,
Քանի որ քեզ ունիմ, իմ ազնիվ հոգյակ,
աչերդ արեգակ,
Թե ունիմ ցնծութիւն, քեզ եմ պարտավոր,
Դու ես ինձ համար ամեն ժամանակ
կենդանի ջութակ:

Քախ լինելուս պատճառը քեզ եմ համարում,
Որ տալիս ես սրտիս լարին ընդհարում,
Քիչ կճարվի քեզ նման այս դարում,
Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,
սիրուն աղամյակ:

Այսօրդ անթառամ պարտեզի ծաղիկ,
Շրթունքներդ մեղրից, շաքարից անուշիկ,
Վերջապես ինձ համար, ով իմ գեղեցիկ,
Զկա ողջ աշխարհը քեզ նմանակ,
դուն ես միայնակ:

Քաղցրախոս թուշիկներ անհամար, անթիվ,
 Անուշ ձայնիդ համար քեզ կուտան պատիվ,

ս,

Պատկերդ գրավիչ, անունդ ազնիվ,
Դուն ես առավոտյան պայծառ արուսյակ,
ուշիմ, ընդունակ:

ՍԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԵՂՆԻԿ

Սարի սիրուն եղնիկ, նորահաս ծաղիկ,
Գեղատեսիլ աղջիկ, մոտս ման արի,
Լեզուդ անուշ, քաղցրիկ, բերանդ մեղմիկ,
Պար դալուղ կաքավիկ, մոտս ման արի:

Բնությունդ համեղ, ինքդ ազնիվ ցեղ,
Սիրուն, վայելչագեղ, աչքերդ կանթիղ,
Թերթիչներդ ասեղ, ունքերդ աղեղ,
Մի գնալ ուրիշ տեղ, մոտս ման արի:

Պարկեշտ, բարեհասակ, դրախտաբնակ,
Դու անմեղ հրեշտակ, շունիս նմանակ,
Ով է քեզ հակառակ, ասա, իմ հոգյակ,
Միշտ ազատ, համարձակ մոտս ման արի:

Խոստանում է դարուն կերպդ զվարթուն,
Ունիս պարկեշտ անուն, համեստ սիրասուն,
Զուգվել ես զարդարուն, աղավնյակ ես դուն,
Զհոքս բռնե, սիրուն, մոտս ման արի:

Ջիվանուս տարփալին, սրտիս ըղձալին,
Իմ հոգուս անձկալին, մտքիս պանծալին,
Մառերի պտղալին, անուշ խնկալին,
Կյանքիս զվարճալին, մոտս ման արի:

Պաղ աղբյուրի մոտը կանդնած մի աղջիկ,
Ձևորին սափոր լցրած, ջուրն էր անուշիկ,
Աչք եւ ունըր զաւամով քաշած, դեղեցիկ.

Մալրիկ, զարնվեցա, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արավ ինձ նշան:

Պաղ աղբյուրի մոտը, պարտիզում նստած,
Ռենկին լավ գինի, պատի խորոված,
Երդում էին, պարում էին, բոլորած.

Մալրիկ զարնվեցա, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արավ ինձ նշան:

Ման էր դալիս բնկերներով միասին,
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին,
Մաղերը ոսկեգույն, ճակատը լուսին.

Մալրիկ զարնվեցա, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արավ ինձ նշան:

Ցերեկը անդադար նորան եմ հիշում,
Գիշերն էլ երազիս մեջն եմ տեսնում,
Տոշորված ման կուղամ խեղճ, մոլոր, արտում.

Մալրիկ, զարնվեցա, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արավ ինձ նշան:

Ա՛խ, երանի աչն ավուր, հաղար երանի,
Տեսությանը կրկին լինեմ արժանի,
Առանց նրան ես չեմ մնար կենդանի.

Մալրիկ, զարնվեցա, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արավ ինձ նշան:

Թե պիտի գաս, ո՛վ սիրելի, երեկոյան դեմ արի,
 Շատ մի ուշանալ, նազելի, երեկոյան դեմ արի,
 Յերեկը փակվիր սենյակում, մի երևար ոչ ոքի,
 Շատ շատերին չես հաճելի, երեկոյան դեմ արի:

Այ եր նախանձելով այրել կուզե քո պատկերդ,
 Զուշապիւր, երանելի, երեկոյան դեմ արի,
 Նս ու դու, աստված միայն պիտենանք պիտի մեր
 գաղտնիքը,
 էլ չեմ ասում քեզ ավելի, երեկոյան դեմ արի:

Գիշերը հանգիստ, խաղաղ նստենք մի տեղ, զրույց
 անենք,
 Իմ գեղեցիկ, իմ գովելի, երեկոյան դեմ արի,
 Շողերին գուրս է զալիս յուր բնիցը վատ սողունը,
 Թունավոր օձը, գարշելի, երեկոյան դեմ արի:

Թող օղը քիչ մեղմանա, քաղցր զեփյուռը լիով փչե,
 Բարձրապատիվ երեկի, երեկոյան դեմ արի,
 Տալածե բազուկներդ եղբորդ՝ Զիվանու վզով,
 Սպիտակ շուշան փարելի, երեկոյան դեմ արի:

ԱՍԻ—ԱՍԱՎ

Ասի, սիրուն, է՛ր ես տխուր,
 Ասավ՝ սիրտս փրափոր է,
 Ասի նեկտար խմե մաքուր,
 Ասավ՝ լսվը չէ, սղաոր է:

Ասի, սիրուն, քիչ կաքավե,
 Ասավ՝ հերիք խոսիս, բավ է,

Ասի, սիրուն, մարդդ լա՞վ է,
Ասա՛վ՝ ծեր է, ալևոր է:

Ասի, սիրուն աղջիկ ես դու,
Ասա՛վ՝ խելքից պակաս ես դու,
Ասի, սիրուն, աստղիկ ես դու,
Ասա՛վ՝ ոչ, նա լուսավոր է:

Ասի, սիրուն, եկ ինձ պաշէ,
Ասա՛վ՝ ամոթ է, ամաշէ,
Ասի, Զիւլանուն ճանաշէ,
Ասա՛վ՝ ինձ ի՞նչ հարկավոր է:

ՁԱԽՈՐԴ ՅՐԵՐ

Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար,
Որպես հաճախորդ շարվի-շարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղություն ազգերի գլխից,
Ինչպես ճանապարհի կարավան կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է հատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենա, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան, կուգան ու կերթան,
Արեւ առանց վախենալու ցայտում է լույսը,
Ամպերը գեպի աղոթարան կուգան ու կերթան:

Ծրկիրը ուսյալ զավակին է փայփայում մոր պես,
Անկիրթ ցեղերը թափառական, կուգան ու կերթան,

Աշխարհը հյուրանոց է, Զիվսին, մարդիկ հյուր են,
Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան:

Ա Ձ Գ Ի Մ

Աղգ իմ, որքան նկուռն մնաս,
Սիրտս քեզանից չի դատվի,
Հաղար տեսակ շարժարանք տաս,
Սիրտս քեզանից չի պատվի:

Քեզ չեմ մոռանա հավիտյան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թեկուզ դրախտն էլ ինձ տան,
Սիրտս քեզանից չի դատվի:

Քեզանով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,
Մոցիդ մեջը հանգչիմ, մայրիկ,
Սիրտս քեզանից չի դատվի:

Զիվանին եմ քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնգկատտանին էլ տեր դռնամ,
Սիրտս քեզանից չի դատվի:

ԵՍ ՄԵԿ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ

Ես մեկ ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անվանի,
Պատուներս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ հմ արևելյան,
Չունիմ որոշ այգեպան,
Տունկերս ամեն երկիր
Ընկած են բաժան-բաժան:

Արևելքում ինձ տնկեց,
Երբ որ աստված ստեղծեց՝
Ասաց՝ աճե, բազմացիր,
Մի այգի էլ ինձ տվեց:

Ուղարկեց մի այգեպան—
Հարավից հսկա իշխան,
Այն հսկայի անունով
Կոչվեցա ծառ Հայկական:

Չորս հազար տարվա ծառ հմ,
Արմատս ու ինդ, կայտառ հմ,
Թևակտ ու ծա պակաս է,
Բայց անունով պայծառ հմ:

ԽԵԼՔԻ ԱՇԵՑԵՔ

Նվեր պեմսանդրապոլցի

Պ. Հովհաննես Խոջայանցին

Անմիտ ճնճղուկը բազելի ճանկից
Ուղում է որս խլել, խելքի աշեցեք,
Կարծես ձանձրացել է գլխից ու գանգից.
Պատերազմ է մտել, խելքի աշեցեք:

Խելքին զոռ տալով է հիմա ամեն բան,
Հիմարն էլ իմաստուն կարծում է իրան.
Նիհար հավը պարարտ, մեծ սագի նման
Ուզում է ձու ածել, խելքի աշեցեք:

Ազնիվ մարդը անարգվում է գեշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,

Ծրկու տարվա հորթը ցուլ-գոմեշի հետ
Բերել կամ են լծել, խելքի աշեցեք:

Գայլը վրան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան հսկող է դառած.
Աքլորը քարոզչի վերարկու հագած
Ամբիոն է ելել, խելքի աշեցեք:

Ուղտը մետաքսագործ, եղը նավավար,
Գայլը հովիվ դառած կարածե ոչխար,
Աղվեսը հավնոցի դռանն հուշարար,
Ի՞նչ հսկող են գտել, խելքի աշեցեք:

Երևիսան ձեռն առած փտած, հին լարը,
Բռնել կամի դարձող ջաղացի քարը.
Գաճաճ մուկը շրջել կուզե մեծ սարը,
Կողքը դեմ է տվել, խելքի աշեցեք:

Ուրացողը խիղճ չունի ամենևին,
Զղկալով, սպիտակ ասում է սեին,
Կույրը շտեմանելով լույսը արևին,
Աշխատում է ստել, խելքի աշեցեք:

Ավել հոգսը վնաս կուտա յուր անձին,
Ուրիշի ցավերը առնելով վզին,
Գայլը հողատեղ է մարդացեց մեկին,
Խենթը սե է հագել, խելքի աշեցեք:

Գորտը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,
Դուրս ելավ, բաժինն է վիշապի փորին.
Իբար հետ սուտ կովել են ձին ու ջորին,
Էշը մեջ է ընկել, խելքի աշեցեք:

ժլատն աշխատելու է շատ ընդունակ.
Յուր հացը ուտելու շունի ախորժակ.
Խեղճ անձը զրկելով դիզել է ստակ,
Ուրիշն է վայելել, խելքի աշեցեք:

Հանցավոր հարուստը ուրախ խնդալով,
Մեղքից ազատվել է մեծ գումար տալով.
Խեղճ մարդը սխալմամբ մի հավ գողնալով,
Բանտի մեջ է փտել, խելքի աշեցեք:

Մարդ կա գերդաստանը պահում է ցամաք.
Կերթա դուրսը կուտն մեղր ու սեր, կարագ,
Այլոց համար կանե ձայնով պատարագ.
Իրան ժամ չի անիլ, խելքի աշեցեք:

Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար,
Բնակիչները հայ, մոտ քսան հազար,
Իրանք սնունդ շունին ապրելու համար.
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցեք:

Ինչ կենդանի ուզե լինել շանսատակ,
Կերթա ու կմտնի ծանր բեռի տակ.
Նապաստակը առյուծի դեմ համարձակ
Կռիվ է սկսել, խելքի աշեցեք:

Յորենը մի անգամ լինելով տկար,
Այնպես բույս չեն գտել, որ անեն նշխար.
Կորեկ հացը իրան կարծելով հարմար
Սեղան է բարձրացել, խելքի աշեցեք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած.
Ասպարեզը համբակներուն են թողած.
Ջիվանն էլ կաղ իշով կարավան մտած՝
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցեք:

(Ամուրիէն ու ամուսնացածը)

Ազապն ու կարգածը նստած մի անգամ,
 Խոսում էին իրարու հետ այս տեսակ.
 Կարգածն ազապին ասավ,—բարեկամ,
 Հերիք մնաս խեղճ ու մոլոր միայնակ:

Ազապն ասավ,—ինձ մի կարծիր խեղճ, մոլոր,
 Ազատ, անհոգ ես եմ հատուկ բախտավոր,
 Խմբով սիրունները իմս են բոլոր,
 Կնայեմ ամենին ազատ, համարձակ:

Կարգածն ասավ,—քեզի կուտամ մի պատվեր,
 Դու սուրբ ամուսնության եկ, ունեցիր սեր.
 Սիրունների ամեն մեկն էլ չունեն տեր,
 Կմորթեն թշվառիդ անսուր, անդանակ:

Ազապն ասավ,—Ես եմ առույգ, գեղեցիկ,
 Ուրախ, անհոգ, բախտով աջող, երջանիկ,
 Որտեղ որ տեսնում եմ մեկ սիրուն աղջիկ,
 Ինձ կկարծեմ նրան հարմար ընդունակ:

Կարգածն ասավ,—Երջանիկ չես, թշվառ ես,
 Մարդկության անօղուտ, անպտուղ ծառ ես.
 Դու կաշխատես, այլոց թոնիր կվառես,
 Թողնում ես քու սունդ անծուխ, անկրակ:

Ազապն ասավ,—մարդ չի խոսիր ինձ վրա,
 Ծա եմ անկախ, ինքնագլուխ մեկ տղա.
 Ինձանից ոչ հալավ, ոչ հաց ուզող կա,
 Կուտեմ, խմեմ, ուրախ կապրեմ շարունակ:

Կարգածն ասավ,— ունեմ համեստ ամուսին,
Տիրոջ փառքը վայելում ենք միասին.
Աստված պարգևել է ինձի թանկագին,
Ունեմ երկու, երեք պաշտելի զավակ:

Աղապն ասավ,— լավ է այսպես մնալը.
Քան թե ամուսնանալ, վերջը զղջալը.
Շատ դժվար է զավակներու հոգալը,
Իմ ինչ պետքն է ընկնել մեծ ցավերու տակ:

Կարգածն ասավ,— դա է քո պատասխանը,
Զի զղջա ով գիտե իր արած բանը,
Հեշտ կկառավարե նա գերդաստանը՝
Ինչ մարդ գիտե ապրուստի լավ եղանակը:

Աղապն ասավ,— կուղեմ միշտ ազատ ման գալ,
Տնական հոգսերով չեմ ուզեր տնքալ.
Շատերը կցանկան աղջիկն ինձ տալ,
Սրբ հազար տեղից գալիս են խնդրակ:

Կարգածն ասավ,— պարապ մարդը ջանք չունի,
Օրերը զուր կանցնեն, աշխատանք չունի,
Զգիտե՞ս կին շունեցողը կյանք չունի,
Աբեղա էլ լինի է ցավոց ճարակ:

Աղապն ասավ,— չեմ համոզվիր հավիտյան
Կամ թե ոտս կապել խեղճ հավի նման,
Ման կուզամ ամեն տեղ որպես ինքնիշխան,
Բեռի տակ մտնելու չունեմ նպատակ:

Կարգածն ասավ,— Երբ որ կերթամ դեպի տուն՝
Կրացվի իմ սիրտս ինչպես նոր գարուն.
Կինս, զավակներս ուրախ, զվարթուն,
Դեմ կվազեն իրար տալով աղաղակ:

Աղապն ասալ,— ունեմ ես շատ օթեան,
Ամեն օր կունենամ նոր-նոր սիրական,
Իմ գիշերվա բնկերներս ողջ մնան,
Ինձ համար կյանք կուտան ամեն ժամանակ:

Կարգածն ասալ,— ես եմ միշտ բարեհամբալ,
Տունս կյանքը խաղաղ, կեցությունս լավ,
Կմոռանամ բոլորովին հողս ու ցալ,
Երբ երգում են զսովակներս ներդաշնակ:

Աղապն ասալ,— չկա ինձ պես ինքնակամ
Կարգածներու մեջր դիտցիր, բարեկամ,
Թեա բռնող չկա, ուր ուզեմ կերթամ,
Քեզ նման իմ վիզս չեմ ձգեր օղակ:

Կարգածն ասալ,— քանի փոքր է հասակդ,
Պարծանքով կփայլի բո գրոշակդ,
Եւր մեծանաս կմարի աչք կրակդ,
Կմեռնիս անսերունդ և անհիշատակ:

Աղապն ասալ,— աչք խոտքիդ դեմ չունեմ փաստ,
Իրավ որ աղապր խեղճ է ու նվաստ,
Ասա, հրամանիդ կանգնած եմ պատրաստ,
Նդիր տառապելույս բարի օրինակ:

Կարգածն սպասպի դործերը սարքեց,
Նդավ խաչքաւորը, պսակեց, կարգեց,
Աղապն էլ կարգածի խորհուրդը հարգեց,
Աշխաբհի օրենքին դարձաւ հպատակ:

Ջիվան, բավ է մեկին առողջ կին մեկ հաս,
Անօրեն է, ով որ կին կպահէ շատ,
Պիտի վարլի յոր ծաղումին համեմատ,
Մարդ ոչ անասուն է և ոչ հրեշտակ:

Անհոգ ես, շեւ գիտեր ինչ կա քո մասին,
Պտտվում են քո խեղճ անձիդ վնասին,
Գամփոռներով, բարակներով միասին.

Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Չազուկներդ տխուր, լալիս են, լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգա,
Կուգե ձեռերը քո արյունով լվա,
Խղճալի, քո տեղյակ սար ու ձոր կուլա.

Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Չազուկներդ տխուր, լալիս են, լալիս:

Որսկանը գութ շունի, կանե կրակը,
Կամ քեզի կսպանե կամ քո գավակը,
Չուր չի անցնի հրացանի գնդակը.

Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Չազուկներդ տխուր, լալիս են, լալիս:

Դաշտումը շեւ ման դար. թե մտածես լավ,
Քեզ կվիրավորեն, կստանաս մեծ ցավ,
Դուրս մի ելներ խիտ անտառից դու բնավ.

Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Չազուկներդ տխուր, լալիս են, լալիս:

Չորերը մի մտնիր, վտանգավոր է,
Որսկանը ման կուգա, այնտեղ սովոր է,
Քարայրից խփելով քեզ կզուրե.

Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Չազուկներդ տխուր, լալիս են, լալիս:

Ով յուր ազգը ուրանա,
 Երկու աշքով կուրանա,
 Հետնյալ աղքատի նման,
 Դռնեկդուռ մուրանա:

Կշտին դիպչի գեղարդը,
 Սրտիցը թափի լյարդը,
 Դժոխքի բռնցկելիք
 Լինի ազգուրաց մարդը:

Կեղծ ու պատիր հնչողին,
 Կատվի սլես մոնչողին,
 Աստված աշխարհից ջնջե
 Հայ անունը ջնջողին:

Հայը որք ժողովուրդ է,
 Օտարաց մեջ խառնուրդ է,
 Ազգուրաց, աստվածուրաց—
 Երկուսը մեկ խորհուրդ է:

Երբ որ հայը գումարվի,
 Նրան չի հավասարվի,
 Հայերեն չգիտեցողը
 Կիսատ հայ կհամարվի:

Ազգուրացը անմիտ է,
 Յուր ազգին ծուռ կդիտե,
 Բթամիտ շահասերը
 Ազգությունը ի՞նչ գիտե:

Որոնե հայաստանը,
 Հայրենիքիդ նշանը,
 Ինչպես հայ ծնար մորից,
 Հայ մտիր գերեզմանը:

Ով դու, հայ մարդ, զորացիր,
Լուսնի նման նորացիր,
Ոչ այլազգին անարկե,
Ոչ քու ազգդ ուրացիր:

Ինքնիշխան անձիդ տիրե,
Կյանքդ նրան նվիրե,
Քրիստոսից ավանդած
Հոյի կրոնն էլ սիրե:

Աստված տվեց նմանը,
Ամենին յուր արժանը,
Ազգուրացը վասակն է,
Ազգասերը՝ վարդանը:

Թե կհիշվի վասակը,
Բայց վատ է նսլատակը,
Պիտի խոսվի միշտ բարի՝
Վարդանա հիշատակը:

.
.

Ահա երկու ճանապարհ,
Որին կուզես հետևի:

Ք Ա Ջ Վ Ա Ր Դ Ա Ն

Ավարայրի դաշտը ներկեց արյունդ,
Կարմիր վարդան, հզոր վարդան, քաջ վարդան.
Ազգե-ազգ կհիշվի անմահ անունդ՝
Կարմիր վարդան, հզոր վարդան, քաջ վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Մեռար՝ թողիր անմահ անուն հիշատակ,
Քո զործքերով դարձար բարի օրինակ.
Դու սուրբ զործի համար եղար նահատակ,
Անմահ Վարդան, հզոր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Քեզ դրդուեց ջերմ հայրենյաց եռանդը,
Պաշտպանեցիր փրկչիդ տված սովանդը,
Դուրս վանեցիր Զրադաշտյան աղանդը,
Դու մեհ Վարդան, հզոր Վարդան, քաջ Վարդան.
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

ՕՏԱՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Ոտարության մեջը դուր անցավ ջանքս,
Կաշոտդ քաշելով մաշեցի կյանքս.
Կրկին դեպի քեզ է սիրտս, բաղձանքս.

Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,
Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան:

Շինդավայր, երբ քեզանից հեռացա,
Կարձես դրախտից դժոխքը ընկա,
Համդ ու արժեքդ ես նոր իմացա.

Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,
Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան:

Տկարներուն թե չճնշե հզորը,
Կարելի՞ է ուղիքն մոռանա հորը,
Մանավանդ քեզ նման հարազատ մորը.

Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,
Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան:

Օտարության հաղը ասացին մեծկակ,
Բայց գնացի, տեսա փոքր նկանակ,
Դառնահամ, անաճուն, սպառող քսակ:

Ախ իմ երկիր, անուշ երկիր հայրական,
Պապիս, մամիս, նախնիքներու օթեան:

Թ Ի Յ Լ Ի Ս Ը

Իմ կարողության չափ որքան որ գիտեմ,
Պիտի գովեմ ես աննման Թիֆլիսը,
Կյանքիս մեջ ես վատութիւն տեսած չեմ,
Ինչ հարգել է միշտ պատվական Թիֆլիսը:

Աստված օրհնե սորա հողն ու ջուրը,
Բաղմացնե դործը և առևտուրը,
Հեալը ոսկի բերե պատմական Կուրը,
Փարթամանա ազնվական Թիֆլիսը:

Բաղմալեզու, բաղմակրոն, բաղմամարդ,
Ժողովուրդը անհոգ, ուրախ ու զվարթ,
Կարմրաթուշ. թե ծեր, թե երիտասարդ,
Սիրուններու բնակարան Թիֆլիսը:

Մայիս ամսում կարծես դրախտ կդառնա,
Ամեն մարդ ժպտալով տանից դուրս կուզա,
Գնում են Մուշտայիդ և Օրթաճալա,
Կյանք կստանա հին բուրաստան Թիֆլիսը:

Ողջ Կովկասի քաղաքների թագուհին,
Ինչպես աստղերու մեջ փայլող՝ մի լուսին,
Ցոթը միլիոն ժողովրդի մայր տիկին,
Տարածում է վեհ հրաման Թիֆլիսը:

Այստեղի մարդկանց մեջ չկա իմ ու քու,
Իրար հարգող, հնազանդ, հլու,
Ամեն շաբաթ տոն է մեկ եկեղեցու,
Ունի բազում զբոսարան Թիֆլիսը:

Տվել է տերության մեծամեծ մարդիկ,
Քաջ-քաջ գեներալներ, գիտնական անձինք,
Հայրենիքի համար դործել են բարիք,
Լսել, հրճվել է պատվարժան Թիֆլիսը:

Ունի երկու մեծ բանտ, ունի ամրոցներ,
Մեծ հոյակապ տներ, լայն-նեղ փողոցներ,
Ունի արհեստանոց, կերպ-կերպ դպրոցներ,
Ափսոս շունի համալսարան Թիֆլիսը:

Հարուստը շատ հարուստ կապրի ապահով,
Աղքատը՝ ծայրահեղ աղքատ, տունը՝ սով,
Հանրային ջրերով, բաղանիքներով
Համարվում է բժշկարան Թիֆլիսը:

Թիֆլիսը Կովկասի համար ճրագ է,
Զարգացած մարդկանցով պսակ ու թագ է,
Կարելի է ասել հավաքաբաղ է,
Պահում է շատ հայադավան Թիֆլիսը:

Բարեմաղթենք լինի Լոնդոնի նման,
Զարգանա արհեստով, ծաղկի ամեն բան,
Ամեն մեկում հարյուրավոր բանվոր կան,
Պատրաստել է վեց գործարան Թիֆլիսը:

Մեծ մարդկանց մարմիններ իբրև գանձ անգին,
Պահում է շիրիմների շինած ամենին,
Մեկը Վարանցովին, մյուսը Պուշկինին,
Կանգնեցրել է ջուխտ արձան Թիֆլիսը:

Կա տասը լրագիր՝ լեզվով շորս տեսակ,
Բոլորն էլ մարդկության օգուտ, ընդունակ,
Ամենն էլ բանում են, գործերն աջողակ,
Ունի վեց, յոթ տպարան Թիֆլիսը:

Կան բնկերություններ բարձրից հաստատված,
Որենքով ճանաչված ու պնահատված,
Կարծես հանդամանքից հատուկ խրատված,
Դառնալու է բարոյական Թիֆլիսը:

Աղատվելով բարբարոսաց ձեռքիցը,
Հին դավերը նա հանել է մտքիցը,
Չար ու բարի շատ են անդել դիտիցը,
Կլինի հաղար տարեկան Թիֆլիսը:

Թե գնալու լինինք հարյուր տարի հտ,
Քաղաքումս եղել է առանձին ջոկ պետ,
Այժմ միացած է Ռուսիայի հետ.
Հնում է եղել վրաստան Թիֆլիսը:

Քաշոդ դորություն կա սրանում հատուկ,
Գալիս են օտարներ հայտնի, թե ծածուկ,
Որքան պանդուխտներու ջրումն ինչպես ձուկ
Որսացել է որպես ուռկան Թիֆլիսը:

Փողի կողմից հարուստ հայերն են աչտուղ,
Վրացիք էլ ունեն կալվածքներ շքեղ,
Հին ցեղի իշխաններ փարթամ, փառահեղ
Մոցումն ունի մայր սիրական Թիֆլիսը:

Երկաթուղիները գոռում են, գոչում,
Ամեն օր մարդ, ապրանք աչտուղ են լցնում,
Բաքվի ու Բաթումի մեջտեղն է ընկնում
Առուտուրի մեծ կայարան Թիֆլիսը:

էլ որքան թաթ, մուրթադ, որ կա իրանում,
Միշտ լցվում են Կովկաս և փող են տանում,
Ինչքան հիվանդ, կույր, կաղ, խեղ է պահպանում
Անկյալներու պատսպարան Թիֆլիսը:

Ջիվան, աստված երկար օրեր կամենա,
Տոկուն լինի հոսանքներուն դիմանա,
Շեն ու հաստատ լինի, ծաղկի, զարգանա,
Զընկճվի մինչև հավիտյան: Իֆլիսը:

Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր

(«Աշուղ Ղարիբ»)

ԳԼԽԻԴ ՄԱՏԱՂ ԼԻՆԵՄ

Գլխիդ մատաղ լինիմ, ծերունի հայրիկ,
Մայրս եկեղեցու գավթումը մնաց.
Ողորմություն արա, մի տեղ տուր փոքրիկ,
Մայրս եկեղեցու գավթումը մնաց:

Կորավ կարողությունս, կորավ ամեն բան...
Ես էլ մարդ էի, եղա աննշան...
Խնդրում եմ շնորհես ինձ մի օթևան,
Մայրս եկեղեցու գավթումը մնաց:

Հուսով եմ, որ ինձի դու մի տեղ կտաս,
Ընկածներու դրությունը կզգաս,
Մայրս մեռնի, դու մեղքի մեջ կմնաս,
Մայրս եկեղեցու գավթումը մնաց:

Մեկ կողմից ձյուն կուգա, մեկ կողմից անձրև,
Դարձել ենք խեղճ թռչուն, անբուն, առանց թև,
Քեզանից կսպասեմ այսօր մի պարգև,
Մայրս եկեղեցու գավթումը մնաց:

Երանի ձեզ, որ գնում եք հայրենիք,
Կաղամիլ եք ի՞նչ սիրուն երամ, կոունկներ,
Խիֆիսի վերայով անցեք, սիրելիք,
Իչեք այնտեղ գեթ մի անգամ, կոունկներ:

Ո՛հ, անմեղ թռչուններ, անցավ, անկրակ,
Երգում եք միասին ուրախ, ներդաշնակ,
Սպասեցեք մի քիչ՝ գրեմ մի նամակ,
Տարեք Շահ-Սանամին, ձեզ տամ, կոունկներ:

Ես անբախտ Ղարիբն եմ հուզված ու սխուր,
Կրում եմ սրտիս մեջ անհանգչելի հուր,
Ինձանից քրոջս, մորս տարեք լուր,
Անդ հյուր եղեք, գոնե մի ժամ, կոունկներ:

ԵԿԱ ԱՆՑՆԵԼՈՒ

Եկա անցնելու քեզանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր,
Հեռացել եմ տեղից-տանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Այս աշխարհն է հին Հայաստան,
Նախնյաց մերոց էր օրորան,
Ինձի երեք սպասող կան,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Ոռոգում ես դու երկիրը,
Գետերի միջում ընտիրը,
Լսե Ղարիբիս խնդիրը,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

ԵԿ, ՏՈՒՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԴ

Ղարիբը

Եկ, տուր օրհնությունդ, մայր իմ հարազատ,
Գնամ օտար երկիր՝ ման գամ մեկ միջոց.
Ես կենալ չի լինի, վճռել եմ հաստատ,
Գնամ օտար երկիր՝ ման գամ մեկ միջոց:

Մայրը

Սիրտս ցավով լցրիր, սիրելի որդի,
Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի,
Առանց քեզ կյանք չունիմ, խելքս կթռչի,
Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի:

Ղարիբը

Թեև չունինք մենք տեր, չունինք բարեկամ,
Բայց աստված կօգնե խեղճին հարածամ.
Կանչե քույրս տեսնեմ ես վերջին անգամ,
Գնամ օտար երկիր՝ ման գամ մեկ միջոց:

Մայրը

Աստվածանից գտնի մեզ դավ անողը,
Մորից և քրոջից քեզ բաժանողը,

Ո՞վ է քեզ օտար երկիր տանողը,
Հեռու տեղ գնալով մի լացնե՛ր մեզի:

Ղարիբը

Արի միակ քույր իմ, արի, ո՛հ, մի լար,
Լեր ծերունի մորդ ինքդ միւիթար.
Աղոթե միշտ պանդուխտ եղբորդ համար,
Գնամ օտար երկիր ման գամ մեկ միջոց:

ԹՈՂ ՍԱՆԱՄ ԵՐԵՍԻԴ ՄՏԻԿ ՏԱՄ

Թող, Սանամ, երեսիդ մեկ կուշտ մտիկ տամ,
Վարսերդ նոր մեկանց մի անել դիմակ,
Վառվռուն սոխակիս դու վարդ անթառամ,
Այրված եմ արդեն, մի տալ նոր կրակ:

Երկրորդ Անահիտն ես՝ ճիշտ, ոչ առասպել,
Ինքդ Ոսկիամայր, ունես ոսկեթել,
Աշխարհի հայելին երկինքն եմ տեսել,
Երկրում քեզի պես չկա արեգակ:

Սերդ սիրահարիդ հոգուն դարձավ ցեց.
Փափազով պատկերդ տեսնելու դիմեց,
Ով որ հաստատ աչքով քեզ մտիկ տվեց,
Անքուն պիտի մնա երկար ժամանակ:

Ղարիբն եմ, սլացավ միտքս դեպի վեր,
Լուսնթագն էլ շունի քեզ նման պատկեր.
Միայն դու ողջ եղիր, մտերիմ ընկեր,
Ես զոհվեմ, չի լինի Թիֆլիս ավերակ:

ՂԱՐԻՐԻ ՀՐԱՅԵՇՏԸ

Մոտեցավ բաժանման տխուր վայրկյանը,
Թողե՛ք ես լամ, արտասուքս ծով լինի,
Դժվար է քրոջս և մորս բանը,
Ես որ գնամ, նրանց պաշտպան ո՞վ լինի:

Ձեզ եմ հանձնում իմ տուն ու տեղ օթևան,
Խղճուկ գերդաստանիս դուք եղե՛ք պաշտպան,
Այցելեցե՛ք շուտ-շուտ, հույս տվե՛ք նորան,
Գոնե մորս սիրտը անխռով լինի:

Ուղեցի ձեր մոտը վերքերս բանալ,
Ղարիբն եմ, չեմ կարող անլաց հեռանալ;
Մտերիմ ընկերներ, ինձ մի՛ք մոռանալ,
Որ իմ սիրտս հանգիստ, ապահով լինի:

ՂԱՐԻՐԻ ՄՈՐ ԵՎ ՍԱՆԱՄԻ ՈՂԲԸ

Մայրը

Սանամ, ոտքերուդ տակ դնեմ գլուխս,
Ողբա, Սանամ, ողբա, ո՞ւր է Ղարիբս,
Վառվում-այրվում եմ, դուրս չի գա ծուխս,
Ողբա, Սանամ, ողբա, ո՞ւր է Ղարիբս:

Սանամը

Քո մատաղդ լինեմ, սիրելի մայրիկ,
Ինչպե՞ս ես չողբամ, սիրելիս չեկավ:
Ախարհիս մեջ կյանք չունեցա Լեջանիկ,
Ինչպե՞ս ես չողբամ, սիրելիս չեկավ:

Տես, անիրավ բախտը մեզ ինչեր արեց,
Անամոթ թշնամին դռներս քարեց,
Արյունս շորացավ, շունչս դադարեց,
Ողբա, Սանամ, ողբա, ու՛ր է Ղարիբս:

Սանամը

Ղարիբն ինձի ինչ օրերու հասցրավ,
Հին ցավերուս վերա՝ նորից ցավ դրավ,
Անիրավ թշնամին բերեց վատ համբավ,
Ինչպե՞ս ես շողբամ, սիրելիս չեկավ:

ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ, ԹԱՎՐԵՋ ՔԱՂԱՔ

Մնաս բարյավ, Թավրեզ քաղաք,
էլ չեմ ուզում դառնալ քեզի,
Ատրպատականի ճրագ,
Չեմ կարող մոռանալ քեզի:

Աստված պահե շեն ու ապատ,
Ցավե, վտանգներն ազատ.
Հայրենիք ես, չեմ ուզեր վատ,
Կուզեմ ծաղկած մնալ քեզի:

Հետս առած քույր ու մայրս,
Մոցդ ավանդ թողի հայրս,
Ուզեցի, ծննդավայրս,
Վերջին բարեւ տալ քեզի:

Ղարիբ, լսե այս խոսքերս, և միշտ առ,
Մի օր շուրախացա. ինչ դու գնացիր.
Թողի հանդերձներս ևս ծիրանեփառ,
Հագնելով ման շեկա, ինչ դու գնացիր:

Նղել էի տգեղ թռչուն անփետուր,
Ողբալով անցնում էր օրերս տխուր,
Աղամանդ օղերս պահում էի զուր,
Մի օր չպճնվա, ինչ դու գնացիր:

Արկղիս մեջ փտան զարդերս պես-պես,
Յոթը տարվա մեջը կյանքս եղավ կես,
Հաղար տեղ պատահավ խնջույք ու հանդես,
Ոչ մի տեղ չմտա, ինչ դու գնացիր:

Սանամ, փառքն է վաղանցուկ, խաբուսիկ,
Ո՛վ է տեսել օդը առանց փոթորիկ.
Յոթը ծնունդ անցավ և յոթը զատիկ,
Ես չդրի հինա, ինչ դու գնացիր:

ՍՏԵՂԾՈՂԻՑ ՍՐՏՈՎ ԽՆԴՐԵՑԻ

Ստեղծողից սրտով խնդրեցի մի բան,
Գոհ եմ, որ փափագիս հասցուց շուտ ինձի.
Իցե թե խնդիրս դուր եկավ նորան,
Բարիքներ ցույց տվեց բազմօգուտ ինձի:

Փոքր հասակիս մեջ շատ ցավեր տեսա,
Խնդություն չտեսած հոգսի մեջ ընկա,

Տվեցին իմ ձեռս գինով լի կթխա,
Մի ոսկի ըմպանակ՝ փայլուն-զուտ ինձի:

Իմ ազգականներս մոտ եղան եկան,
Սկսեցին անել լաց ու կոծ կական,
Ոմանք ասին—խելագար է այս տղան,
Ոմանք էլ կարծեցին խելամուտ ինձի:

Արշակն եմ, այս գիշեր մխիթարվեցա,
Հզոր ձեռք կյանք առա, զարդարվեցա,
Թիֆլիս՝ Շահ-Սանամին սիրահարվեցա,
Կարծես թե ծանոթ էր նա մանկուց ինձի:

ՔԵՋ ՈՐ ՏԵՍԱ

Քեզ որ տեսա խելքս եղավ ցիր ու ցան,
Հալվեցավ յուզն իմ սրտում, Արեգնազ,
Թե փափագիս շուտով հասա աննման,
Քեզ հետ կանենք շատ կեր ու խում, Արեգնազ:

Սիրո ձեռքից եղել եմ թափառական,
Ինձ թշվառիս տերը լինի օգնական.
Գիշեր ցերեկ կանչելով «Ախ, սիրական»,
Երեսս շմնաց խնդում, Արեգնազ:

Երբեք հանգիստ չունի սիրահար մարդը,
Ինչպես որ շարժվում է ծառի սաղարթը,
Ջէ երգում սոխակը, չէ բացվել վարդը,
Այսօր ձեր այգին է տրտում, Արեգնազ:

Ես Ղարիբն եմ, ցավեր ունիմ անհամար,
Ափսոս փրկվելու չգտա հնար,
Իմ սիրո բարեւ Շահ-Սանամին տար,
Ես այստեղ կսպասեմ այգում, Արեգնազ:

Օտար երկրից վերադարձա,
 Խոսիր, մի լռիր, իմ սաղս:
 Գողկելով քեզ ձեռս առա,
 Խոսիր, մի լռիր, իմ սաղս:

Լավ ես պահել քո թելերը,
 Ապրիս, դու հոգվույս ընկերը.
 Հարսանյաց մեջ իմ անցքերը,
 Պատմիր, մի լռիր, իմ սաղս:

Ղարիրն եմ, դու մի մտածել,
 Սկսե ձայնդ տարածել,
 Յոթը տարի է չեմ ածել,
 Խոսիր, մի լռիր, իմ սաղս:

ԵՐԵՍԸ ՄԻ ՏԵՍՆԻ ՆԱԽԱՆՁՈՏ ՄԱՐԴԻ

(«Բյառամ և Ասլի»)

Երեսը մի տեսնի նախանձ տմարդին,
 Գլուխդ առ նորա մոտեց հեռացիր,
 Բաբի, ընկերասեր երիտասարդին,
 Պատվե, սիրե և արժեքը իմացիր:

Նախանձոտը երբեք օր արև չունի,
 Մարդ է ծնվել, բայց մարդկության ձև չունի,
 Եբբ տեսնում ես մի ծառ, որ տերև չունի,
 Մի մոտենալ, դու շատ հեռվից անցկացիր:

Ներսիս էլ ներս՝ հողի տակը հատակ կա,
Զգուշացիր, մոխրի տակը կրակ կա,
Կյանքի մեջը հաղար ու մի առակ կա,
Մտիր նրա խավերի մեջ, հասկացիր:

Քյարամ, մարդը ծառ է՝ աշխարհն է սղոց,
Անպատճառ կտրում են, թե ունենա խոց,
Թե խելք ունիս, ցավդ մի սսեր ալոց,
Դու սիրով տար, համբերելով դիմացիր:

ԻՆՁՆԻՅ ՄԻՔ ՆԵՂԱՆԱ

Ինձից միք նեղանա, համեստ քույրիկներ,
Եզրից կերթամ, ճանապարհը ձեզ լինի.
Սրտիս մեջը ունիմ ցավի կծիկներ,
Թույնը ես կիմեմ, մեղրը ձեզ լինի:

Եկա այստեղ՝ չկարծեք թե կմնամ,
Ուզեցի ձեզնով իմ սիրտս բանամ,
Ես ծարավ եմ, մի ջուր խմեմ կզնամ,
Մի կաթիլ ջուր տվեք՝ լիճը ձեզ լինի:

Գինարբու չեմ, աղանդներ չէ հարկավոր,
Սիրականիս ձեռքից ման կուզամ մուրր,
Իս մի ծաղիկ ունիմ՝ կոկոնից էլ նոր,
Այս կողմերում բուսած վարդը ձեզ լինի:

Քյարամն եմ, համ խելոք, համ էլ անբարիշտ,
Կրում եմ սրտիս մեջ տեսակ-տեսա՜ վիշտ,
Ասլիից անջատված սգավոր եմ ճիշտ:
Սև կհագնեմ, թող կարմիրը ձեզ լինի:

Ով նազելի, մի լար, բավ է,
 Վառվում եմ, Ասլի, վառվում եմ,
 Ցավս ուրիշ տեսակ ցավ է,
 Վառվում եմ, Ասլի, վառվում եմ:

Այս ցավը ինձ մահ պատճառեց,
 Կերավ կյանքս և սպառեց,
 Քո կրակդ ինձի վառեց,
 Վառվում եմ, Ասլի, վառվում եմ:

Ինձ լսե, իմ հատընտիրս,
 Մի տեղ ամփոփե մոխիրս,
 Այսպես էր ճակատագիրս,
 Վառվում եմ, Ասլի, վառվում եմ:

Քյարամն եմ, թշվառ արարած,
 Այսպես էր կամեցել աստված,
 Փափագս սրտումս մնաց,
 Վառվում եմ, Ասլի, վառվում եմ:

Կարգախ գյուղի կիլիրթա թաղամասի գերեզմանոցում կա մի շիրմաքար, որի վրա անվարժ ձևերով փորագրված է. «Աստ հանգչի երգիչ Միայի-Ղաղար Կարապետյան, վախճանվել է 1903 թ. 19 մայիսի»։ Մնված թիվը հայտնի չէ։ Լեշուղի նախնիները գաղթել են էրզրումից՝ 1830 թվականին, ժամանակակիցների վկայությամբ պետք է, որ նա ծնված լինի 1835 թվականին։

Միային, որին անվանում էին նաև Ղարա-Ղաղար, 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների Ջավախքի ամենատաղանդավոր աշուղն էր։ Նրա մոտ աշուղական արվեստ են սովորել Զիվանին, Թիֆիլին, Մախևուսը և ուրիշներ։

Կարգախը Ախալքալաքի դավառի մեծ գյուղերից մեկն էր, ուր հաճախում էին հայ, վրացի, թուրք և այլ ազգի շատ աշուղներ, ելույթներ էին ունենում և շփվում տեղի աշուղների հետ։ Բացի աշուղներից, Կարգախ էին գալիս դավառի շատ գյուղերի բնակիչներ։ Նվ դա ուներ իր պատճառները. այստեղ բավական դարգացած էին առևտրական հարաբերությունները Արդահանի, Զրդըրի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի և այլ բաղաժնիների հետ։ Գյուղում կային կտորեղենի և մանրածախ ապրանքների խանութներ, որոնցում, բացի տեղացիներից, առևտուր էին անում նաև հարևան գյուղերի բնակիչները։ Մի խոսքով, Կարգախը համարվում էր Ջավախքի առուծախի կենտրոններից մեկը։ Գյուղի արհեստավորները ևս դեպի իրենց էին ձգում պատվիրատուներին։ Վերջապես Կարգախով է անցնում Արդահան, Զրդըր, Կարս և Արևելյան Թուրքիա տանող միակ ճանապարհը։ Իզուր չէ, որ Կարգախ այցելողները կատակով գյուղն անվանում էին «Քիչիկ Ստամբուլ» (Փոքր Ստամբուլ)։

Աշուղ Սիալին հիմնականում ստեղծագործել ու երգել է թուրքերեն լեզվով, հենց այդ պատճառով էլ աշուղական գրականությունից մեջ նրա մասին քիչ տեղեկություններ կան։ Գ. Լևոնյանի ջանքերով Սիալու միակ երգը՝ «Մաբինան» տեղ է գտել 1937 թվականին հրատարակած «Հայ աշուղներ» ժողովածուում։

Սիալու մասին գոյություն են ունեցել թյուր կարծիքներ, իբր նա սեփական ստեղծագործություններ չի ունեցել, այլ միայն կատարել է նշանավոր աշուղների հորինած երգերն ու հերիաթները։ Աշուղը ինքն է վկայում, որ ունեցել է շատ երգեր ու հերիաթներ։

Սիալին եմ հազար ու մի ցավ կրած,

Ունեմ շատ հեփաթներ, երգեր հորինած ...

Սիալու «Ոձ քաղարը» հերիաթը իր ժամանակին մեծ ընդունելության է արժանացել Զափախում։ Բրոնտեյսը բեկը գերված հայ աղջկան ստիպում է գավերը քիլի լցնել և համույք պատճառել իրեն։ Աղջիկը վշտացած երգում է.

Մանուշակն եմ, գինի կածեմ զավեր,

Ոտի ելան, խոսան սրտիս լաբեր,

Ես չեմ տանի օտաւների ցավեր,

Յարից եկած խոցն ու բորը շատ լավ են։

Բնութագրելով Սիալու կատարողական արվեստը, առաջին հերթին պետք է նշել, որ նա երգերի ու հերիաթների լավագույն կատարող էր։ Ելույթների ժամանակ աչքի էր ընկնում հանպատրաստից երգեր հորինելով։ Աշուղը եղել է խստաբարո, պահանջկոտ իր նըկատմամբ, իր աշակերտների ու ունկնդիրների նըկատմամբ։ Նրան լսում էին քար լռությամբ։ Իր վարպետին լավ է բնութագրել աշուղ Թիֆիլին՝ «Դու իմ անմահ վարպետ, անպարտ Սիալի»։

Այո՛, վարպետը անպարտ էր: Բազմաթիվ մրցույթ-ներէ ժամանակ նա շարունակ հաղթող է դուրս եկել:

Սիրայու երգերի մեջ մեծ տեղ են գրավել սիրային խաղերը: Պատմում են, որ մի անգամ վրացական Գոգաշեն գյուղով անցնելիս աղբյուրի մոտ նա տեսնում է հավաքված աղջիկներին ու հարսներին, որոնք կժերով ու սափորներով ջուր էին վերցնում: Գուսանը հմայված կանգ է ստնում, երբ նրանց մեջ տեսնում է գեղանի մի հարսի, սազը լարում ու գովերգում է.

Աղբյուրի մոտ տեսա մի գեղեցկուհի,
Ասի՛ Երանի, ու՞մ յարն ես դու, գյոգալ,
Էլ չափ չկա, որ գին դնի քո բոյին,
Չավաճիւր հանճի քարն ես դու, գյոգալ:

Այս երգը ժողովրդի հիշողության մեջ մնացել է առայսօր: Այն շատ գյուղերում տեղայնացվել է ու փոփոխության ենթարկվել. ասում են, որ երգը իրենց գյուղի այնինչ գեղեցիկ հարսին է նվիրված: Այդպես են մեկնաբանում Գանձայում, Կարդախում, Սուրբայում և այլ գյուղերում: Իրականում աշուղը այդ երգը հանպատրաստից հորինել է վրացական Գոգաշեն գյուղում:

Աշուղը շրջագայել է, եղել է գավառի մեծ գյուղերում, երբեմն էլ մեկնում էր Ալեքսանդրապոլ: Շրջագայելիս սիրում էր իր հետ տանել աշակերտներից մեկին: Նման գեպքերում նրա հետ ավելի հաճախ լինում էր Զիվանին, և մի անգամ Խերթվիսում մրցույթի ժամանակ սրամիտ աշակերտը իր վարպետին դուրս է բերում ծանր կացությունից:

Ինչպես բոլոր աշուղները, այնպես էլ Սիրային ունեցել է իր երգերի դավթարը: Հարազատների (Շեկո, Արտավազդ Կարապետյաններ, Գասպար Բանդոյան) վկայությամբ հուղարկավորության ժամանակ դավթարը և սազը աշուղի դիակի հետ միասին թաղել են: Ցավալի է, որ այդ սխալը ոչ ոք չի կանխել:

Կյանքի բովով անցած, տանջանքներ ու տառապանքներ տեսած Սիւսան բոլոր աշուղների և առաջադիմ մարդկանց նման հայ ժողովրդի փրկութիւնը կասում էր ոռոս ժողովրդի ազատագրական շարժման հետ: Նա աղդարարում էր.

Ռուսաստանում ազնիվ մի մարդկութիւն կա, Ե
Արդարության համար վաղ, թե ուշ կգա:

Ազատութիւնը եկավ՝ գուսանն այդ շտեմով, բայց
իբրեւկանացան նրա երազանքները:

Սիրտդ բարի, դեմքդ չքնաղ,
Աչքերդ կապույտ, Մարինա,
Երեսիդ վրա ամեն չաղ,
Կա քաղցր ժպիտ, Մարինա:

Քեզ տեսնելիս սիրտս է վառվում,
Ուշք ու միտքս դիտես տարվում,
Ամենքի հետ քաղցր ես վարվում,
Զեռ հոգարտ, կոպիտ, Մարինա:

Ջուր պնակիս մեր քուչով եկ,
Դեպ Սիւլին նայիր մեկ-մեկ,
Ծալ-ծալ թափած մազերդ շեկ
Քյանց խաղողի ճիթ, Մարինա:

ԱՂԲՅՈՒՐԻ ՄՈՏ

Աղբյուրի մոտ տեսա մեկ գեղեցկուհի,
Ասի՛ երանի, ու՞մ յարն ես դու, գյոզալ,
Էլ չափ չկա, որ դին դնի քո բոլին,
Զաւա՛հիր հանքի քարն ես դու, գյոզալ:

Ասացի անխիղճ ես, սոխի ինձ տանջանք,
Բոյդ սալի-չինար, շրթունքներիդ մարջան,
Մի նայլածքդ արժե Ղարաբաղ-Գյանջա,
Ողջ Վրաստանի թայն ես դու, գյոզալ:

Ասի՛ ես հիվանդ եմ, չիգյարս յարա,
Ասացիր ինձ մոտ կա դարդերիդ շարա,
Փա՛ռք, որ քեզ տեսա, սիրահար դառա,
Աշուղ Սիւլու յարն ես դու, գյոզալ:

ՇՈՂ Է ՏԱԼԻՍ

Շող է տալիս լուսաբացին,
Փեշք փռած ցողի թափին,
Ինքը նման վառ արևին,
Ասի՝ լալ-մարջան ու լացի:

Ոչ լուր ունեմ, ոչ էլ նամակ,
Ձեռք չի անցնի, դարդ է թամամ,
Ինքը յոսմա, կուրծքը շամամ,
Գյոզալների խան վրացի:

Էլ չեմ խփի սաղիս լարին,
Խոսքով գովքդ կանեմ բարի,
Վառեցիր աշուղ Սիայուն,
Խավադի ցեղ, ջա՛ն վրացի:

ՍԱՐԻ ԶԵՅՐԱՆ

Ուր ես թռչում, սարի ջեյրան,
Թևեր առած թռչուններից,
Մնացել եմ քեզի սեյրան,
Դու կյանք մաշուղ, սիրուն փերի:

Դեմքդ նման լուսաբացին,
Ձեռք չես անցնի, դարդով լացի,
Սիայու յար, ջավախեցի,
Դարձա սիրուդ հլու գերի:

Թորոս գյուղի պանդոկում տեղի ունեցած մրցույթի (մուհամմա) ժամանակ աշուղ Սիային պատասխանում է երիտասարդ աշուղ Սարգսին:

Անծանոթ եղբայրներ՝, անծանոթ քույրներ,
Նախ բարեհեմ՝ բարով տեսանք մենք իրար,
Աշուղներս ժողովրդին ծառա ենք,
Իսրեկամներ՝, սիրով հանդիպենք իրար:

Ճանապարհից հոգնած, բեղարած մարդիկ,
Գեղեցիկ խոսք ասենք, փայփայենք իրար,
Այս անցողիկ կարճ ժամերի ընթացքում
Սրտակիցներ դառնանք, ճանաչենք իրար:

Դեռ վաղ մանկույթ ես սազ ունեմ իմ ձեռքին,
Մտերիմներ դառնանք, հասկանանք իրար,
Կարգախցի Սիայուն գուցե լսել եք,
Հայ անուններով էլ իմանանք իրար:

Այի ախպեր՝, ծով դարդերս մի բանա,
Քարին ասեմ, իմ վշտին չի դիմանա,
Սարն էլ լաց կլինի, եթե իմանա,
Մի պահ հանգստանանք, թող երգն էլ մնա:

* * *

Վշտի վրա նոր ցավ, նոր վիշտ ես դնում,
Գիտեմ, հարապատ, հանդիստ չես քնում,
Հուսանք մեզ էլ նոր առավոտ է բացվում,

Ռուսաստանում ազնիվ մի մարդկություն կա;
Արդարության համար վաղ, թե ուշ կգա:

Բարեկամս, մարդ ամեն ցավ տարել է,
Վշտի ծովն է ընկել, բայց չի դադարել՝
Ափ է դուրս եկել, նպատակը կատարել,
Ինչ ծանր բեռ ասես տարել է մարդը,
Միայն թե չնետվի մահի թափարդը:

Համ էլ վիշտը՝ թեթևացնում է լացով:
Ցավակցողն է օգնում խոսքով կամ հացով,
Միշտ տոկուն կմնա հասած հարվածով,
Ահավոր ցավերին դիմացող մարդը,
Քանի դեռ չի ընկել մահու թակարդը:

Գիտեմ այդ բոլորը դու լավ հասկացար,
Ձեռք կրակների բոցերով անցար,
Այրվեցիր, խանձվեցիր, դիմացար,
Միայն խրատն էլ հիմա իմացար,
Պիտի ապրի քեզ պես տառապած մարդը:

* * *

Սիրող սիրտը միշտ չի հասնում փափագին,
Հաճախ թախիծ ու տխրություն է լինում,
Պատահում է խռովում են իրարից,
Ճամփին հազար վտանդ, շարիք է լինում:

Սերը երկու կողմից, եթե չի լինում,
Անժուր է, ակամա, թող ու հեռացիր,
Քան թե վերջում կշռես շարն ու բարին,
Լավ է հենց սկզբից քո լացը լացիր:

Գյուղացին իր հարսը գյուղից է բնտրում,
Աղջկա հորն ու մոր ցեղն է հարցնում,

Գործիմաց սիրունի ձեռքն է խնդրում,
Գործն էլ սիրունության նման իմացեք:

Նախնիներից եկած խրատը բարի,
Վատ չէ, եթե սիրող սիրտը կարարի,
Փորձված թանը մածունից լավ համարիր,
Ընկալան էլ քո այգուց կտրել իմացիր:

Շնորհալի Սարգիս, կատարյալ վարպետ,
Մեկ տեղ հասնենք Գյումրի, մեկտեղ դառնանք ետ,
Զայնդ դողանջում է ոնց Թափարվան գետ,
Հոր նման հոգատար՝ դու ինձ իմացիր:

ԱՇՈՒՂ ՍԻԱՅԻՆ ԽՐԱՏՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏ ՄԱԹԵՎՈՍԻՆ

Սաղը պատվական է, թե լավ տեր ունի,
Եթե տերն էլ նրա վրա սեր ունի,
Մրցողը համովի, որ մի խեր ունի,
Թե չէ ձեռքից շուտ կթռչի լավ սաղը:

Եթե երգիչը հույս է դնում իր սազին,
Տարիների փորձին, սպիտակ մաղերին,
Սիրունու շարժ ու ձևին կամ նրա նազին,
Կարող է կորցնել գովական սաղը:

Ուժեղ մարդ ես, գլուխ ունես, միտքդ բաց,
Բանավեճը ոչ պանիր է, ոչ էլ հաց,
Նախքան հանդես գալդ քո պակասը լաց,
Որ մրցելիս չկորցնես քո սաղը:

Լավ չափիր, իմացիր ղեմինդ ով է,
Թե հաղթես էլ, թող ուրիշը քեզ գովե,
Մարդու միտքը մի անհատակ մեծ ծով է,
Մովից շոր դուրս գալու ձևը իմացիր:

Դեռ փոքր ես, ունեւ դեռ խրատի կարիք,
Մտքով իմաստացիր, միշտ գործիր բարիք,
Ուրիշին վատ չասես, չգործես շարիք,
Նանր քարի նման տեղդ ամուր կաց:

Թեկուզ Աքիլեսի պես լինես ուժեղ,
Դու ցույց շտապ հսկա ուժդ ամեն տեղ,
Ուժեղին կարող է խոցել մի տգետ,
Մի թույլ, մի ծուլ, մի տխմար, իմացիր:

Զոհրարն էլ ասում էր մերն է աշխարհը,
Որ Ռոսսում Զալն է իմ ծնող հայրը,
Պետք է որ թագուհի դառնա իմ մայրը,
Բայց խորհուրդը ճամփին մնաց կիսկատար:

Սիրային եմ, հազար ու մի ցավ կրած,
Ունեմ շատ հեքիաթներ, երգեր հորինած,
Սիրելի վարպետիդ լսիր, միտքդ բաց,
Զհավանած քարն աչք է հանել, իմացիր:



Աշուղ Թիֆլիսն՝ Եղո Մանուկյանը, ծնվել է 1845 թվականին, Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում: Պատանի Եղոն մեծ սեր է տածում աշուղական արվեստի նկատմամբ. սովորում է նվագել սազի վրա, ակտիվ մասնակցություն է ցույց տալիս գյուղական օդաներում կազմակերպվող աշուղական հանդեսներին, լինում է մրցույթի (մուհամմա) մասնակից և այլն: Թի-

ֆլիսն Զիվանու հետ միասին սովորել է կարգախցի աշուղ Սիայու մոտ: Սովորական ձևով Սիային Եղոյին ևս տալիս է աշուղական անուն՝ Թիֆլի (պատանի) և բարի ճանապարհ մաղթում:

Առաջին շրջանում Թիֆլիսն երգել է Սայաթ-Նովայի, Շիրինի, Սիայու, այնուհետև Զիվանու երգերը: Սակայն երիտասարդ աշուղը դրանով չի բավարարվում, սեփական երգեր հորինելու փորձեր է կատարում և արժանանում երգասեր գյուղացիների ուշադրությանը: Նա աստիճանաբար կատարելագործվում է աշուղական արվեստի մեջ և Զավախքում լայն ճանաչում գտնում:

1918 թվականի գաղթի ժամանակ մեծ տառապանք-

ներ կրած աշուղը, ստիպված թողնում է հայրենի գյուղը և բնակություն հաստատում նախ Բակուրիանում և ապա Բաթումում, ուր էլ վախճանվում է 1923 թվականին, 78 տարեկան հասակում:

Աշուղի երգերի թեման բազմազան է. սոցիալական անարդարության քննադատումը կարմիր թելի նման անցնում է նրա երգերի միջով: Նրա սրտին ծանրացել էր ժողովրդի անտանելի վիճակը և դրա համար էլ շարունակ ըմբոստացել է տիրող կարգերի դեմ:

Սիրո թեման ևս առանակարգ տեղ է բռնում Թիֆլիս երգերում: Լինելով հարսանիքների երգիչ, նա հորինել է բազմաթիվ կենսուրախ երգեր: Հարսանյաց հանդեսի յուրաքանչյուր արարողությունը՝ նորահարսին հորանց տանից դուրս բերելը, փեսացուին շորեր հագցրնելը և այլն, զովերգել է համապատասխան հորինվածքով: Նրան են պատկանում «Թամադան», «Խնամի օջախդ շեն է», «Ծկել եմ բարի տեսության», «Ձեզ բարի լույս, բարեկամներ» և այս բնույթի բազմաթիվ երգեր:

Համաժողովրդական նշանակություն ունեցող իրադրությունները աշուղի ուշադրությունից չեն վրիպել: Բռնորոշ է առաջին իմպերիալիստական պատերազմի մասին զրած երգը: Պատերազմի դաշտում զոհվում են աշուղի և դրայրը և իր աղջկա ամուսինը: Մեղադրելով թագավորին, աշուղը գրում է.

Սագս ուրախության էլ մի լաւ շունի,
Նդրայրս զոհվել է, շիրմին քաւ շունի,
Աղջիկս ողբում է, որ էլ լաւ շունի,
- Թագավորն անգութ է, խղճմաւն չունի:

Երբ 1917 թվականի դեկտեմբերին ռուս-թուրքական ճակատից ռուսական զորքերը նահանջում են, հեռատես աշուղը կանխագուշակում է թուրքերի հարձակումը, ուս.

տի աղերսանքով դիմում է ռուսական զորքին.

Աման, ռուսներ՝, մի՛ք գնա,
Մի՛ք անտեր թողնի մեր հողը,
Սուրբան-էֆենդին մեզ կուտի,
Այդ խաբդախ, բալանչի գողը:

Եվ ահա սարսափելի գաղթը: Երիտթուրքերի հայա-
հալած քաղաքականության հետևանքով 1918 թվակա-
նին Ախալքալաքի գավառի հայերը գաղթեցին: Սա
պարզապես 1915 թվականի եղեռնու շարունակությունն
էր: Թուրքական կանոնավոր զորքերը ջարդում էին ան-
զեն ժողովրդին, թալանում գյուղերն ու քաղաքը: Ճանա-
պարհները պատած էին մարդկանց դիակներով, գաղ-
թականները թողած տուն ու տեղ, քայլում էին մահա-
սփյուռ, փոշոտ ճամպարհներով, գիշերը քնում էին բաց
երկնքի տակ: Եվ այս ամենին վկա Թիֆլիսն ողբալով
կոչ է անում.

Ջար Սուրբանը արնածառով,
Ողբ հայերին է կոտորում,
Դու էլ հայ ես, աչիդ լավ բաց,
Քնել պետք չէ. շուտով վեր կաց:

Ժողովրդական երգիչը մեծ համակրանքով է
վերաբերվել հայ առաջադեմ մտավորականներին,
հ. Աբովյանին, Ղ. Աղայանին և այլոց երգեր է ձոնել:
Անձամբ ծանոթացել է Հ. Թումանյանի հետ և զրույցն
ավարտելուց հետո հանպատրաստից մի երգ հորինել,
որից երևում է, որ բանաստեղծը աշուղին հուսադրել է.

Հույսով ասավ՝ մի լոեցնի քո սազը,
Մեզ ազատություն է քերել էս դարը,
Պիտի ցնծան հայոց դաշտն ու սարը,
Պիտի ծաղկեն չոր անապատն ու փարը:

Աշուղի երգերը հարազատորեն վերարտադրելու նը-
պատակով բանահավաք Վ. Մկրտչյանը ունկնդրել է
շատ կատարողների, ինչպես Սուլդաշում, այնպես էլ
Ջավախքի մյուս գյուղերում:

Թիֆլիսն շնորհալի աշուղ էր, նրա երգերը լավ են
հանգստացնում, բացի տողերի վերջնափոփոխությունից,
կա նաև ներքին ուժով ու համաձայնությամբ:

Հայոց վախի, հայոց երգի,
Հայոց վերքի համար ծնվա,
Հայոց բառի, հայոց տառի,
Հայոց բարի համար ծնվա:

Գրի առնված երգերի թիվը հարյուրից անցնում է,
բայց կան նաև կորստի մատնված շատ երգեր, որոնք
աշուղը հորինել է թուրքերեն: Լավ տիրապետելով թուր-
քերեն լեզվին, նա շատ հաճախ ելույթներ է ունեցել նաև
հարևան թուրքական գյուղերում:

Թիֆլիսն մեծ համբավ կարող էր ձեռք բերել, եթե
նրա երգերը իր ժամանակին հրատարակվեին: Աշուղի
գործունեության մասին ոչ ոք չի հետաքրքրվել, ինքն էլ դը-
րանից չի դժգոհել: Նրա երգերի փոքրիկ գրքույկը «Եր-
գեր» վերտառությամբ առաջին անգամ հրատարակվել
է 1982 թվականին, Թբիլիսիի «Մերանի» հրատարակչու-
թյան կողմից:

Մեր օրերի նշանավոր գուսան Հավասին մեծ հա-
մակրանքով էր խոսում Թիֆլիսի մասին: Երբ մոտ սովո-
րել է գուսանական արվեստը: Հավասու երգերը ուշա-
դիր ընթերցելիս զգացվում է Թիֆլիսի շունչը: Երախտա-
պարտ Հավասին իր վարպետին նվիրել է մարդասիրա-
կան խոր զգացմունքներով օժտված երգեր:

Աշուղ, ժողովրդի համար խաղ ասա՛,
 Միշտ գովերդիր, սրտանց երգ ու տաղ ասա՛,
 Հավին խնդա, ցավին ա՛խ ու վա՛խ առա՛,
 Հացի հետ լաց, հացին լի, ուրախ ասա՛:

Յանող-հնձողներին բարին կամեցի՛ր
 Գնա արտավորի հետ բարեկամացի՛ր,
 Ժողովրդի շարն ու բարին իմացի՛ր,
 Նրա համար սրտի խոսք ու խօսող ասա՛:

Ուր ժողովուրդ չկա, սաղը ո՞ւմ է պետք,
 Խնդությունը, խաղը, տաղը ո՞ւմ է պետք,
 Թիֆլիսի, շորացած բաղը ո՞ւմ է պետք,
 Անիմաստ երգչին միշտ ավաղ ասա՛:

Մ Ն Վ Ա

Հայոց վշտի, հայոց երգի,
 Հայոց վերքի համար ծնվա,
 Հայոց բառի, հայոց տառի,
 Հայոց քարի համար ծնվա:

Հայոց հողի, հայոց ջրի,
 Հայոց սարի համար ծնվա,
 Սեր ու կարոտ, խինդ երգելու,
 Ես իմ դարի համար ծնվա:

Սաղը ձեռքիս մեկ խնդում է,
 Մեկ հառաչում, տխուր երգում,
 Մեկ ելնում է արեգակը,
 Մեկ բուք ու հողմ, ձյուն է գալիս:

Իմ հայի պես հայ եմ ես էլ,
Վիշտ ու կարիք ցաւ եմ տեսել,
Թիֆիլուս էլ մի վշտացնի,
Հաղար կոիւլ, դաւ եմ տեսել:

Ե Ր Ա Ձ

Երազիս մեջ մորս տեսա,
Մանուկ էի դիրկն առաւ,
Սիրով նայեց, ասաւ, բայա,
Ինձ քեզանից ո՞վ տարաւ:

Ասի, մայրիկ, փոքրիկ եմ դեռ,
Ինձ օրորիր, երգ ասա,
Ասաւ՝ աւա՛ղ, ազիզ բաւա,
Այս երազ է, որ տեսար:

Վերջին անգամ սիրով դրկեց,
Զերմ դուրգուրեց ու լացեց,
Լուսաբացը խեղճ Թիֆիլուս
Հացող աչքերը բացեց:

Զ Ա Վ Ա Խ Ք

Զավախոր բարձր տեղ է,
Զուր ունի կյանքի դեղ է,
Կաթն անարատ, յուղն առատ,
Աշխատավորն է հարազատ:

Յոթը տասնյակ գյուղ ունի,
Այգիներ շատ սուղ ունի,

Բնակիչը կարկուտից,
Երաշտից երկյուղ ունի:

Կովեր, խաշներ անհամար,
Բոնել են ողջ սար ու դար,
Ջավախքում շատ-շատերն
Ապրել են ուղիղ մեկ դար:

Խեղճ Թիֆլիսն անբաժին,
Հույսը դրել է սագին,
Հողի ու կյանք է տալիս
Իր Ջավախքի մի մազին:

ԱՐԻ, ՍԻՐԵԿԱՆ, ՈՐՏԵՂ ԵՍ

Սիրեկան, սիրո ծարավ եմ,
Սիրունուդ ջուր տուր, որտե՞ղ ես,
Սիրտս հալ ու մաշ է եղել,
Սիրո կարոտ եմ, որտե՞ղ ես:

Օտարության մեջ ուշացար,
Ինձ պաշտամունքի աղբյուր դարձար,
Մենակ ընկած եմ սարևոտ,
Կաղաչեմ, արի, որտե՞ղ ես:

Քեզ համար կորած հավ դառա,
Քո սիրո կրակով վառա,
Ցար կանչելուց չդադարա,
Արի, սիրեկան, որտե՞ղ ես:

Առանց յար կյանքը ի՞նչ կանեմ,
Հոգուս գանձերը ո՞ւմ տանեմ,
Քեզ իմ սրտից ես ո՞նց հանեմ,
Արի Թիֆլիսուդ, որտե՞ղ ես:

Դեմքով սիրուն, տեսքով սիրուն, ո՛վ փերի,
Հասակդ նորբ, դու անթերի, ո՛վ փերի,
Շատ ջահել ես հալել-մաշել, ո՛վ փերի,
Նս էլ դառա սիրուդ գերի, ո՛վ փերի:

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, եկ, փերի՛,
Դու իմ սազն ես, հոգուս մասն ես,
Երգիս խասն ես, եկ, փերի՛:

Լավ հասկացա, շատ սիրուն ես, դու՞ չունես,
Սիրտ մաշելուց, իմացիր, օգուտ չունես,
Ինչ էլ անես, կասեմ, իմ կյանքը դու ես,
Նեղքի արի, եղիր բարի, ո՛վ փերի:

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, եկ, փերի՛,
Դու իմ սազն ես, հոգուս մասն ես,
Աչուդ դարձա, ձեռքիդ դերի, ո՛վ փերի:

Սեր ես դառել, սուր ես առել, ո՛վ փերի,
Սառն աղբյուրից ջուր ես առել, ո՛վ փերի,
Թիֆլիզն էլ կուզե խմել, ծարավ է,
Կյանքս քոնն է, ինձ մի այրի, ո՛վ փերի:

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, ո՛վ փերի,
Դու իմ սազն ես, հոգուս մասն ես,
Երգիս խասն ես, ե՛կ, փերի:

ԱՂԲՅՈՒՐԻՑ ԶՈՒՐ ՏԱՆՈՂ ԱՂՋԻԿ

Մեր անուշ աղբյուրից ջուր տանող աղջիկ,
Կանգնիր, ես իմ սաղով քո տեսքը գովեմ,

Թուիս այտերդ, սև աչերդ, ծամերդ,
էդ վարդադույն, ալվարդ երեսդ գովեմ:

Մեջքդ բարակ, ծոցդ նոներ են երկու,
երկար վիզդ, փոքրիկ բերանդ գովեմ,
լեզուդ մեղրածոր է, ծամերդ ջուխտակ,
լուսնի պես լուսեղեն պատկերդ գովեմ:

Մեր անուշ աղբյուրից ջուր տանող աղջիկ,
Քո այդ թեթև, աշիւույժ քայլածքը գովեմ,
Դու աշուղ Թիֆլիսն խելահան արիւր,
Իմը պակաս, թող միշտ քո խելքը գովեմ:

Կ Ն Ք Ա Մ Ա Յ Ր Ը

Ալ է հաղել, ալ այտերով,
Կարմիր վարդ է կնքամայրը,
Տեսեք ոնց է հարսին դուզել,
Ինքն էլ մի հարս՝ կնքամայրը:

Քայլում է ոնց թեթև կաքավ,
Խնդովթյուն է կնքամայրը,
Ծաղկի բուրմունք է տարածում,
Օժում է իր անցած վայրը:

Սանահորր ողջույն տալիս՝
Խոնարհվում է կնքամայրը,
Քեզ նման տասը ծներ՝
Քո աննման անուշ մայրը:

Ասեք, Թիֆլիսն ոնց գովի,
Գովական է կնքամայրը,
Հպարտացած ջան է կանչում
Ու քեֆ քաշում կնքամայրը:

Երանի երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր,
Նստեիր, մոտս մնայիր,
Երանի երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր:

Երանի թեքվեր կամաց,
Տեսնեի թուխ երեսդ բաց,
Սեղմեր գլուխդ սրտիս,
Ա՛խ, երանի, երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր:

Երանի, ա՛խ, շատ երանի,
Անուշ լեզուն քո բերանի,
Թիֆլիսն սիրո խոստում տար,
Գոնե որպես մի երազ գար
Ու ինձ սիրո անուշ ջուր տար:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Բաթումում տնից դուրկ մուրացկան էի,
Թումանյանի գալն իմացա, գնացի,
Վիշտս ավելացավ՝ ցավը լսելով,
Ժողովրդիս ողբն իմացա ու լացի:

Հույսով ասավ՝ մի լոեցնի քո սաղը,
Մեզ ազատություն է բերել էս դարը,
Պիտի ցնծան հայոց դաշտն ու սարը,
Պիտի ծաղկեն շոր անապատն ու քարը:

Նա ինձ սփոփում էր, բայց ինքն էր տկար,
Վախենամ շատ գործեր թողնի կիսկատար,

Արտասովորմ էր սիրած կինը անդադար,
էլի բախտ էր՝ տեսա վարպետին հանճար:

Հիշեցի ողբալի Անուշը, Մարոն,
Խղճալի Գիքորը, սիրահար Սարոն,
Արյուն է հեղում Կարինից-Տարոն,
Մեզ չգթաց բնավ Եվրոպան պարոն:

Հանճարն հիվանդ էր, վշտով հեռացա,
Նրա ցալն հիշելով, իմը մոռացա,
Այս դարդերի ծովում լալով կուրացա,
Թիֆլիս խաչ, հավատ թողի ուրացա:

Ս Ի Ա Յ Ո Ի Ն

(Հիշատակ)

Բազում երգերի, հեքիաթի վարպետ,
Ջավախքի արև, աշուղ Սիայի,
Ջես մեռնի, դու կապրես միշտ, առհավիտ,
Ժողովուրդը փառքդ հոգում կպահի:

Բանավեճ է եղել, հաղթել ես չատին,
Երբեք չես խնայել տմարդին, վատին,
Ջարին՝ «Օձ քաղաքի», դեմ արիւր պատին,
Վնաս չեկաւ սազիդ լարի մի հատին:

Թիֆլիսն եմ՝ ամեն վայրկյան քեզ ծառա,
Լեզու առած ես քեղանից դաս առա,
Քո ջանքերով երգ ու սազի տեր դառա,
Դու իմ անմահ վարպետ, անպարտ Սիայի՛:

Երգիչների երգիչ, ազնիվ Ջիվանի,
 Զավախքի պարծանքն էս, Զավախքի զարդը,
 Բնավ չի թառամի, անմեռ կմնա,
 Քո ցանած ծաղիկը, քո տնկած վարդը:

Երգերդ խրատող, բառերդ ոսկի,
 Հայի սրտից կուգան տաղերդ բոլոր,
 Լսողը խելքիդ, շնորհքիդ դասից
 Կթողնե էտ կգա իր ճամփից մոլոր:

Դու ազնվացնում ես ծոմոված հոգին,
 Ցույց ես տալիս արդար ճամփեն յուսավոր,
 Զարդում, հերքում ես հնոց աղաթները սին՝
 Քո խրատող խոսքով, երգով փառավոր:

Քո ծանոթ Թիֆլիսն քեզ էլ ո՞նց գովի,
 Զունի քո քանքարը, շունի քո լեզուն,
 Շիտակ հոգիդ թող ինձնից չխռովի,
 Եթե ասեմ՝ նոր Սայաթ էս, իմաստուն:

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

Նեղվում է աղգդ շարաշար,
 Արի՛, զորավար, որտե՞ղ ես,
 Պարսից գնդերը հալածող,
 Մեր քաջ բարերար, որտե՞ղ ես:

Մեր սունն ալերակ է դառել,
 Աղգդ շար Սուլթանին գերի,
 Դու վեհ հերոս Ավարայրի,
 Կապասենք, արի, որտե՞ղ ես:

Կաղարեց մեր երգն ու տաղը,
Ավերվեց շենացած թաղը,
Կուցե մեզ էլ մորթեն վաղը,
Փրկություն, արի՛, որտե՞ղ ես:

Վանքին, ժամին աղոթելով,
Մովի շափ արցունք թափելով,
Զուր հույսերով մեզ խաբելով,
Կապասենք արի, որտե՞ղ ես:

Սաղիս լարն Լմ հնչեցնում զուր,
Թիֆիլուն ո՞վ կտա կեռ թուր,
Քաջ զորավար, փրկություն տուր,
Կանչում ենք, արի՛ որտե՞ղ ես:

ԹԻՖԼԻՆ՝ ԻՐ ԱՇԱԿԵՐՏ ՀԱՎԱՍՈՒՆ

Դասերդ ավարտել՝ վարպետ ես դառել,
Քո վարպետին նվեր նոր սազ ես առել,
Ում հետ էլ մրցել ես՝ հաղթանակ տարել,
Քեզ բարի ճամփա, իմ լավ Հավասի:

Այսօր բաժանվում ես, երգիչ ես արդեն,
Բաշց եւր է սոխակը զատվել իր վարդեն,
Գիշերը չեմ քնել՝ իմ սրտի դարդեն,
Քեզ բարի ճամփա, իմ լավ Հավասի:

Գնա, լավ ծառայիր քո ժողովրդին,
Բարե ան, բարե տուր հային, թե թուրքին,
Բարձր պաշիր աշուղական բարբր հին,
Ճամփիդ՝ վարդ ու մեխակ, երգիչ Հավասի:

Սիրով բնդունում եմ քո նվեր սազը,
Հալալ իմ ջանքերը, իմ տված դասը,

Զպակասի էդ քո գլխի մի մազը,
Ծամփիդ՝ շուշան, սիմբիլ, գուսան Հավասի:

Շնորքով մարդ ես, կաճես, Հավասի՛,
Քեզ աշուղ համարիր հասարակ դասի,
Թե նեղվեմ, Թիֆլիսուդ օգնության հասի,
Ուժդ ժողովրդից միշտ առ ու գնա:

Կ Ա Ր Ո Տ Ե Լ Ե Մ

Սիրուններից սիրուն, հե՛յ, յա՛ր,
Զքնաղ տեսքիդ կարոտել եմ,
Արի, երգով հերիք կանչեմ,
Բոյ ու բուսիդ կարոտել եմ,
Ալ երեսիդ կարոտել եմ:

Շատ ման էկա քաղաք ու գյուղ,
Զտեսա քեզ նման շքեղ,
Դու ես աշուղիս ճար ու դեղ,
Ես քո տեսքին կարոտել եմ,
Թուխ ծամերիդ կարոտել եմ:

Հիսնի՛, Թիֆլիսուն կին դառար,
Թափառ երգչի երգից վառար,
Սիրեցիր, երբեք չսառար,
Ա՛խ, քո հացին կարոտել եմ,
Խինդ ու լացիդ կարոտել եմ:

(Մոռ երգը)

Իմ աննման սիրուն, քեզ հալալ կաթս,
Կեսրանց տանից միշտ լավ անունդ իմանամ,
Մեծերի պատիվը գլխից վեր պահիր,
Նրանք սիրեն, թող ևս կարոտով մնամ:

Համեստ, խաղաղ եղիր, դեմքով միշտ պայծառ,
Բոլորն ասեն հալալ կաթկեր ես, բալա,
Քո վարքով բարձրացրու մեր տան պատիվը,
Նրանք պաշտեն, թող ևս կարոտով մնամ:

Այս երգն էլ Թիֆլիսն գրեց ինձ համար,
Իմ աննման աղջիկ, իմ արև անմար,
Միշտ անթառամ մնա՝ ձմեռ, թե ամառ,
Նրանց բույր տուր, թող ևս կարոտով մնամ:

ԴՈՒՔ ՄՆԱՔ ՐԱՐՈՎ

(Ազրկա երգը)

Իմ անդին ծնողներ՝, քույրեր՝, եղբայրներ՝,
Բաժանվում եմ այսօր, դուք մնաք բարով,
Հարս եք ճամփում արդեն հսրազատին ձեր,
Հարազատն է զատվում, դուք մնա՛ք բարով:

Արդեն բոլորել է իմ օրն ու տարին,
Սիրով համբուրեցե՛ք ինձ ու իմ յարին,
Օրհնեցե՛ք, ցանկացե՛ք մեզ լավն ու բարին,
Աննման ծնողներ, դուք մնաք բարով:

Մայրիկ ջան, քո անուշ կաթով եմ սնվել,
Կաթդ հալալ արա, դու մնա՛ս բարով,
Հայրիկ ջան, քո փայլուն աստղով եմ ծնվել,
Աստղդ թող շողշողա, դու մնա՛ս բարով:

Հայրական տուն, հարազատ տուն, օթևան,
Հեռանում եմ քեզնից, դու մնա՛ս բարով,
Այցի կուգամ հարազատներ՝, ընկերներ՝,
Մեր լավ հարևաններ, դուք մնա՛ք բարով:

Թիֆլիսն հորինեց մեզ համար խաղը,
Ծաղկել են սարերը, ծաղկել է բաղը,
Անշուշտ, մեր նոր տան մեջ կլինեմ վաղը,
Ինձ բարի կամեցեք, դուք մնա՛ք բարով:

ՀԱՐՍԱՆԻՔԻՑ

Հարսի մայրը լաց է լինում
Փեսի մայրը՝ պար գալիս,
Հարսի հայրը վշտանում է,
Փեսի հայրը՝ ծափ տալիս:

Մեկն արցունքոտ, մյուսն ուրախ,
Մեկը ինդուն, մյուսը՝ ախ,
Չեմ հասկանում, թե ո՞վ շահեց,
Հանելուկ է այսօր, ավա՛ղ:

Թիֆլիսն միշտ վկա դրան՝
Նշագել ու տաղ է ասել,
Բաբին մաղթել ծաղիկներին,
Երկուսին էլ լավ է ասել:

Սազիս լարը սրտիս լարն է,
Սազից անգին բան չունեմ, յա՛ր,
Սազիցս շատ քեզ սիրեցի,
Դարձա թամամ մի սիրահար:

Սազիս ձայնը մտքիս ձայնն է,
Որ կանչում է միշտ՝ արի՛, յա՛ր,
Սազիս լեզուն իմ լեզուն է,
Քեզ հետ սազով եմ սիրահար:

Գաղտնիք չունեմ ես իմ սազից,
Կյանքում միակ ընկերս է, յա՛ր,
Նրա հետ միշտ թափառել եմ՝
Երկրից-երկիր ու սարե-սար:

Քո Թիֆլիսն առանց սազի,
Առանց յարի չի դիմանա,
Սազով երգեմ սրտիս սերը,
Թող արար աշխարհ իմանա:

ԳԵՂԵՑԻԿ Է ՇՈՂՆ ԱՐԵՎԻ

Գեղեցիկ է շողն արևի,
Շաղն արտերի գեղեցիկ է,
Բայց իմ յարի վառ ժպիտը՝
Շող ու շաղից գեղեցիկ է:

Բուրմունքով է կարմիր վարդը,
Ծաղիկների գեղեցիկն է,
Իսկ իմ յարը վարդից բուրոդ՝
Վարդից կարմիր գեղեցիկ է:

Շատ աղջիկներ եմ ես տեսել,
Շատ ժպիտներ քնքշանքով լի,
Սակայն յարիս նիստուկացը՝
Այն բոլորից գեղեցիկ է:

Գեղեցիկ է շողն արևի,
Շաղն արտերի գեղեցիկ է,
Բայց Թիֆլիս սիրած յարը
Ամեն բանից գեղեցիկ է:

ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղջի՛, կարմիր լալան բացել է թերթը,
Արի ելնենք էրթանք Սուլդայի բերդը,
Էն ծակ քարի տակով սրտանց անցկենանք,
Ազնիվ խոսք տանք իրար ու սիրով մնանք:

Ասա՛, ինչ՞ ենք անում տերտեր կամ վկա,
Նրբ որ մեզնից բարձր բնությունը կա,
Մենք թող սիրենք իրար ու սիրով մնանք,
Մեր սիրո գաղտնիքը հոգով իմանանք:

Հայրդ հակառակ է՝ կտանեմ քեզ սար,
Մեզ պաշտպան դուրս կգա աշխարհը արար,
Տառապանք էլ եթե կրենք միասին,
Վատ խոսք դու չես լսի մեր սիրո մասին:

Քո Թիֆլիին շունի կրթություն, ուսում,
Բայց սազի տեր մարդը դուզ խոսք է ասում,
Արի՛, արի՛, ինչ՞ ես մենակ ման գալիս,
Ուր գնանք, աշուղին հարգանք են տալիս:

ՅԱՐ ԱՆՈՒՇԻԿ ...

Յար անուշիկ, յար սիրունիկ,
Յար գովական, յար,
Սիրո ծաղիկ, վարդի շաղիկ,
Յար նազելի, յար:

Շուտով արի, սրտով արի,
Սիրով արի, յար,
Իմ նվիրած վարդով արի,
Զարդով արի, յար:

Քո վառ սիրուց ես դարձել եմ
Սիրո ծարավ, յար,
Զքնաղ տեսքդ խելքս տարավ,
Սիրտս վառավ, յար:

Յար անուշիկ, յար սիրունիկ,
Յար գովական, յար,
Քո Թիֆլիսն միշտ դեղ ու ճար,
Մի ուշանա, յար:

ՅԱՐՍ ՄՈՏԵՍ ԱՆՑԱՎ

Յարս մոտես անցավ, խոռվ էր, լուռ էր,
Դեմքը Թախծոտ, խիստ մտածկոտ, տխուր էր,
Իմ նրան նայելը, կանչելը զուր էր.

Մոլորված նայեցի, սիրտս շահեցի,
Յարիս խոռվ տեսքը սեր համարեցի:

Յարս վարդ էր փնջել, պարտեզը բաց էր,
Մոլոր էր, հուզված էր, դեմքը քրտնած էր,
Ասես աշխատել էր, հոգնած, հարթած էր.

Մոլորված նայեցի, սիրտս շահեցի,
Յարիս վարդ փնջելը խաղ համարեցի:

Վերջն իմացա, ամա՛ն, յարիս վիշտն էր խոր,
Առանց նրան էլ ինչ արե, էլ ինչ սեր,
Ծնողներն ընտրել էին փեսացու մի նոր,
Մոլորված նայեցի, վիշտս պահեցի,
Յարիս լքված սերը ցավ համարեցի:

Սիրահա՛ր, քո վարդն է հարուստի բաղում,
Ոսկեպաշտ ազնավն է նրա հետ խաղում,
Իզու՛ր, խեղճ Թիֆլիս՛, քեզ էլ չեն թաղում,
Մոլորված նայեցի, լացով նայեցի,
Յարից բաժանվելը մահ համարեցի:

ՊԱՐՏԵԶ ՄՏԱ

Ես իմ սիրունու պարտեզը մտա,
Կարոտած սրտով սիրունուն գտա,
Նա ինձ վարդ տվեց, ես նրան՝ շուշան,
Ասավ՝ մի մնա մենակ փերուշան:

Սիրտս ծարավ է, սիրածս՝ աղբյուր,
Ծարաված սիրտը միշտ փնտրում է ջուր,
Կյանքում էլ ինչ սեր, թե չկա համբույր,
Սերն անմարելի ատրուշան է, հուր:

Աշուղ Թիֆլիսն իր սազին գերի,
Զի գտնում վերջը սիրո երգերի,
Թե կյանքում խնդա ու բախտը բերի,
Սերն սպեղանի կլինի վերքերի:

ՀՐԱՇՔԻ ՊԵՍ ՀԱՅՏՆՎԵՅԱՎ

Հրաշքի պես հայտնվեցավ,
Տեղով հրաշք է իմ յարբ,
Համեստությամբ լուսին դարձավ,
Դեմքով հրեշտակ իմ յարբ:

Երբ աչքերն հառեց աչքերիս՝
Այրվեցի, հուր է յարս,
Երբ մի տաք համբույր շնորհեց,
Տեսա անուշ ջուր է յարս:

Երբ պարեց, սահելով անցավ,
Ասես գարնան բույր է յարս,
Քնքշություն, գեղեցկություն,
Միշտ հեղահամբույր է յարս:

Ոսկին, ալը իմ ինչին է,
Ամեն բանից թանկ է յարս,
Թիֆիլուն սեր, երջանկություն,
Նա է արար-աշխարհս:

ՃԱՄՓԻՆ ՏԵՍԱ

Ցայլի ճամփին մի սիրունիկ հարս տեսա,
Մեջքին շարան-շարան շորս հյուս վարս տեսա,
Գլխին վարդ էր դրել, փուշին խաս տեսա,
Տեսքով առաքինի, մտքով պարզ տեսա:

Ասի՛, ո՞ւմ սիրունն ես, յարաբ ո՞ւմ յարն ես,
Որ ջահելի սերն է քաշել քեզ սարն էս,
Զլինի թե քո սիրով դու նրան ալրես,
Մի հրեղեն փերի, մի թառլան տեսա:

Ես մոտեցա, նա խոր նայեց աչքերիս,
նոր շորերով զարդարվել էր իմ փերիս,
ինձ էր փնտրում, կարոտել էր երգերիս,
իմ անուշիկ յարին լուսեղեն տեսա:

ՅԱՐ, ՔԵՋՆԻՑ ՎԵՐՔ ԱՌԱ

Յա՛ր, քեզնից վերք առա, սերդ ինձ մաշեց,
Սրած կացին դարձավ. իմ ծառը տաշեց,
Այս սանջող, սուր ցավը տարիներ քաշեց.

էլ հերիք է, խղճա, արի՛, ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա:

Յա՛ր, շարությունով չէ, շեն բուժի վերքը,
Խելքի արի, լսիր իմ սրտի երգը,
Խոնարհիր գլուխդ, տուր ինձ քո ձեռքը.

էլ հերիք է, խղճա, արի՛, ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա:

Աշուղին ո՞վ կտա մամոնա, ոսկի,
Նա միայն երգիչ է, վարպետ է խոսքի,
Թիֆիլուց շի վատվում քո տեսքը իսկի.

էլ հերիք է, խղճա, արի՛, ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա:

ԽՆԱՄԻ, ՕՋԱԽԴ ՇԵՆ Է

Խնամի, օջախդ շեն է,
Սեղանիդ հաց, սիրտդ լեն է,
Աղջիկ ունես՝ լուսեղեն է,

Ասա՛, էլ ո՞նց գովերգեմ քեզ,
Մաղիկ ունես սիրուն ու հեզ,
Ի՞նչ բառերով գովերգեմ քեզ:

Խնամի՛, թասը բեր դինու,
Բաց արա, խասը բեր գինու,
Խմողաց անուշ քեֆ ասա,
էն մեծ կարասից բեր դինու,
Մեր ծաղիկների կենացը,
էն մեծ կարասից բեր գինու:

Հարս ու աղջիկների նաղը,
Թող զնգա աշուղի սուգը,
Զպակասի ձեր գլխի մազը,
Սիրով կատարվի մուրազը,
Դե լից բաժակները դինի՛,
Խմողներին անուշ լինի:

Խնամի՛, օջախդ շեն է,
Սեղանիդ հաց, սիրտդ լեն է,
Լեղջիկդ իրավ լուսեղեն է,
Թիֆիլին ո՞նց գովերգի քեզ,
Մաղիկ ունես խոնարհ ու հեզ,
Ի՞նչ բառերով գովերգեմ քեզ:

ՀԱԶԱՐ ՄԱՂԻՑ ՀԱՅ ԵՄ ԿԵՐՆԼ

Իմ սաղի հետ թափառել եմ,
Հազար մաղից հաց եմ կերել,
Մի օր ցորեն, մի օր գարի,
Մի օր էլ տապակած եմ կերել:

Հայի լավաշ, գլուրջու՝ պուրի,
Թուրքի՝ առապայ, օսի՝ քլարդին,
Ռուսի կաշա, մլուսի մոտ խաշ,
Բաբլեցու շորեկն եմ կերել:

Ուր գնացի մեր կովկասցին՝
Միշտ դուռը բացեց, սեղանին՝ հաց:
Իմ սրտով շեն, իր հողով լեն,
Ամեն տեղ հաց, կուշտ եմ կերել:

Լեզուներն են միայն տարբեր,
Քաշում, տանում են վեր ու վեր,
Ասում են՝ Թիֆլիս ախպեր,
Մենք բոլորս ենք աշուղասեր:

Ի Մ Ս Ա Ձ Ը

Քեֆի համար է ստեղծված իմ սազը,
Երբ ու տաղի, խաղի համար է ստեղծված իմ սազը,
Ողբ ու կոծի, լացի համար է ստեղծված իմ սազը,
Իմ սիրելի խալխի համար է ստեղծված իմ սազը:

Ես վարպետ եմ, ուղածիս ոլես ինքս եմ շինել իմ սազը,
Միշտ տարել եմ նրա ցավը, նրա քնքշանքն ու նազը,
Ուրախ հնչե, չպակասի ժողովրդիս մի մազը,
Երջանկություն, ուրախություն՝ այդ է խնդրում իմ սազը:

Երբ պարում են, թռչկոտում է իմ սազը,
Երբ լալիս են, հեծկոտում է իմ սազը,
Երբ խնդում են, հրճվում է իմ սազը,
Թող անկատար չմնա սրտիս մուրազը:

Յանկանսում եմ, որ ոչ ես լամ, ոչ սազս,
Պաղատում եմ, որ կատարվի ուղածս,
Խաղաղություն լինի արար-աշխարհին,
Խաղաղություն ու կյանք երգի իմ սազը:

Թիֆլիսն Լմ՝ մեծ Սիսյուն միշտ ծառա,
Նբա շնորհ, նրա ոգով դաս առա,
Սաղ սիրեցի, յարիս սիրուց ես վառա,
Սազս առած՝ հայոց աշուղ ես դառա:

ԻՆՔՄ ԻՆՁ

Ամեն մարդ մի սլաշտոն գտավ,
Դու սաղի ծառա մնացիր,
Ուղ առած՝ միշտ գլուղից-գլուղ,
Դռնից-դուռ անցար, գնացիր:

Մի օր կուշտ, մի օր քաղցած,
Մի օր պատի տակ մնացիր,
Մի օր խնդացիր, բերկրացիր,
Մի օր ողբացիր ու լացիր:

Մեկը քեզ մի հաց կամեցավ,
Իր տաքուկ հարկի տակ առավ,
Մեկը լոկ անուշ խոսք ասավ՝
Անուշ լիզվով սիրտդ շահեց:

Ամեն մարդ մի պաշտոն գտավ,
Դու սաղիդ ծառա մնացիր,
Թիֆլիս, կյանքիդ շատն անցավ,
Էլ հոգ չէ, քիչ էլ դիմացիր:

Անուշ կերութիւումը, ուրախ հանդեսը
Ծաղկեցնող, զարդարող զարդն ես, թամադա՝
Գինու գավը ձեռքիդ, գործիդ հաստատուն,
Դու ընդունակ, ընտիր մարդ ես, թամադա:

Կենացներ ես ասում խրատող խոսքով,
Ազնիվ միտքը, բնավ, չեն շափի ոսկով,
Թե երևան գնանք, Թիֆլիս, թե Մոսկով,
Խնջույքն անիմաստ է առանց թամադա:

Թեկուզ որքան մարդ էլ նստի սեղանին,
Աղբյուրի պես հոսի հին կարմիր գինին,
Հարբեն իրար կանցնեն տղամարդ ու կին,
Թե չլինես դու, բարիմաստ թամադա:

Դու աշուղի հոգու հալալ ընկերն ես,
Սեղանին բոլորածներից բոլորից վերն ես,
Քո կարգ ու կանոնով հանդեսի տերն ես,
Երգասեր, բանիմաց, ազնիվ թամադա:

Քեզ ընտրել են իւրօրիդ ու վարօրիդ համար,
Քեքեր ես անցկացրել անթիվ, անհամար,
Դու միշտ մեծ ախպեր ես Թիֆլիսու համար,
Թասդ անուշ արա, անուշ թամադա:

Պ Ա Ր Ե Ր Գ

Քողն երեսին, շողն երեսին,
Շաղն երեսին վարդն եկավ,
Օրոր, շորոր, հեզ ու նազով՝
Սրտիս սիրած յարն եկավ:

Հեզ ու նազով, իմ մուրազով՝
Սրտիս սիրած յարն եկավ:

Բաղով եկավ, խաղով եկավ,
Տաղով եկավ սիրունս,
Շախով եկավ, ժպտուն եկավ՝
Իմ արևը, գարունս:

Խնդուն եկավ, բաղով եկավ,
Իմ ալեք, գարունս:

Սարեն եկավ, կալեն եկավ,
Արտեն եկավ իմ սերը,
Պաղ ջրերի զովեն եկավ,
Հովեն եկավ իմ սերը:

Չովեն եկավ. հովեն եկավ,
Մովեն եկավ իմ յարը:

Շատ աշխույժ է, շատ թեթև է
Մեր Թիֆլիս այս պարը,
Թող նա սիրած սազը գովի,
Ես՝ անթառամ իմ յարը:

Սազը գովի, մասը գովի,
Ես՝ անթառամ իմ յարը:

ՀԱՆԴԵՍ Է ԲԱՅՎՈՒՄ

Գովական խնամի, աննման հյուրեր,
Անգին բարեկամներ, հանդեսն է բացվում,
Ոտքի ելեք, ուրախացեք, խնդացեք,
Ախորժակը անուշ գինով է բացվում:

Առաջին բաժակը՝ զույգի կենացը,
Յնծացեք, պարեցեք, «շաբաշ» կանչեցեք,
Միշտ անսպառ լինի խմիչքն ու հացը,
Իրար շատ հարգեցեք ու ջան կանչեցեք:

Ջան ասողը քեֆում երբեք չի հարբել,
Չի լացել դառն օղուց, չի խախտել կարգը,
Ձգուշացել, իրեն պահել է պարկեշտ,
Ինչպես պահանջում է մեր հայոց բարքը:

Շատ խմողը, իմացեք, միշտ շատ է խոսում,
Կորցնում է իրեն ու վատ է խոսում,
Անպատեհ բաներ են բերանից հոսում,
Թիֆիլին իր խալխին ճիշտ խոսք է ասում:

Մ Ա Թ Ի Ն

Հայ աշուղական գրականության մեջ Մաթինի անունը ևս չի հիշատակվում: Նա սպազորված ոչ մի երգչունի: Թե՛ կենսագրական տեղեկությունները և թե՛ երգերը մինչև օրս պահպանվել են մարդկանց հիշողության մեջ:

Մաթին՝ Հարություն Թումասի Թումասյան (նախկինում՝ Տեր-Գրիգորյան), պետք է, որ ծնված լինի 19-րդ դարի 20-ական թվականներին: Նրա ծննդավայրը եղել է էրզրումի Կարնո գավառի խաչքավան գյուղը: 1830 թվականին տասնյակ հազարավոր հայ գաղթականների թվում էր Հարությունն ևս ընտանիքը, որը, գալով Ջավախք, բնակություն է հաստատում խանդո գյուղում:

Մաթին անունը թուրքերեն մաթ բառից է սերված, որը նշանակում է զարմանք: Իր էությունը իսկապես, որ նա զարմացնում էր հանդիսականներին և լայն ճանաչում գտնում:

Հարությունի մանկության և պատանեկության տարիները եղել են ախուր և զրկանքներով լի: Մի կտոր հաց վաճառակելու հույսով նա մեկնել է օտարություն և Պոլսում հարուստների ընտանիքներում վարձվում է որպես տնային ծառա: Երդասեր երիտասարդը միևնույն ժամանակ լարված ուշադրությամբ հետևում է աշուղ-

ների ելույթներին: Մաթինի մոտ աստիճանաբար ձևավորվում է աշուղական ձիրքը, նա սկսում է ինքնուրույն երգեր հորինել ու հանդես գալ սրճարաններում:

Աշուղական գործունեության հետ միասին Մաթինը սովորում է նաև «Ղարազյոզ» (սև աչքեր՝ թուրքերեն) ցուցադրել: «Ղարազյոզը» կատարյալ ներկայացում էր: Թիթեղից կամ սովարթղթից պատրաստած մարդկանց, կենդանիների մարմնաձևերի, ինչպես նաև իրերի պատկերների ցուցադրումը էկրանի վրա լույսի ազդեցության ներքո՝ սովերի միջոցով: Ներկայացման զլխավոր հերոսը Ղարազյոզն էր, հենց նրա անունով էլ ներկայացումը կոչվել է «Ղարազյոզ»: «Ղարազյոզը» մեր օրերի տիկնիկային թատրոնի նախատիպն է, հիշեցնում է նաև մուլտիկինոնկարի ցուցադրում:

Մաթինը կատարյալ ճարտարախոս դերասան էր: Սազը ուսած «Ղարազյոզի» հերոսների մարմնաձևերը պարկի մեջ դրած, շրջում էր գավառներում: Նրան լավ էին ճանաչում Զավախքում, Արդահանում, Ալեքսանդրապոլում, Մալկայում, Ախալցխայում և այլ գավառներում:

Աշուղ Մաթինը ապրեց մինչև 19-րդ դարի վերջերը, հորինեց հարյուրավոր երգեր ու հեքիաթներ: Նրա երգերը իր ժամանակին գրի չեն առնվել և հիմա դժվար է դրանք վերականգնել: Միայն վերջին տաբիներին Ախալքալաքի գավառագիտական թանգարանի դիրեկտոր Աբսեն Կարապետյանը զբաղվեց ժողովրդի հիշողության մեջ պահպանված Մաթինի երգերի գրառման գործով և թուրքերենից թարգմանեց հայերեն:

Ես որ մեկիդ լինեմ ծառա,
Աչքերդ պայծառ, սիրուններ,
Հապտատներիդ նուրբ մետաքսից,
Հասակներիդ ծառ, սիրուններ:

Ճակատներիդ նորած լուսին,
Ափսոս, պահում եք քողի տակ,
Թարթիչներիդ մեկ-մեկ նիզակ,
Մազերդ անտառ, սիրուններ:

Լեզվով մաքդկանց գրավում եք,
Նազով նրանցից ցավում եք,
Քայլերիս դուք կաթավում եք,
Աշխույժ եք ու վառ, սիրուններ:

Միջլիս անեք սիրո բաղում,
Քաղցր ձայնով Լրգում, խաղում,
Աչքով, ունքով սիրտ եք դալում,
Ախ, երանի ձեզ, սիրուններ:

Սույաթ-նովան շարվի-շարան՝
Դարդեր ուներ յարի համար,
Քանի մեկ քաջեր մահացան՝
Լինում եք պայծառ, սիրուններ:

Ջիվանին ձեզ ձոնեց խոսքեր,
Աչքերդ ծով, հոնքերդ կեռ,
Բարակ մեջքերիդ էլ ոսկե՝
Կապել եք գոտի, սիրուններ:

Ծիծաղում եք, վարդ է բացվում,
Հազար տեսակ վարդ է բացվում,
Իմ սրտի մեջ դարդ է բացվում,
Հոգի հանող, յար սիրուններ:

Մաթինն էմ, ձեռքիս սաղ ունեմ,
Հարուստ էմ, շատ արմաղ ունեմ,
Զեր դուրբի մեջ էլ մաս ունեմ,
Համեստ ու համառ, սիրուններ:

ԻՆՉ ԱՆԵՄ

Հայրենիքից դուրս եմ եկել ես այսօր
Ամբողջ ճամփես անձրև թափվեց, ինչ անեմ,
Տամալայում երեք աղջիկ ես տեսա,
Սայթաքեցի, թեև ցավեց, ի՞նչ անեմ:

Մեկը անզուսպ, շափը չգիտեր բերանի,
Աթալից սև, շտեննեի, երանի,
Մի խոսք ասաց, խիստ ցավեցի նրանից,
Սրտիս վրա կրակ դրեց, ի՞նչ անեմ:

Մեկը ձեռքին մի մաղ ուներ սաղելի,
Ինքը հրեշտակ, մահիլ եղա մաղերին,
Նա ինձ խղճաց և ամսոսաց նազելին,
Քաղցր լեզվով ինձ փայփայեց, ի՞նչ անեմ:

Ես ձեզ տեսա խելառ-խելոք վարմունքով,
Ճամփես շաղվեց զարդարանքի ծաղկունքով,
Սիրտ եք դադում խումար ու ուն աչքունքով,
Դարդ ու ցավը մեջքս ծռեց, ի՞նչ անեմ:

Անունս Մաթին է, մի աշուղ եմ ես,
Լսեցեք թե ինչ ասելիք ունեմ ձեզ՝
Եղեք համեստ, ամոթխած ու հեռատես,
Զեր վարմունքը հոգիս հանեց, ի՞նչ անեմ:

ԵՍ ՀՈՒՅՍ ԶՈՒՆԵՄ

Սիրահար եմ սիրունների,
Դարդ ունեմ ու դարման շունեմ,
Իզուր հոգսի եմ տիրացել,
Կարծես ուրիշ էլ բան շունեմ:

Գեղեցիկն է տարել ինձի,
Երգիչ արել, վառել ինձի,
Սիրո ծառա արել ինձի,
Բայց կարծում են, որ յար շունեմ:

Ես Մաթինն եմ խալխի ծառա,
Մի լեյլի Մեջնուն ես դառա,
Կարծում եմ, թե յարիս առա,
Բայց իզուր է, էլ յար շունեմ:

ՍԻՐՏՍ ՀՈՎԱՆԱ

Ստեղծող, քեզանից մի խնդրանք ունեմ,
Այնպիսի մի յար տուր, սիրտս հովանա,
Բոյը երկար լինի, մեջքը բարալիկ,
Այնպիսի մի յար տուր, սիրտս հովանա:

Ամոթխած, համեստ, հասկացող, գիտակ,
Դարդիս դարման լինի, վարմունքով շիտակ,
Խնձորից էլ կարմիր, թղթից էլ ճերմակ,
Այնպիսի մի յար տուր, սիրտս հովանա:

Մաթինն եմ՝ կարոտով իմ յարի համար,
Փնտրել ու շեմ գտել ծով դարդիս մի ճար,
Ոչ շատ սպիտակ, ոչ՝ սև, ճաշակիս հարմար,
Քիչ դուրեկան լինի, հոգիս զորանա:

Քաղցրալեզու գեղեցկուհուն տեսնելիս՝
Դարդ ու ցավը մարդու սրտից վազ չի գա,
Ամեն անգամ վարդի կողքով անցնելիս,
Ինչպես լինի, սիրտդ տեղից ժաժ կգա:

Ինչպես որսամ սեգ սարերի մարալին,
Տեսնելուն պես սիրտս կլինի յարալի,
Զօր ու գիշեր կանչում եմ, թե յար արի,
Միայն նա է ինձ փրկողը, ճար չկա:

Երեսն արև, սև հոնքերը աչքերին,
Կուրծքը դրախտ, բոյը թելի մի փերի,
Նա իմ տերն է, ես էլ նրա լուկ գերին,
Նրա ձեռքից ազատվելու ճար չկա:

Սև, սև աչքեր, կամար հոնքեր աղեղված,
Հոգիս հանել, սիրտս թողել միշտ դադված,
Մաթինն եմ ես կրակներով խորովված,
Լավ է այրվեմ կայծակովն այն աղջկա:

Զ Մ Ն Ա Ց

Ինչ օրից ինչ օրի մնացինք, աստված,
Հին ժամանակներից ադաթ չմնաց,
Երբ բազեն ու ցինն են ոսկեփիչ դարձել,
Լալ-մարջանի վրա էլ փառք չմնաց:

Սառնամանիքն է տիրել, փսացին՝ հե՛յ վախ,
Ոչ ոք չի տեսել բերք տվող դավադ,
Սուտասան՝ քարոզիչ, լսողը սավադ,
Ներկա մարդու վրա հարգանք չմնաց:

Գինը շգիտեն, թանկ ու էժան են ծախում,
համ ուլունքը ջավահիրի հետ խառնում,
Կաշառքի համար են անգուսպ դողդողում,
Ճիշտ դատաստան, օրենք, էլ կարգ շմնաց:

Վատ օրերը եղան մեկմեկին հաջորդ,
Դարդ ու վիշտ է պատել անսովոր ու խորթ,
Ջահելները անգուսպ, բերանները ճոռթ,
Խղճուկ Մաթին, նամուս, էլ հարգ շմնաց:

Խ Ր Ա Տ Ա Կ Ա Ն

Այս երազկոտ աշխարհում լայնարձակ՝
Լավությունն է մնում, ով մարդիկ,
Ձէ՞ որ կյանքն է այս աշխարհից անցողիկ,
Լավությունը թող աշխարհին ու գնա:

էն շար մարդը ի՞նչ է տարել մի օգուտ՝
էս շեն աշխարհից իր սրտով անգութ,
Կհայտնվեն նոր մանուկներ, նոր սերունդ,
Լավությունը թող սերնդիդ ու գնա:

ԻՄ ԽՈՍՔԵՐԻՆ ԱԿԱՆՋ ԱՐԱ

Արի պարոն, դառիր պարոն,
Իմ խոսքերին ականջ արա,
Սիրտս մի խանութ է բացել՝
Մոտից անցիր, բազար արա:

Թանկ մի ծախե էժան մալը,
Մի խառնե հարյուր-հազարը,
Ճիշտ ուղիով գնալ գալը՝
Վայել է, անցիր ու գնա...

Մաթին, որբան ապրես, երգես,
Աստված հողիդ կառնի ձեռքեդ,
Առաջ ինքդ խրատի քեզ,
Հետո խալխին քարոզ արա:

Դ ՈՒ Ա Ն Ի Ր Ա Վ

Դու անիրավ հորի-փերի,
Քո աշուղին ի՞նչ արեցիր,
Մեջքս արիր կոր ու կեռաման,
Բոյս անգամ թալանեցիր:

Երդում արիր, խոսք տվեցիր,
Զեռք քաշեցիր, բեղարեցիր,
Մի հասարակ ծառ կարծեցիր
Եվ ճյուղերս կտրատեցիր:

Թե թիկունքս եղավ նաչար,
էլ ո՞ւմ ասեմ ջան ու հաջան,
էս ինչ արիր դու դավաճան,
Սիրտ-ջիզյարս դու դաղեցիր:

Մաթինն եմ, ում պատմեմ դարդս,
Կորավ խինդս, կորավ վարդս,
Թառամեց վառ սիրո վարդս,
Բաղ ու բախշաս կողոպտեցիր:

* * *

Հասկացողը շուտ չի մտնի ասպարեզ,
Նվագողի համար խառ դաստան է պետք,
Մեկ-երկու խաղով մի մտնի մեյդան,
Մեյդան եկողին խելք ու միտք է պետք:

Ընտիր հալվան անփորձ ձեռքով չի լինի,
Ամեն սուլթան հմուտ, խելքով չի լինի,
Բերդ կառուցող միայն խոսքով չի լինի,
Գործին հարմար, նուրբ կառուցող մարդ է պետք:

Մաթինն էմ, դարդս թող տալ չի կարող,
Սարի մարդը ծովում լող տալ չի կարող,
Ամեն խոսք մեջլիսին շող տալ չի կարող,
Աշուղի ասածը միշտ սազական չի լինի:

Ֆ Ի Ր Ա Ղ Ի

Իր ժամանակին Զավախքում ճանաչված աշուղ է հղել Ֆիրադին։ Նա հայ աշուղական գրականության մեջ մտել է երկու երգով՝ «Գիշեր-ցերեկ» և «Խարապա էր» («Հայ աշուղներ», 1937 թ., Երևան)։ Զնայած բաղմամբով երգերի հեղինակ էր, սակայն բացի աղերկուսից, մյուսները ոչ մի տեղ չեն տպագրվել, և ոչ ոք հոգ չի տարել այդ մասին։

Աշուղ դառնալու ցանկությունը երգչի մոտ առաջացել է դեռևս երիտասարդ հասակում, երբ իրենց գյուղում ելույթներ էին ունենում տարբեր վայրերից ժամանած գուսանները։

Ֆիրադին՝ Մարգար Պապոյանը, ծնվել է Ախալքսուլաքի գավառի Դադեշ գյուղում։ Մնված թիվը հայտնի չէ, մահացել է 1921 թվականին։ Նա հղել է ինքնուս աշուղ, ոչ մի վարպետի մոտ չի սովորել, շնայած դրան, նրա համբավը շուտով դուրս է եկել գյուղի սահմաններից։ Լինելով սրամիտ և ուշիմ, աշուղական մրցույթների ժամանակ աչքի է ընկել իր առաջադրած հարցերով և պատասխաններով։ Ժամանակ առ ժամանակ գուսան ընկերակցել է նշանավոր աշուղների հետ և մեկնել Ալեքսանդրապոլ՝ մրցույթներին մասնակցելու նպատակով։ Զավախքի աշուղներից Ֆիրադին մտերմական կա-

պիւր է ունեցել Սիւսյու, Զիվանու, Թիֆիլու և այլոց հետ։ Մի առանձին համակրանքով էր վերաբերվում Զիվանու նկատմամբ և շատ հարցերում խորհրդակցում նրա հետ։

Աշուղի մոտ բարձր էին սլառմելու և երգելու ունակութիւնները, հասարակութիւնը նրա ելույթները լսում էր մեծ հետաքրքրութեամբ։ Առանձնապէս լավ էին գընահատվում երգախառն հեքիաթները։

Ֆիրաղին իր երգերի համար ինքնուրույն երաժշտութիւն չի ունեցել, բացառութեամբ մի քանիսի։ Նա իր երգերն ու տաղերը կատարել է արեւելյան երաժշտութեան եղանակներով, երբեմն էլ օգտագործել է հայ ժողովրդական երգերի մեղեդիները։

Ֆիրաղին հանպատրաստից երգեր հորինելու մեջ կատարյալ վարպետ է եղել։

Մյուս գուսանների նման Ֆիրաղին ևս ամեն տեսակ գրկանքներ է կրել։ Նա չի կարողացել կարգավորել ընտանիքի նյութական դրութիւնը, իսկ 1918 թվականի գաղթի ժամանակ կանգնում է կործանման վտանգի առջև։ Դրա համար էլ համադյուղացիները նրան կոչում էին «Տժիր» մականունով, այսինքն ժիր չէր։

Աշուղը իր երգերի մի մասը հորինել է թուրքերեն լեզվով։ Մարդկանց հիշողութեան մեջ պահպանվել են աննշան քանակութեամբ երգեր, որի շառնելու պատճառով կորստի են մատնվել շատ երգեր։

Գուսանը արձագանքել է աշխատավորներին հուզող հարցերին, նա դժգոհում էր տիրող կարգերից և անարդարութիւններից։ Զառամյալ աշուղը կյանքին հրաժեշտ է տալիս հետևյալ տողերով.

Այս աշխարհում դարդիս մի հար չգտա,

Խոր վշտեւս ձով եմ դարձել, ես կեքամ,

Զօր ու գիշեր հանգիստ չունեմ, բուն չունեմ,

Իմ ցավերը սայլի բարձած՝ ես կեքամ։

Ֆիրադու երգերի մի մասը հորինված է կրոնական-աստվածաշնչային մոտիվներով, նա շատ երևույթներ պերագրում էր բախտին կամ ճակատագրին, երգիչը համախո էր դիմում աստծու ողորմությանը՝ «Ստեղծող, Ֆիրադին եմ, աղերսում եմ քեզ» և այլն:

Մի առանձին ջերմությամբ են հնչում դուսանի սիրային երգերը, որոնք բովանդակում են անկեղծ սիրո երկությունը: Ի դեպ, դրանք հիմնականում թարգմանվել են թուրքերենից և բավականին տուժել են:

Ֆիրադին իր երգերը նվիրաբերել է չարքաշ կյանք վարող աշխատավոր ժողովրդին և դարձել նրա վշտակիցը, դրա համար էլ մեր օրերում հասարակությունը վառ է պահում ժողովրդական երգչի հիշատակը:

Գիշեր-ցերեկ կրակովդ
Վառեցիր ինձ, խարակ էրիր,
Առաջդ լայով, ողբայով,
Լեզուս լարից բարակ էրիր:

Խռովար, խռոտ աշեցիր,
Հալեցիր, կյանքս մաշեցիր,
Ուրիշադ ինձանից քաշեցիր,
Էրված սրտիս կրակ էրիր:

Ես Ֆիրադն եմ, դարդս հազար,
Բարակ մեջքիդ նախշուն մեղար,
էդ խոսքերը, որ դու խոսար,
Ջիզրիս սուր ու դանակ էրիր:

ԽԱՐԱՊԱ ԷՐ ...

Խարասկա էր Տաշվան-թափեն,
Բլել էր ձներու շափեն,
Աղջիկները մանչ կխաբեն,
Շորորա, թառլան, շորորա:

Աղբրի առաջն էր առու,
Յարս քնկտով ինձեն հեռու,
Պաքմ տվեց տեղի հերու,—
Շորորա. թառլան, շորորա:

Անուշ էր աղբրի ջուրը,
Ելա կայնա բակի դուռը,
Խաբար տարավ պղտի քուրը,
Շորորա, թառլան, շորորա:

Այս աշխարհում դարդիս մի ճար չգտա,
 Խոր վշտերս ծով են դարձել, ես կերթամ,
 Զօր ու դիշեր հանգիստ չունեմ, քուն չունեմ,
 Իմ ցավերը սալին բարձած՝ ես կերթամ:

Արցունքս լիճ է դարձել, հոգիս խոցվել,
 Վշտերիս չափ չկա, հոգիս խոռվել է,
 Սիրտս գաղաղել է, ալեկոծվել է,
 Օս գարնան հեղեղի պես լցվել եմ կերթամ:

Ֆիրաղին եմ՝ կարոտ մեր հին կողմերին,
 Մեր սարերին, քաղաքներին, գյուղերին,
 Խաբար կանոնեմ թռչուններից, հողմներից,
 Հայրենի սահմանները անցել եմ, կերթամ:

Ա Վ Ա՝ Խ

Զկշտացա յարիս սիրուց, կարոտից,
 Օտար ճամփաներով գնում եմ, ավա՛խ,
 Շնորհակալ եմ մեծ ու փոքրից, բոլորից,
 Վիրավոր եմ, վերքս ծանր է, ավա՛խ:

Խելագար եմ դառել, լալիս եմ, լալիս,
 Այգիս ավերակ է, ծաղիկ չի տալիս,
 Անհամար դարդերս միտքս են գալիս,
 Աչքերիցս արցունք թափում եմ, ավա՛խ:

Ստեղծող, Ֆիրաղին եմ, աղերսում եմ քեզ,
 Յոթվերքից ուզում եմ բախտ ու մուրազ ես,
 Էլ ուրիշ ճար չունեմ, եկել եմ հանդես,
 Ճամփես սարերով հարթում եմ, ավա՛խ:

Բժիշկ չունեմ ինչպե՞ս պատմեմ դարդերս,
 Գազազել եմ, դադար չունեմ, ի՞նչ անեմ,
 Անխաղ աշխարհը ինձ արեց յարից,
 Ես իմ ցավին էլ ճար չունեմ, ի՞նչ անեմ:

Մբտումս բացվել է անշափ խոր մի վերք,
 Ես ում որ սիրեցի, խլեցին տարան,
 Աշխարհում ողբալի, խղճալի դառա,
 Մի մեծ ողբ ու վթար ունեմ, ինչ անեմ:

Ֆիրադին եմ, վրդովվել եմ, լալիս եմ,
 Վիրտ ու ցավով սիրտս լցրած գալիս եմ,
 Հոգս ու խնամք ես իմ յարին տալիս եմ,
 Բայց զգում եմ, էլ յար չունեմ, ի՞նչ անեմ:

ՈՎ ՄԱՏԱՂ ԼԻՆԻ

Սոխտակ աշտերիդ սե-սե կամարներ,
 Այդ սևուկ խալերիդ ո՞վ մատաղ լինի,
 Ամբողջ աշխարհում չկա նմանդ,
 Այդ դեմքիդ մազերիդ, ո՞վ մատաղ լինի:

Սուլթան-Սուլեյմանն էլ զրկվեց իր թախտից,
 Զուք քաշեց յարից, ժպտացող բախտից,
 Սոխակները այգում երգում են նորից,
 Այդ լեզվիդ, բառերիդ ո՞վ մատաղ լինի:

Ֆիրադին եմ, յարիս գովել եմ իմ սազով,
 Տարվել եմ ես ինձ գերող նրա վարքով,
 Քրտինքս սրբեց նա ալ թաշկինակով,
 Այդ նազուկ ձեռքերիդ ո՞վ մատաղ լինի:

Ս ՈՒՆ Ա Ն Ի

Սուխանի, որը պարսկերեն նշանակում է գիտուն, բանիմաց, Արել Չոլախյանի աշուղական անունն է։ Սուխանու մասին ոչ մի գրավոր տեղեկություն չի պահպանվել, միայն կան աղոտ, կցկտուր տվյալներ և թուրքերեն հորինած երգեր։ 1924 թվականին սարեց մարդկանցից այդ երգերը գրի է առել աշուղի Հակոբ Եղրոր թողը՝ Պողոս Արելյանը։ Դրանք այժմ պահվում են Ախալքալաքի գավառագիտական թանգարանում։

Սուխանին ծնվել է էրզրումի Պալլի-Մակիփ գյուղում 19-րդ դարի առաջին կեսերին, չքավոր գյուղացու ընտանիքում։ 1830 թվականի մասսայական գաղթի ժամանակ այս գյուղի բնակիչները գալիս են Ջավախք և բնակություն հաստատում Գումրուրդո գյուղում։

Սուխանին Պոլսում սովորել է նշանավոր աշուղների մոտ և երգեր է հորինել թուրքերեն ու պարսկերեն լեզուներով, հայերեն ոչ մի երգ չի գրել։ Աշուղը պասա-նի հասակում մայրենի լեզվով գրել-կարդալ է սովորել, ունեցել է իր երգերի դավթարը, որը, սակայն, չի պահպանվել։

Ավանդարար մինչև մեր օրերը հասած տեղեկությունների համաձայն Սուխանին իր գերազանց ընդունակությունների և աշուղական բարձր արվեստի շնոր-

հիվ եղել է պարսկական շահի պալատական երգիչներից մեկը:

Սուխանին հիմնականում ստեղծագործել է սիրային երգեր, սակայն սոցիալական անարդարությունները, ինչպես նաև ազգային հալածանքները նրան շատ են հուզել, և նա երգերի միջոցով բողոքի ձայն է բարձրացրել:

Աշուղը ամուրի կյանք է վարել, չի ամուսնացել: Մահացել է Գումբուրդո գյուղում անցած դարի վերջերին:

Սույն ժողովածուում զետեղված է Ա. Կարապետյանի՝ թուրքերենից թարգմանած մի քանի երգ:

Թագավորի ցեղ ես, ով սիրունի՛,
Թագունի լինելը քեզ լավ կսազի,
Չայնդ քաղցր, կաթ է հոսում շուրթիցդ,
Ասա, թե ես ինչպե՞ս դիմանամ քո նազին:

Առանց թագի թագունի ես անթերի,
Գրավել ես, կործանել ես շատերին,
Դեռ չբացված կոկոն վարդ ես, ով փերի՛,
Հեյրան եղա բարակ մեջքիդ, ծամերիդ:

Ջար ուհան, նարգիզ ու կարմիր լալա ես,
Մոցդ մի դրախտ է, դու լուսնի փայլ ես,
Սուխանու համար էլ սոսկալի ցավ ես,
Խնայիր գուսանիդ, ապրում եմ հազիվ:

ԲԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քեզ եմ խնդրում, ականջ արա, ո՞վ աշխարհ,
Ինձ տար միացրու հոծ բազմությանը,
Թեպետ մեղավոր եմ, լսիր աղերսանքս,
Խղճա ու գթա, տար բազմության մեջ:

Չորս աղբյուր է հոսում, մարդ քո ճամփին,
Շատերն են խմել, հագեցել կարգին,
Սիրուց վառլողներն էլ այնտեղ կհարբեն,
Սիրտս ինձ քաշում է՝ դեպ բազմության մեջ:

Փշում է մի փող, քնից արթնանանք,
Կլինի դատաստան, միացեք, մարդիկ,
Աշխարհում էլ չունեմ քեզանից խնդիրք,
Տար Սուխանուն հոծ բազմության մեջ:

Զրկվեցի ես փառքից, ծիծաղից անգամ,
Հույսը կորցրած մարդ իսկական ես եմ,
Գիտունները դիրս կարդալ չեն կարող,
Սև օրերին միշտ ենթակա եղա ես:

Իմ կյանքն է մաշվել, կախվել է մազից,
Դավաճանի սլից փրկվել եմ հաղիվ,
Ընկել ոտնատակ՝ տկար եմ քանզի,
Լոկ բամբասանքի առարկա եղա:

Սուխանին եմ, աշխարհ, դարձել եմ զուսան,
Ինձ խնայիր, գոնե տո՛ւր ճիշտ դատաստան,
Թռչուններին տվել ես բույն, օթեան,
Փահլուզի պես թափառական եղա ես:

Յ Ի Ր ՈՒ Յ Ա Ն Ե Ղ Ա Ն

Որքան պիտի քաշեմ ցավերն այս դառն,
Մով դարդերից հալս խիստ անհույս եղավ,
Հարվածեցին անձիս դաշույն ու դանակ,
Հոգիս տանջելու մի ասպարեզ եղավ:

Բորբոքվեց սիրտս, բազմացան ցավերս,
Մբսր, Բաղդատ հասան արդար դավերս,
Սև ծովն ալեկոծվեց, տարավ նավերս,
Խորտակվեց իմ ղեկը, շատ վատ բան եղավ:

Առնեմ գլուխս՝ կորչեմ ծայրեծայր,
Օրերս սև անցան, եղա անդադար,
Կանչում եմ, տեր աստված՝ ցավերիս մի ճար,
Սուխանուս մտքերը ցիր ու ցան եղան:

Մի անաստված յար սիրեցի,
 Ձեռք չի տալիս, ի՞նչ անեմ,
 Կեցած վայրը անառիկ տեղ,
 Ուռկան չունեմ, ես ի՞նչ անեմ:

Խումար աչքեր տեսա, լացի,
 Դեմքը նման լուսաբացի,
 Երկկլիկ իր խոսք տվածին
 Տեր չի դառնում, ես ի՞նչ անեմ:

Շնկշնկոցով փչեց քամին,
 Աչքս մնաց փարթամ ծամին,
 Լսաց՝ կգամ, իմ Սուխունի,
 Բայց նա չեկավ, ես ի՞նչ անեմ:

ՔԱՂՅՐԱԼԵՂՈՒ

Ինձ կապեցիր քո վարսերով,
 Ո՞րնց ազատվեմ, քաղցրալեզու՛,
 Սխալվեցի, քեզ սիրեցի,
 Ինչպե՞ս զատվեմ, քաղցրալեզու՛:

Խելքս արիր դու փերուշան,
 Բոյդ բալակ, տեսքդ շուշան,
 Գլխիս բռնել ես դու նշան,
 Դարդս էլ ու՞մ ասեմ, անուշիկ:

Մտիկ արեք անխիղճ յարիս,
 Բեմուրազիս, անջիգյարիս,
 Ուզում է Սուխանուն այրի,
 Թող քո սիրով այրվեմ, անուշիկ:

Ես վառվում եմ, ծուխս չկա,
Դարդս ծով է, կյանքս վկա,
Մահից վատ է իմ վիճակը,
Լաց եմ լինում, որքան սգամ:

Կուզեմ երգել՝ Լրի՛-Լրի՛,
Մեզին տեսնեմ ես իմ փերուն,
Ավերվել է բուրաստանս,
Չայնը չի գա սոխակներին:

էլ չափ չկա տանջանքներիս,
Արցունք թափեմ սազիս յարին,
Կուզեն ձեռքես խլեն, տանեն,
Իմ գովական նազլու յարին:

Ցարս անցավ վառ ծիծաղով,
Ես արցունքով՝ գլխիս տալով,
Նա վարդերով ուրախացող,
Ես ողբացող՝ տխուր տաղով:

Փա՛ռք քեզ, աշխարհ, տեսա յարիս,
Ասի՛ կատարվեցավ բարիս,
Բայց ինձանից խռով գնաց,
էլ ի՞նչ ասեմ խունջիկ յարիս:

Ցարս անցավ այն հին բաղով,
Թուխ մազերը թաց էր շաղով,
Անց ենք կենում այս աշխարհով,
Ես տանջանքով, նա՛ ծիծաղով:

Սուխանին եմ, դարդս լացի,
Բան չեմ տեսել վատից բացի,
Զուլալ սերս մերժեց յարս,
Հալածվեցի ու ողբացի:

ԱՆԿԻՐԹ ԱՇԱԿԵՐՏԸ

Խելքից սակավ, ծուլ աշակերտը,
Զի սովորի, բան չգիտե,
Քիթը բարձրացրած երկինք,
Հմուտ վարպետ, սան չգիտե:

Թե որ ճամփին մի բան նետես,
Գժվելու է հետզհետե,
Կարծում է, թե բուն վարպետ է,
Երգի շափ ու հանգ չգիտե:

Քար է նետում հսկա սարին,
Զի տարբերում չարն ու բարին,
Հույս է դրել ինքն իր խելքին,
Վերջ ու դատաստան չգիտե:

Ես վարպետն եմ, ասի հե՛յ վախ,
Զի տարբերում ընկույզ, դավաղ,
Կարմիր գույն է հագնում հաճախ,
Զքնաղ, բուրաստան չգիտե:



Գուսան Հավասին ծնվել է անցած դարի վերջերին, սկսել է ստեղծագործել քրսաներորդ դարի առաջին տասնամյակում և համընդհանուր ճանաչման է արժանացել երեսունական թվականներին: Նա մեր օրերի գուսանների ավագ սերնդի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է, որի երգելը աչքի են ընկնում թեմատիկայի բազմազանությունը և գեղարվեստական բարձր արժանիքներով:

Մոտավոր հաշվումներով Հավասին գրել է 2000 երգ և 1500 քառյակ, 130-ի չափ էլ հորինել է մեղեդիներ: Նրան են պատկանում նաև «Հյուսիսային արև», «Դավաճան Արփիկը», «Աշխենը և Սուրիկը» և այլ հեքիաթներ: Այս տվյալները անվանի գուսանի ստեղծագործական կարողությունների չափանիշն են: Հավասին արձագանքել է իր ստեղծագործական ժամանակաշրջանի բոլոր հարցերին. գրել է խրատական, կենցաղային, սատիրական երգեր: Նրա երգերի մեջ առանձնակի տեղ են գրավում սիրային ոտանավորները: Հետագա տարիներին, արդեն լայն ճանաչում գտած գուսանը, իր երգացանկը հարստացնում է սոցիալիստական շինարարության մոտիվներով գրած գործերով: Հավասու ստեղծագործական միտքը բորբոքում է Հայրենիքի սերը՝ Հա-

յաստանի, Երեւանի սերը, որն ավելի բարձր է գնահատում, քան սիրած յարի նկատմամբ ունեցած սերը. «Կուզեմ անդադար թողած սեր ու յար, երգել քեզ համար, Հայրենիք», («Հայրենիք»): Նույն շնչով են գրված «Հայաստանի սիրուն ստրեր», «Խրիտասարդ Հայաստան», «Շինարար կյանք», «Սովետական կես դարը» և այլ երգեր: Կոլտնտեսային գլուղի նվաճումները ոգևորում էին զուսանին, և այդ բնագավառի բազմաթիվ հարցեր նա արժածել է իր երգերում: Գուսանը շատ երգեր ունի նվիրված հզոր Կարմիր բանակին, Հայրենական պատերազմին, Վրաստանին, իր սիրելի Զավախքին և այլն:

* * *

Գուսան Հավասին՝ Արմենակ Պարսամի Մարկոսյանը, ծնվել է 1896 թվականին Վրացական ՍՍՀ Մակեդի շրջանի Այազմա գյուղում, հողադուրի գյուղացու ընտանիքում: Երեք տարեկան հասակում ծաղիկ հիվանդություներ Արմենակին գրկում է տեսողությունից: Որդուն բուժելու ծնողների գործադրած ջանքերը ասպարհյուն են տնցնում... Երեխան ընդմիշտ մնում է տեսողությունից զրկված:

Անգութ աշխարհ. ինձ դարդ տվիր անխառտ,
Կարծես ես եմ որդին չէի հաւազատ,
Այլոց համար բարի մայր ես գրառատ,
Անգութ աշխարհ. իմ չիզարը դաղեցիր,
Դաղեցիր ու վերհերս աղ շաղեցիր:

Արմենակի ծանր վիճակը շատ էր մտատանջում ծնողներին, նրանք էլք են որոնում, որպեսզի երեխան ապագայում մի զբաղմունք ունենա: Հայրը գյուղում հայտնի երգասաց էր և հեքիաթներ պատմող: Նա Արմեն-

նակի մոտ նկատում է ձայնային լավ տվյալներ ու երգելու ունակութիւններ և որոշում է որդուն ուղարկել աշուղի մոտ սովորելու Այստեղ Պարսամին օգնութեան է հասնում հարեան գյուղի բնակիչ աշուղ Դովրանը: Վերջինս Արմենակին սովորեցնում է սազ նվագել և որոշ գիտելիքներ է հաղորդում գուսանական արվեստից:

Արդեն տասներկու տարեկան հասակում Արմենակը, ընկերակցելով տեղի աշուղների հետ, շրջագայում է գավառի գյուղերում:

Հայրը անձամբ ճանաչում էր Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղի նշանավոր աշուղ Թիֆիլյուն և որդուն ուղարկում է նրա մոտ սովորելու: Արմենակը Սուլդայում մնում է մոտ երկու տարի, վարպետը նրան հրաշակում է աշուղ և տալիս է աշուղական անուն՝ Հավասի: Հավասի թուրքերեն հավաս բառից է, որը հայերեն թարգմանվում է մի քանի ձևով՝ ցանկութիւն, տրամադրութիւն, սեր, բայց ոչ եռանդ:

Հավասին իր անսահման գոհունակութիւնն է հայտնում սիրելի վարպետին և նրա կնոջը՝ Հիսնիին:

1929 թվականին, Հավասին արդեն ընտանիք կազմած և երկու երեխայի հայր, մշտական բնակութիւն է հաստատում Ախալքալաքում: Այստեղ երիտասարդ գուսանի համար մի նոր ասպարեզ է բացվում: Ժողովրդական և գուսանական երգերի սիրահար ջավախեցիները նորեկ գուսանի նկատմամբ մի առանձին հոգատարութիւն են ցուցաբերում: Հավասին բոլոր գյուղերից հրավեր է ստանում, չի մերժում և սիրով այցելում է: Բախտի բերումով գուսանը ընկերակցում է տեղի նշանավոր երաժիշտներ ջութակահար Աշո Գրիգորյանի և դուդուկահար Հարութ Դավթյանի (Սամսրցի Արութ) հետ: Ի պատիվ այս երկուսի, պետք է ասել, որ նրանք խոշոր դեր են խաղացել Հավասու երաժշտական ունակութիւնների զարգացման գործում:

Ջավախքում ամենուրեք հնչում էին անվանի գու-

սանի երգերը: Տեղական ռադիոհաղորդումների ծրագր-
րում շարունակ կալին Հավասու երգերը, որոնք ավելի
հաճախ կատարում էր ինքը՝ գուսանը: Հավասու երգերը
առաջին անգամ տպագրվել են Լիւալբալաքի շրջանա-
լին, իսկ այնուհետև՝ «Պրոլետար» («Սովետական Վը-
րաստան») հանրապետական թերթերում:

Լիւալբալաքը հանդիսացավ Հավասու երկրորդ
հայրենիքը, այստեղ էլ հիմնականում ձևավորվեց նրա
գուսանական արվեստը: Հավասու երգերը հազեցված
են լեռնաշխարհի բնության վեհությամբ, նազանքով
յայլա գնացող կանանց ու աղջիկների գեղեցկությամբ,
դաշտերում ու լեռներում ջանասիրաբար աշխատող
մարդկանց նվիրվածությամբ: Գուսանը այդ ամենին ջեր-
մությամբ է արձագանքում՝ «Ջավախեցի, ջանիդ մեռ-
նեմ»:

* * *

Ասում են ձուկը ծովում է մեծանում, այդ մտքին
համամիտ էր նաև գուսանը, և նա գրեց «Գնանք Երևան»
երգը ու 1944 թվականին մեկնեց, դարձավ մայրաքա-
ղաքի մշտական բնակիչ: Ստեղծագործական աշխա-
տանքի մի նոր շրջան է սկսվում գուսանի համար. հա-
մերգներով հանդես է գալիս հանրապետության շրո-
ջաններում, գյուղերում, մշակույթի տներում, ելույթներ
է ունենում ռադիոյով, հեռուստատեսությամբ, երգերը
տպագրվում են թերթերում և ամսագրերում: Մեկը
մյուսի հետևից հրատարակվում են գուսանի ստեղծա-
գործությունները՝ «Նոտայագրված երգեր» (1947 թ.),
«Բուրմունք» (1950 թ.), «Երգերի ժողովածու»
(1958 թ.), «Իմ քնարը» (1961 թ.), «Գուսան Հավասի»
(1983 թ.) և այլն:

Բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել Հա-
վասու ստեղծագործությունների մասին: Նրա գուսանա-
կան արվեստը և գործունեությունը բարձր են գնահատ-
վել, և նա արժանացել է ՀՍՍՀ ժողովրդական արտիստի

կոշմանը: Մի քանի անգամ մեծ հանդիսավորությամբ նշվել են գուսանի հոբելյանները, ավելի ճոխ ու բովանդակալից էր նրա 80-ամյակին նվիրված երեկոն և այն եղավ վերջինը ... 1978 թվականի փետրվարի 22-ին դադարեց բարախելուց մեր ժամանակի նշանավոր գուսան Հավասու սիրտը:

Երևան մեկնելուց հետո օրվա օրվա քննարկումները կարոտով էին սպասում ուստա Արմենակին (այսպես էին անվանում Զավախում նրան): Եվ նա գալիս էր սիրով ու ամեն անգամ մի նոր խումբ կազմած ելույթներ էր ունենում: Զավախում շատ հուշեր են կապված գուսանի անվան հետ, որոնք այսօր էլ նրա երկրպագուները պատմում են, իսկ երգերը զիտեն բոլորը և երգում են, երգում են մեծ բավականությամբ:



1939 թվականի կեսերին Վրաստանի կոմպոզիտորների միության կողմից գործուղված կոմպոզիտոր Ումբ-Շաթր Ախալալայաի շրջանում գրի առավ աշուղական և ժողովրդական երգեր:

ՆԿԱՐՈՒՄ.—Դուսան Հավասու երգերը գրի առնելու պահը, դուրսկող նվագակցում է Սամսաթի Արուսթ:

Ամբողջ մարդկության մտքից թե առավ,
 Երբ խաղաղության աղաւնին թռավ,
 Խաւարին ճնշող վառ արե դաւաւ,
 Շողաց լույսերով, խրախուսներով,
 Անգոր անճարին լցրեց հույսերով:

Այս կողն է հատուկ ազգերին համայն,
 Ողջ աշխարհով մեկ տղին սիրտ ու ձայն,
 Էս երկրի վրա ընդարձակ ու լայն
 Թող ծաղկի բարով: Հաշտության սիրով,
 Թող ապրեն մարդիկ խաղաղ, անխռով:

Կովում քանդվողը մեռնողի տունն է,
 Կյանքից էլ թանկը խաղաղությունն է,
 Իյս կոչը կայուն աշխարհի սյունն է,
 Երգի՛ր անսասան, Հավասի՛ գոսան,
 Թող հնչի սերը սուրբ խաղաղության:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ

Երիտասարդ տեսքիդ ու դեմքիդ մատաղ,
 Ո՛վ իմ սովետական, սիրուն Հայաստան,
 Էս շորս տասնյակ տարի ապրելով խաղաղ,
 Դառել ես աննման, սիրուն Հայաստան,
 Օրեցօր բարձրացող հասակիդ ղուրբան:

Գովական ես, որպէս իմը չեմ գովե,
 Դաշտերդ առատ բերքով լցվել է, ծով է:
 Քո կենսատու ջուրն էլ որքան համով է,
 Անուշ, անմահական, սիրուն Հայաստան,
 Օրեցօր բարձրացող հասակիդ ղուրբան:

Ջրմուղներ ու գետեր, մեր ժամանակի,
Նոր-նոր գործարաններ ամեն տեսակի,
Քո պատկերն օրեցօր կրացվի, կծաղկի,
Բույրով եղեմական, սիրուն Հայաստան,
Օրեցօր բարձրացող հասակիդ ղուրբան:

Հավասու կյանք ու հույս, Երևան քաղաք,
Բայց քեզ ինչպե՞ս գովեմ, հայ ազդի հողյակ,
Համայն տասդերի մեջ մի հատ ես, լուսնյակ,
Պանծալի Երևան, սիրուն Հայաստան,
Օրեցօր բարձրացող հասակիդ ղուրբան:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Մե՛յր իմ Հայաստան, սիրուն աննման, քո եղեմական
բույրն անուշ,
Դու տեսքով դարուն, ծաղկած դալարուն, սարիդ
վարարուն ջուրն անուշ,
Միշտ մնաս կայտառ, արևի սկես վառ, հստակ ու
պայծառ, Հայրենիք,
Կուզեմ անդադար թողած սեր ու յար, երգել քեզ
համար, Հայրենիք:

Ի՞նչ ունի որդին, մոր նման անգին, մատաղ քո
տեսքին, ես մատաղ:
Քեզ պիտի սիրեմ, կյանքս նվիրեմ ու սիրտս բերեմ
քեզ մատաղ,
Կապրեմ քո հույսով, քո բարի բույսով և անմար
լույսով, Հայրենիք,
Կուզեմ անդադար, թողած սեր ու յար, երգել քեզ
համար, Հայրենիք:

Հավասին հմ ես, պիտի գովեմ քեզ, նազելի հարս ես
միամոր,
Ես որ դուստն եմ, քեզ պարտական եմ, պիտի գովքդ
անհմ ամեն օր,
Փառքիդ համեմատ, երգում եմ ազատ, մայր իմ
հարազատ, Հայրենիք,
Կուզեմ անդադար, թողած սեր ու յար, երգել քեզ
համար, Հայրենիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՐՈՒՆ ՍԱՐԵՐ

Մաղկոտ լեռներ Հայաստանի,
Աշխարհում հայտնի, անվանի,
Երանի տամ ձեզ, երանի,
Որ ծաղկաբեր գարնան օրեր
Անցկացրել եք հազար դարեր,
Հայաստանի սիրուն սարեր:

Վարդ աղջիկներ կզան ձեզ մոտ,
Ձեր գառ ու վառ տեսքին կարոտ,
Սրտեր բացող շորս դին արոտ,
Ուրախ երգեր, խինդ ու պարեր,
Եվ այսպես շատ ու շատ դարեր,
Հայաստանի սիրուն սարեր:

Հավասին եմ, երգիչն իմ յարի,
Ցարս է ծնունդ ոսկե դարի,
Սովետական լույս աշխարհի,
Դուք որ տեսնեք, կառնեք լարեր,
Էլ չեք քնի հավերժ դարեր,
Ու կդառնաք աշուղ, սարեր:

Ցնծությամբ լցվեց ալսօր տունը մեր,
Այսպես մի օր էլ ամենքին լիներ,
Ստաղոս նամակ՝ մեծ ավետաբեր,
Խնդությամբ բացի, կարդալով լացի,
Երգելով մնացի՝ դալու է յարս:

էն արյան դաշտից, մարտերից երկար,
Եկան վատ լուրեր, բոթեր անհամար,
Թափել է արլուն հայրենյաց համար
Ասպետ ասլանս, վիրավոր ջանս,
Արծիվ թառանս, գալու է յարս:

Անցել էր արդեն տարին բոլորակ,
Որ չէի ստացել ո՛չ լուր, ո՛չ նամակ:
Խոցված էր սիրտս անսուր, անդանակ,
Երգեց Հավասին՝ ցնծաց իմ հոգին,
Մեռնեմ էն ճամփին, գալու է յարս:

ԳՆԱՆՔ ԵՐԵՎԱՆ

Անցկացավ հունվարը, ցուրտ փետրվարը,
Եկավ գարնան օրը, գնանք Երևան,
Բողբոջ հանեց ծառը, կանաչեց սարը,
Բացվեց ճանապարհ, գնանք Երևան:

Հայաստանի սերը, սիրուն պատկերը,
Քաշում են սրտերը, ջահելն ու ծերը,
Գարնան պարտեզները, զով գիշերները,
Բացվել են վարդերը, գնանք Երևան:

Տեսնում եմ Երազով, հասնում եմ վազով,
Զարթնում եմ վռազով, մնում մուրազով,
Արի երգ ու սազով, գարնան տարազով,
Անցնենք Ալագյազով, գնանք Երևան:

Հավասին եմ, բարի գուսանն իմ յարի,
Սովետական դարի, հայոց աշխարհի,
Սերս չի դադարի, միշտ կվարարի,
Ալի, յար ջան, արի, գնանք Երևան:

ԿՈՒՆՈՉԻ ԶՈՐԱՆ

Նոր լուսաբացին, արևից առաջ
Հոտոդ փովել է սարն ի վեր կանաչ,
Արոտիդ շորս դին բացվել է կակաչ,
Քեզ պես դուրեկան, կոլխոզի շոբան:

Արևնամուտին տուն արի, յար ջա՛ն,
Կոլխոզի շոբան, արևիդ դուրբան:

Ես էլ մայիսին չեմ մտել պարտեզ,
Զեմ քաղիլ ծաղիկ, վարդեր հրակեզ,
Իմ անուշ հովիվ, կսպասեմ ես քեզ,
Իմ ծաղիկ գարնան, կոլխոզի շոբան:

Արևնամուտին տուն արի, յար ջա՛ն,
Կոլխոզի շոբան, արևիդ դուրբան:

Իմ սերն է անքուն հոգուդ ընկերը,
Հսկում է հոտիդ ողջ գիշերները,
Հավասն էլ երկեց հերոսիդ սերը,
Քաջ ու պատվական, կոլխոզի շոբան:

Արևնամուտին տուն արի, յար ջա՛ն,
Կոլխոզի շոբան, արևիդ դուրբան:

Եկե՛լ ես Վրաստան, լինեմք գերին,
Մտե՛լ ես սլարտեզը աղունիկներին,
Զարմացրի՛ր վրաց հրեշտակներին,

Արի մոտս, ձեռքդ տուր, հայաստանցի,
Այրվում եմ, հասցրու ջուր, հայաստանցի,
Քեզ նման սիրունին սիրահարվել եմ,
Տարար ուշք ու միտքս, խելագարվել եմ,
Սիրում եմ քեզ, հայաստանցի,
Վառվում եմ ես, հայաստանցի,
Սիրում եմ քեզ, մարալ, մարալ, մարալ, մարալ,
Վառվում եմ ես, ջեյրան, ջեյրան, ջեյրան:

Հայ աղջիկ, քեզ համար ի՞նչ երգեր հանեմ,
Վարդ ծաղիկ ասեմ. թե՛ թռչուն անվանեմ,
Ի՛նչ երգեր սիրում ես, քո ցավը տանեմ,

Արի մոտս, ձեռքդ տուր, հայաստանցի,
Այրվում եմ, հասցրու ջուր, հայաստանցի,
Քեզ նման սիրունին սիրահարվել եմ,
Տարար ուշք ու միտքս, խելագարվել եմ,
Սիրում եմ քեզ, հայաստանցի,
Վառվում եմ ես, հայաստանցի,
Սիրում եմ քեզ, մարալ, մարալ, մարալ, մարալ,
Վառվում եմ ես, ջեյրան, ջեյրան, ջեյրան:

Հավասին մատաղ քո դեմք ու տեսքին,
Նման ես մեր երկրի արտերի հասկին,
Քեզ սիրողն ի՞նչ կանի աշխարհի ոսկին,

Արի մոտս, ձեռքդ տուր, հայաստանցի,
Այրվում եմ, հասցրու ջուր, հայաստանցի,

Քեզ նման սիրունին սիրահարվել էմ,
Տարար ուշք ու միտքս, խելապարվել էմ,
Սիրում էմ քեզ, հայաստանցի,
Վառվում էմ ես, հայաստանցի,
Սիրում էմ քեզ, մարալ, մարալ, մարալ, մարալ,
Վառվում էմ ես, ջեյրան, ջեյրան, ջեյրան:

Ի՞նչ ԱՍԵՄ ՅԱՐԻՍ

Պարտեզում, իրիկնապահին
Ընկերներէով ման կուգային,
Բացվել էր դեմքը երկնային
Արե ասեմ, թե,
Լուսին ասեմ, թե,
Ի՞նչ, ի՞նչ ասեմ, գեղեցիկ յարիս:

Նրգում է սրտի սերիցը,
Սազն էլ շի գցում ձեռիցը,
Թափում է շրթունքներիցը,
Նաբաթ ասեմ, թե,
Շրթար ասեմ, թե,
Ի՞նչ, ի՞նչ ասեմ, անուշիկ յարիս:

Հավասու դարդերը ծով է,
Դարձյալ նստել յար կգովե,
Հետս էլ չի խոսի, խոռվ է.
Համր ասեմ, թե,
Բլբուլ ասեմ, թե,
Ի՞նչ, ի՞նչ ասեմ սիրունիկ յարիս:

Իմ կյանք ու սեր, սիրուն աղջիկ,
Սիրուն աղջիկ, ալվան ծաղիկ,
Ալվան ծաղիկ, սարի Լոնիկ,

Արի սեյրան, չոլի ջեյրան,
Չոլի ջեյրան, Լս քեզ դուրբան:

Չայնդ քաղցր, լեզուդ անուշ,
Լեզուդ անուշ, բաղամ ու նուշ,
Բաղամ ու նուշ, դու մեղրաթուշ,

Արի սեյրան, չոլի ջեյրան,
Չոլի ջեյրան, Լս քեզ դուրբան:

Հավասն Լմ, քեզ խնդիր կանեմ,
Խնդիր կանեմ, կյանք տուր ապրեմ,
Կյանք տուր ապրեմ, զուր չմեռնեմ,

Արի սեյրան, չոլի ջեյրան,
Չոլի ջեյրան, Լս քեզ դուրբան:

ՅԱՅԼԱՎՈՐ ՅԱՐՍ

Սարի ճամփով ալ ու ալվան,
Յայլավորը շարվե-շարան,
Շտապում են պար բռնելու
Մաղկած լանջին բարձր լեռան:
Պար Եկող, քո պարին մեռնեմ,
Քո սիրած զով սարին մեռնեմ,
Կաթնաղբյուրի ճերմակ ջրով
Հովացած ջիգյարին մեռնեմ:

Հագել են ալ գարնան տարազ,
Բարձրանում են վեր նազենազ,
Իրիկնադեմ երգ ասելով,
Տուն կրառնան խիստ վազելազ:
Շտապով ընթացող յարս,
Երեսին քրտնի ցող յարս,
Գիշերվա լուսինն շիմանա
Արևով գնացող յարս:

Յայլավորը թեթև կգա,
Իմ յարը հեհնե կգա,
Հայաստանի սեզ սարերին
Կաթը ձեռքին ներքև կգա:
Տուն արի, թառլանիդ ղուրբան,
Հավասին ջեյրանիդ ղուրբան,
Յարի համար սեր է քաշել,
Սարի կթվոր, ջանիդ ղուրբան:

ԶԵՓՅՈՒՌ ԲԱՐԵՎ ՏԱՐ

Անուշ հովիկ, եկար գարնան,
Ծաղկեցւիր այգի, բուրաստան,
Գնա դեպի իմ մայր Հայաստան,
Զեփյուռ, բարև տար իմ յարին,
Գարնան արև տար իմ յարին:

Ման է գալիս բուրաստանում,
Վարդի բույրով հանգստանում՝
Սովետական Հայաստանում,
Զեփյուռ, բարև տար իմ յարին,
Կարմիր արև տար իմ յարին:

Անուշ հովիկ, դարդս լացող,
Շնկշնկալով սիրտս բացող,
Հավաստուն իսպառ մոռացող,
Զեփյուռ, բարև տար հմ յարին,
Կյանք ու արև տար իմ յարին:

ԵՂՆԻԿԻ ՊԵՍ ԾՈՒՌ ՄԻ ԱՇԵ

Ալ երեսդ ալա է,
Բացված կարմիր լալա է,
Նայվածքդ, սիրուն աղջիկ,
Գլխիս դարդ ու բալա է:

Եղնիկի պես ծուռ մի աշե, սիրո՛ւն ջան,
Զահել սիրտս դու մի մաշե, սիրո՛ւն ջան:

Այրող սերդ սառել է,
Սիրտդ ինձնից դառել է,
էդ քո նայել, ժպտալդ
Խելքս գլխիցս առել է:

Եղնիկի պես ծուռ մի աշե, սիրո՛ւն ջան,
Զահել սիրտս դու մի մաշե, սիրո՛ւն ջան:

Հագածդ նուրբ տարազ է,
Հասակիդ լավ կսազե,
Քեզ հետ ասել, խոսելը
Ծ՛վ ցավ է, և՛ մուրազ է:

Եղնիկի պես ծուռ մի աշե, սիրո՛ւն ջան,
Զահել սիրտս դու մի մաշե, սիրո՛ւն ջան:

ԱՆՆՄԱՆ ՏԱՐԱԶՈՎ

Աննման տարազավ, թել-թել մազերով,
Իմ յարն եկավ անցավ հազար նազերով:

Հուռ գնաց՝ մնացի բարեին կարոտ,
Ինչպես սիրտս է երկնուց արեին կարոտ:

Ես մի երգ ասացի ման գալու հարմար,
Ես տխուր՝ ինքն ուրախ խնդալուն հարմար,
Հետի ընկերները քաշեցին տարան,
Մաշված սիրտս էլ նորից մաշեցին տարան:

Անգութն էլ շսեց Հավասուս երգին,
Այտերին նման էր փնջերը ձեռքին,
Յարս բաղեն գնաց, կուրծքը վարդերով,
Աչքս լալեն մնաց, սիրտս՝ դարդերով:

ՋԱՎԱԽԵՑԻ ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

Ո՛վ, Ջավախքի սիրուն աղջիկ,
Սեգ Արուլի լանջի ծաղիկ,
Ես էն ծաղկանց միջի գառն եմ,
Ինչու՞ համար քեզի դառն եմ,
Ջավախեցի, ջանիդ մեռնեմ:

Սարին աշել, բոյ ես քաշել,
Զինար բոյովդ կյանքս ես մաշել,
Ես էլ էն քո երկրի ծառն եմ,
Ինչու՞ համար քեզի դառն եմ,
Ջավախեցի, ջանիդ մեռնեմ:

Սարեն կուգաս վարդի թերով,
Սիրտդ լիքն է յարիդ սիրով,
Սերս սրտիդ սերին խառնեմ,
Ինչու՞ համար քեզի դառն եմ,
Ջավախեցի, ջանիդ մեռնեմ:

Դու Հավասուս կյանքի արև,
Նեղացել ես, չես տա բարև,
Արի՛, արի՛, սիրտդ առնեմ,
Ինչու՞ համար քեզի դառն եմ,
Ջավախեցի, ջանիդ մեռնեմ:

ԱՆԳՈՒԹ ԱՇԽԱՐՀ

Անգուժ աշխարհ, ինձ դարդ տվիր անփարատ,
Կարծես ես քո որդին չէի հարազատ,
Այլոց համար բարի մայր ես գթառատ,
Անգուժ աշխարհ, իմ ջիգյարը դաղեցիր,
Դաղեցիր ու վերքերիս աղ շաղեցիր:

Գիշերն անծայր և երկինքս էլ ամպոտ էր,
Թախծախնդիր իմ բողոքը քեզ հետ էր,
Անմեղ հոգիս լուսաբացիդ կարոտ էր,
Անգուժ աշխարհ, իմ ջիգյարը դաղեցիր,
Դաղեցիր ու վերքերիս աղ շաղեցիր:

Երևանն է այսօր շքեղ, աննման,
Երջանիկ են տեսնողները մշտական,
Թող տեսնեի ես էլ, գոնե մի անգամ,
Անգուժ աշխարհ, իմ ջիգյարը դաղեցիր,
Դաղեցիր ու վերքերիս աղ շաղեցիր:

Հավասին եմ, տանջող դարդիս ճար չկա,
Մանուկ օրից անտակ վշտի ծովն ընկա,
Ամեն քայլում մի ընկերի ենթակա,
Անգուժ աշխարհ, իմ ջիգյարը դաղեցիր,
Դաղեցիր ու վերքերիս աղ շաղեցիր:

ՀԱՎԱՍԻՆ ՍԱՉ Է ՆԱԽՐՈՒՄ

ԻՐ ՎԱՐՊԵՏ ԹԻՖԼՈՒՆ

Սազ եմ բերել, վարպետ, խնդրեմ ընդունես,
Թե ավել, թե պակաս, Հավասուդ ներես,
Ինչ ցանկաս, նոր սաղով միշտ դուրիս բերես,
Իմ անդին ուսուցիչ, ազնի՛վ Թիֆլիս:

Տարիներով քեզ հնազանդ մնացի,
Քո շնորհիվ միտքս, աչքերս բացի,
Ջանք շինայելով հասցրիր հացի,
Հաշրական հոգու տեր, անզի՛ն Թիֆլիս:

Ի՛նչ բառեր որոնեմ, ի՛նչ գույներ փնտրեմ,
Որ լավերից լավը քեզ համար ընտրեմ,
Թե սխալմունք ունեմ, թողութլուն խնդրեմ,
Միշտ բարու մեջ մնաս, բարի՛ Թիֆլիս:

Սազս ուսած կանցնեմ քո ճամպարհով,
Տուր քո ճարտար ձեռքը և մնաս բարով,
Եթե սրտիս շուշեն չջարդին քարով,
Քեզ միշտ պարտական է քո սան Հավաւին:

Ներողամիտ եղիր քո սանին նորից,
Գոհացա ձեզանից ու ձեր շնորհից,
Դժվար է բաժանվել իմ Հիսնի մորից,
Միշտ շնորհապարտ եմ քեզ, վարպետ Թիֆլիս:

ԽԱՂՈՎ ԱՆՅԱՎ

Արտից եկող սիրուն փերին
Ի՛նչ անուշ ծիծաղով անցավ,
Չէր մոռացել սիրած յարին,
Եկավ ու մեր թաղով անցավ:

Թաղով անցավ, խաղով անցավ,
Ի՛նչ անուշ ծիծաղով անցավ:

Հոգին բարի, սիրտն անխռով,
Այ երեսի քրտինքը ծով,
Շատ է սիրում ծառերի հով,
Գարնան կանաչ բաղով անցավ:

Բաղով անցավ, խաղով անցավ,
Ի՛նչ անուշ ծիծաղով անցավ:

Չկա, չկա ոչ մի երկիր
Յարիս նման մեկ յար ընտիր,
Իր աշտերի նման կարմիր
Վարդը ձեռքին շաղով անցավ:

Շաղով անցավ, խաղով անցավ,
Ի՛նչ անուշ ծիծաղով անցավ:

Վրթանեսի յարն արևոտ,
Լեմթխած է օտարի մոտ,
Ինձ չթողեց ձայնին կարոտ,
Անուշ երգ ու տաղով անցավ:

Տաղով անցավ, խաղով անցավ,
Ի՛նչ անուշ ծիծաղով անցավ:

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿ ԵՍ

Գարնան ծաղիկ ես, ծաղիկ հոտավետ,
Բույրդ գալիս է անուշ հովի հետ,
Գարունն է լցրել քեզ իր շաղերով,
Բլթուլն է երգել անուշ տաղերով:

Մենակ ես բացվել գարնան բաղի մեջ,
Նոր արշալույսի անուշ շաղի մեջ,
Մենակ ես հաղթել հազար-հազարին,
Հազար երանի քո սիրած յարին:

Անուշ լողոյտիւ ես՝ սարից ես գալիս,
Ծառով ճամփորդին ջուր էլ չես տալիս,
Հեռվից կարծում են զովադնող ջուր ես,
Խմողին՝ ալրող կրակ ես, հուր ես:

Բաց արա լեզուդ, լոկ մի բառ ասա,
Զրով չի մարի, ի՞նչ կրակ է սա,
Բաց արա սիրտս, թող ապրեմ էլի,
Դարձիր Հավասուդ, անուշ նազելի:

ՎԱՐԴԵՐԻ ՄԵՋ , ԴԱՐԴԵՐԻ ՄԵՋ

Յսր, քեզանից հզոր չկա,
Սիրո վառման մարտերի մեջ,
Ով որ տեսնի ուշրը կերթա,
Դու լալ ու դառ դարդերի մեջ:

Զարդերի մեջ, վարդերի մեջ,
Սիրտս թողիր դարդերի մեջ:

Երբ տեսնում եմ քեզ խնդալիս,
Ես տխրում եմ, արյուն լալիս,
Արտույտ դառել, ման ես գալիս
Գարնան կանաչ արտերի մեջ:

Արտերի մեջ, վարդերի մեջ,
Սիրտս թողիր դարդերի մեջ:

Մայր արևին դու չես գիջել,
Դեմքիդ ծիծաղ է կարկաշել,

Կարծես գարնան շաղն է իջել
Խաս կակաչի ալ թերի մեջ:

Այ թերի մեջ, վարդերի մեջ,
Սիրտս թողի՞ր դարդերի մեջ:

Հավաս, երգչի՞ վառ սերն է ծով,
Նման գարնան արտերի մով,
Արի ման գանք զով գիշերով
Մեր ծաղկաշատ հանգերի մեջ:

Հանդերի մեջ, վարդերի մեջ,
Սիրտս թողի՞ր դարդերի մեջ:

ՅԱՐ, Ո՞ՒՐ ԵՍ ԴՈՒ

Ձմեռն անցավ, իմ նազելի,
Յար, չիմացա, թե ո՞ւր ես դու,
Ծաղիկների հետ բուրավի,
Գարնան բացվող աղբյուր ես դու:

Յար, ո՞ւր ես դու, աղբյուր ես դու,
Ծարավ սրտի սառ ջուր ես դու:

Յար, քեզ գովեմ հաղար երգով,
Հաղար երգով, սիրո խոսքով,
Լինուշ լեզվով, դեմ ու տեսքով,
Սրտի՞ր այրող վառ հուր ես դու:

Յար, ո՞ւր ես դու, աղբյուր ես դու,
Ծարավ սրտի սառ ջուր ես դու:

Յար, Հավասու երգն իմանաս,
Սիրուց տանջված փրտոյ բանաս,
Ուր էլ գնաս, ուր էլ մնաս,
Առանց յարի տխուր ես դու:

Յար, ո՞ւր ես դու, աղբյուր ես դու,
Ծարավ սրտի սառ ջուր ես դու

Զ ՈՒ Ր Կ Ե Ր Թ Ա Ս

Արի՛, յար չան, արի՛, սեր ջան, լալ ու մարջան
գոհար ես,
Գոհար անդին ու թանկագին, դու իմ կրծքին քնար ես,
Քնար լարով, անդին քարով, գնաս բարով, ո՞ւր կերթաս,
Արի՛, արի՛, եղնիկ սարի, առանց յարի զուր կերթաս:

Օրն է գարուն, քեզ պես սիրուն, դու դալարուն
ծաղիկ ես,
Ծաղիկ քնքուշ, բացվել ես ուշ, բուրմունքդ անուշ
փնջիկ ես,
Փնջեր քաղել, սիրտս դաղել, մենակ թողել, ո՞ւր
կերթաս,
Արի՛, արի՛, ծաղիկ սարի, առանց յարի զուր կերթաս:

Զուր ցավեցիր, խռովեցիր, կաքավեցիր նազենազ,
Նազերդ առար, թռչնիկ դառար, թեթև թռար վազեվազ,
Վազ տալով վար, դու սիրահար, Հավասու յար,
ո՞ւր կերթաս,
Արի, արի՛, թռչնիկ սարի, առանց յարի զուր կերթաս:

ԿԱՐՈՏ ԿԵՐԹԱՄ

Ո՛հ, ինչ դժվար օր էր այսօր,
Երկինքս ամպոտ, միտքս մուր,
Սիրուդ սրով իմ սրտին խոր
Յարա տվիր, յարոտ կերթամ,
Ես քեզանից կարոտ կերթամ:

վերջին անգամ տվիր ձեռքդ,
էլ չեմ լսի անուշ երգդ,
էլ չի բուժվի տված վերքդ,
Յարա տվիր, յարոտ կերթում,
նս քեզանից կարտու կերթում:

Քեզ բան տուել չատ դժվար է,
Շատ դժվար է, անհնար է,
վերքս անդեղ ու անճար է,
Յարա տվիր, յարոտ կերթում,
նս քեզանից կարտու կերթում:

Մեր թշնամին ուրախացավ,
Նախանձ սիրտը հանգստացավ,
Իսկ Հավատիդ վերք ստացավ,
Յարա տվիր, յարոտ կերթում,
նս քեզանից կարտու կերթում:

ԱԵ՛, ՄԻ ԱՆԳԱՄ Է՛Լ ԶԻՋՆԻՐ

Ա՛խ, մի անգամ էլ զբօսիր, սիրուհիս, քեզ բան ասելի,
նորից Եւք-ունքդ դովիկի, սիրուհի, աննման ասելի,
Դադկադադար սարի նման ծոցիդ բուրաստան ասելի,
Բլրուլին կարստով տանջող՝ վարդով վարդաբան ասելի:

Եւանի՛ քեզ չճանաչող անձանոթ, օտար լինելի,
Կամ լավ ու վատից անտեղյակ, սիրուց բխաբար
լինելի,
Կամ թե մտրմար կրծքիդ վրա մի ոսկեքաշ լար լինելի,
Մատաղ սրտիս քնքուշ զարկով հնչելի, ջան-ջան ասելի:

Մի անգամ ասի՝ ի՞նչ ասեմ, ասի՛ր, տեսքիս արև ասա,
Կարմիր խնձոր անվանեցի, ասի՛ր՝ վարդի տերև ասա,

Բոցավառ կանթեղ աչիբիդ դու խնդրեցիր, թե սե ասա,
Երանի անկ էլ երգերի, Կախշուն ծիածանն ասերի:

Դու Հալապուդ ելած սիրտը դուլացնեիր հովի նման,
Սրբերի սրցածնին աչրերիս, չիղղներ ծովի նման,
Ախ ու վախով շմեռնեի անբախտ Սալաթ-նովի նման,
Միբուն ձեռք կրծքիս վրա, Հիմա սուր վախճան, ասերի:

Քեզ էլ քի ՄԵԱ

Դու մի աննման փերի ես,
Քեզ նման հողածին չկա,
Միայն սիրո մեջ թերի ես,
Քեզանում սեր կարգին չկա:

Յա՛վ դրիր սրտիս վրա,
Հիմա ուր կուգես գնա,
Քեզ էլ չի մնա:

Շատ եմ ասել վարդ բուրավետ,
Համեմատել աստղերի հետ,
Հրեշտակի լույս երեսդ
Ասում ես՝ «Քեզ բաժին չկա»:

Յա՛վ դրիր սրտիս վրա,
Հիմա ուր կուգես գնա,
Քեզ էլ չի մնա:

Հազար տեղով վերքս բացիր,
Սիրո ցավը դու չզրացիր,
Ինչ հա՛ջ ունես՝ վերջն իմացիր,
Որ ասեն Հավասին չկա:

Յամ գրիր սրտիս վրա,
Հիմա ուր կուղեզ գնա,
Քեզ էլ չի մնա:

ԿԱՐՈՏԵԼ ԵՄ ԵՍ

Գուսանների լեզվով գովական աղջիկ,
Ո՛ւր ես, խինդ ու խալիդ կարոտել եմ ես,
Սարի անմահական քաղցրաբույր ծաղիկ,
Առավոտյան շաղիդ կարոտել եմ ես,
Անուշ երգ ու տաղիդ կարոտել եմ ես:

Հերոս, անվախ սիրտը չի սպասի բախտի,
Սիրունն իր նազերով քաջին կհաղթի,
Յար, ծոցիդ պարտեզն է անմահ դրախտի,
Սիրուն բախշա-բաղիդ կարոտել եմ ես,
Անուշ երգ ու տաղիդ կարոտել եմ ես:

Համասուս մի կյանք է մեկ բարե տալդ,
Կսպանե անտարբեր հեռուն ման գալդ,
Վաղուց է չեմ լսել խոսել, խնդալդ,
Նազելիս, ծիծաղիդ կարոտել եմ ես,
Անուշ երգ ու տաղիդ կարոտել եմ ես:

ԶՈՔԱՆԶ ԽԱՆՈՒՄ

ՓԵՍԱ—Ո՛չ բարով գայի ձեր գեղը,
Զուտեի քո ձվածեղը,
Խելքս տարար տեղն ու տեղը,
Ինձ խաբել ես, զոքանչ իմանում,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Աղա փեսա, էս ի՞նչ արիր,
ես գիտեմ, թե լավ լո՛ւր բերիր,
Սրտիս վրա կրակ դրիր,
Գլխիդ մատաղ, աղիզ փեսա,
էսօր դեմքդ լավ շտեմա:

ՓԵՍԱ—Ես ձեր տանը դռնադ դառա,
Խոսքիդ համոզվեցի, վառա,
Իր մոր գոված աղջիկն առա,
Ինձ խաբել ես, զոքանչ խանութ,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Հոժար չես, որ մեր տուն եկար,
Աշխարհիս մեջ բախտդ գտար,
Ինձ պես կնկա փեսա եղար,
Գլխիդ մատաղ, աղիզ փեսա,
Որ իմանաս, մեծ բան է սա:

ՓԵՍԱ—Ես քեզ տեսա սիրուն խելքով,
Աղջիկդ առա մեծնանց կարգով,
Կրակն ընկա ես իմ ձեռքով,
Ինձ վառել ես, զոքանչ խանութ,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Իմ աղջիկը խասից խաս է,
Մարմար ծոցի ոսկե թաս է,
Մտածելը քեզ վնաս է,
Գլխիդ մատաղ, աղիզ փեսա,
էսօր դեմքդ լավ շտեմա:

ՓԵՍԱ—Մտածելը անօգուտ է,
Մի ճար արա, քանի շուտ է,

Հավ ուտել ու պառկել գիտե,
Ինձ խաբել ես, զոքանչ խանում,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Որ մտիկ տաս բոյին, բուսին,
Երեսմ ունի կլոր լուսին,
Անծանոթ է ձեր տան ծեսին,
Գլխիդ մատաղ, ազիզ փեսա,
Որ իմանաս, մեծ բան է սա,

ՓԵՍԱ—Կարծես խելքը գլխին յար չէ,
Սարից իջած կոպիտ արջ է,
Կարել-գործելուց խաբար չէ,
Ինձ խաբել ես, զոքանչ խանում,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Իմ աղջկան շատ մի ատե,
Սխալներին մի նախատե,
Կեսուր շունի, որ խրատե,
Գլխիդ մատաղ, ազիզ փեսա,
Որ իմանաս, մեծ բան է սա:

ՓԵՍԱ—Ես մի ջահել, մտքով թեթե,
Քեզ որ տեսա՝ մոռացա բարե,
Դու կարմիր ես, աղջիկդ՝ սև,
Ինձ վառել ես, զոքանչ խանում,
Ես ումնո՞վ եմ ուրախանում:

ԶՈՔԱՆԶ—Հերիք խոսիս դու դուփ-դուրան,
Անմեղ տեղը ատես նրան,
Գնա կորի, լափշո բերան,

էլի կասի զոքանշ խանում,
Տես ումնո՞վ է ուրախանում:

ՓԵՍԱ—Թե որ խիղճդ միտդ բերես,
Թե ինչ օրի մնացի ես,
Հավասին էլ ծաղրէց վրես,
Ինձ վառեցիր, զոքանշ խանում,
Տխուր եմ, չեմ ուրախանում:

ՔԱՆԻ ԳԱՐՈՒՆ Է

Եկ, իմ աննման, սրտով սիրաբան,
Տուր ինձ մի պայման, քանի գարուն է,
Դուրս գանք ման գալու, խոսել, խնդալու՝
Հրճվենք ես ու դու, քանի գարուն է,
Եկ, առնենք քնար, սիրուն, ոսկեկար,
Երգենք սեր ու յար, քանի գարուն է:

Նայիր արոտին, ոչխարի հոտին,
Հնչում է ուրախ հովվի մեղեդին,
Արի ման դալեն, թողնելով մահլեն՝
Գնանք մեր յայլեն, քանի գարուն է,
Եկ, առնենք քնար, սիրուն, ոսկեկար,
Երգենք սեր ու յար, քանի գարուն է:

Գարուն է, գարուն, իջնում է առուն
Մեր ծաղկադալար սարերից սիրուն,
Զուր տուր ալ վարդին, Հավասու սրտին,
Ճար արա դարդին, քանի գարուն է,
Եկ, առնենք քնար, սիրուն, ոսկեկար,
Երգենք սեր ու յար, քանի գարուն է:

Յարը մարդու յարա կուտա, շատ ուշ հասկացա,
 ժայռից պոկած սիրտը նրա քնքուշ հասկացա,
 Յարս ինձ շասաց՝ «Դեղ տամ վերքիդ, առ դիր,
 Սեր երգելուց ձեռքիդ սազը վայր դիր, ով աշուղ»:

Երանի յադ ունենայի,
 Յադերից շատ ունենայի,
 Սարի պես դարդ ունենայի,
 Յար շունենայի:

Յարի սերը շատ անուշ է, լավին լավ չի գա,
 Յարի դարդը ծակող փուշ է, ցավին ցավ չի գա,
 Քաղցր է նրա տված ջուրը, անմահական է,
 էլ չի հանգչի տված հուրը, հոգի կհանե:

Երանի յադ ունենայի,
 Յադերից շատ ունենայի,
 Սարի պես դարդ ունենայի,
 Յար շունենայի:

Հազար տեսակ տանջանք կուտա վարդը բլրուլին,
 Ով յար ունի՝ նա կիմանա դարդը բլրուլին,
 Ես Հավասն եմ, սոխակի պես վշտերս եմ լալիս,
 Սիրո հուրը իմ սրտակեզ՝ հանգիստ չի տալիս:

Երանի յադ ունենայի,
 Յադերից շատ ունենայի,
 Սարի պես դարդ ունենայի,
 Յար շունենայի:

Երգ ձոնեցեք ուրախ, զվարթ,
Սրն է գարուն ծաղիկների,
Որպես հոտով ու կարմիր վարդ,
Երկու սիրուն ծաղիկների:

Մեր սիրուն հարս, ջահել փեսա,
Ձեր խնջույքին ես էլ հասա,
Հարսանիքներդ բարով տեսա,
Ձեր նոր կյանքի մուրազն է սա:

Փեսան բլբուլ՝ կանցնի բաղով,
Հարսն էլ գարնան վարդն է շաղով.
Կյանքերն օրհնենք երգ ու տաղով՝
Մեր սիրասուն ծաղիկների:

Մեր սիրուն հարս, ջահել փեսա,
Ձեր խնջույքին ես էլ հասա,
Հարսանիքներդ բարով տեսա,
Ձեր նոր կյանքի մուրազն է սա:

Բաժակները լիք-լիք արեք,
Կենացները տեղով տարեք,
Հարսանիքին երգեք, պարեք՝
Նոր դալարուն ծաղիկների:

Մեր սիրուն հարս, ջահել փեսա,
Ձեր խնջույքին ես էլ հասա,
Հարսանիքներդ բարով տեսա,
Ձեր նոր կյանքի մուրազն է սա:

Իր երգով մաղթեց Հավասին,
Բախտ ու արև, սեր երկուսին,

Մեկն արեւ է, մեկը՝ լուսին,
Վառ շողշողուն ծաղիկներին:

Մեր սիրուն հարս, ջահել փեսա,
Ձեր խնջույքին ես էլ հասա,
Հարսանիքներդ բարով տեսա,
Ձեր նոր կյանքի մուրազն է սա:

ԱԽՊԵՐ ԶԱՆ

Օտարության մեջը մաշեց իր կյանքը,
Թերի մնաց սրտի իղձն ու բաղձանքը,
Զի վերջանա հոգի հանող տանջանքը,
Օտար երկրում տխուր, տրտում, ախպեր ջան,
Իմ տանջալի, իմ անխնդում, ախպեր ջան:

Շատ վաղուց է նամակ չի գա, լուր չի գա,
Նամակն ուշանալը սրտիս դուր չի գա,
Ախպերասեր, կարոտ աչքիս քուն չի գա,
Կարոտդ հուր, ա՛խ ուր ես, ուր, ախպեր ջան,
Անմահական անուշ աղբյուր, ախպեր ջան:

Կինը որ կա, օտար մարդու աղջիկ է,
Որդին որ կա, արհեստական ծաղիկ է,
Իսկ ախպերը անուշ կյանքի մասնիկ է,
Կյանքի կտոր, հոգուս հաստոր, ախպեր ջան,
Ինձ թողել ես խեղճ ու մոլոր, ախպեր ջան:

Դու Հավասի, ախպեր կանչիր երգերով,
Սիրտդ լիքն է կարոտալի վերքերով,
Նա չի բուժվի օտաւիների ձեռքերով,
Վերքերիս դեղ, հոգով անմեղ, ախպեր ջան,
Բոյ բուսաթով, վայելչագեղ, ախպեր ջան:

Սիրտս ծակեց արմասի պես,
Աղջի, սուր դանակ է խալդ,
Երեսդ շուռ տուր ինձանից,
Այրեցիր, կրակ է խալդ:

Թուր է խալդ, սուր է խալդ,
Հոգի այրող հուր է խալդ:

Խալդ ինձ տվեց սիրո քնար,
Բաց արավ էշխի ճանապարհ,
Ցերեկն արև է ինձ համար,
Գիշերն էլ լուսնյակ է խալդ:

Թուր է խալդ, սուր է խալդ,
Հոգի այրող հուր է խալդ:

Հավասին է խալի կարոտ,
Դեղ է փնտրում սրտին յարոտ,
Մերանավառ ու ծաղկահոտ,
Գարնան մանուշակ է խալդ:

Թուր է խալդ, սուր է խալդ,
Հոգի այրող հուր է խալդ:

ԱՆՈՒՇ ԳԱՌՆԻԿ ԵՍ

Անուշ գառնիկ ես, գառնիկ միամոր
Նախշուն թռչնիկ ես, թռչնիկ թեւավոր,
Մենակ. անընկեր, անընկեր տատրակ,
Ճամփիս կապասես, թանկագին հոգյակ,

Թանկագին հոգյակ, սիրուն իմ սոխակ,
Սիրուն իմ սոխակ, քաղցրախոս թութակ:

էդ բարակ բոյիդ, բոյիդ շինարի,
Մեղրածոր լեզվիդ, լեզվիդ շաքարի,
Կարոտած կգամ, կգամ երազով,
Քեզ հետ կխոսեմ սրտիս մուրազով,
Սրտիս մուրազով, իմ սիրուն սազով,
Իմ սիրուն սազով, յար ջան, քո նազով:

Գուսան Հավասն եմ, կարոտել եմ քեզ,
Ա՛խ, երբ կհասնեմ, հասնեմ սրտակեզ,
Ծաղկալից գարնան, գարնան սարերի,
Կանցնեմ վրայով սառն աղբյուրների,
Սառն աղբյուրների, անուշ ջրերի,
Անուշ ջրերի, աննման փերի:

ԻՆՉՈՒ ՍԻՐԵՑԻՐ

Ինչո՞ւ սիրեցիր, քո սերն եմ, ասիր,
Անընկեր հոգուդ ընկերն եմ, ասիր,
Ասիր, թե ավյուն, սեր պիտի տամ քեզ,
Որ դու ինձ երգես, քանի որ կամ ես,
Ա՛խ, անուշ լեզվով սիրտս գերեցիր,
Ա՛յ դու սեասիրտ, ինչո՞ւ սիրեցիր:

Ինչո՞ւ սիրեցիր, փերիդ եղեմյան,
Տեսնողին կանես խենթ ու խելահան,
Քո դեմք ու աեսքին շատերն են տարվել
Եվ նազ ու սազիդ կրակով վառվել.
Քո անուշ լեզվով սիրտս գերեցիր,
Ա՛յ դու անհոգի, ինչո՞ւ սիրեցիր:

Ինչո՞ւ սիրեցիր դիպուկ շանթի պես,
Իմ անսեր սիրտը արիւր սիրակեզ,
Տվիր Հավաստն հարված մահաբեր,
Քո սերն եմ երգում ցերեկ ու գիշեր,
Յա՛ր, անուշ լեզվով սիրտս գերեցիր,
Ա՛յ դու ապերախտ, ինչո՞ւ սիրեցիր:

ԴՈՒ ՄԻ ԱՐԵՎ ԵՍ

Դու մի արեւ ես, արեւ անխավար,
Հեգ սրտիս վրա, խեղճ հոգուս համար,
Դու մի քեյրան ես սարի սիրահար,
Որսորդին տանջող, փախչող անդադար:

Իս մի սաղ ունեմ, զենք չկա ձեռքիս,
Իզուր ես փախչում, չես լսում երգիս,
Ես մի աշուղ եմ, աշուղ սիրահար,
Աշուղ անողն էլ դու ես, անջիգյար:

Ուզում եմ ասել, դու հոգեհան ես,
Հավաստով սիրտս անհավաս կանես,
Ուզում եմ երգել՝ աշխարհն իմանա,
Որ քո կրակին էլ չեմ դիմանա:



1986 թվականի հունիսին Կարգախ գյուղում մեծ շուֆով հշվեց աշուղ Ջիվանու ծննդյան 140-ամյակը:
ՆԵՄՈՒՄ. — Հանդիսավարության մասնակիցները:

Ք Ո Վ Ա Ն Կ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՌԱՋԱԲԱՆ — Դ. Բաղրատունի	3
ԶԻՎԱՆԻ	6
Աշուղ	13
Հովիկ	13
Մարիկ	14
Շնկեր	15
Սղիտակ մազեր	15
Եւ ընդ տեւա	16
Նախ	17
Դոփստ Արարիի դաւերս	18
Սարի սիրուն եղնիկ	19
Պաղ աղբուրի մտ	20
Իրեկոյան զիմ արի	21
Ստի-ստով	21
Զախորդ օրեր	22
Ազդ իմ	23
Եւ մեկ ծառ եմ ծիրանի	23
Խելիքի աշէջեք	24
Ազապն ու կտրգածք	27
Այծյամ	30
Ազգութաց	31
Քաջ Վարդան	32
Օտարականի երգը	33
Թիֆլիսը	34

Հեփաթենք

Գլխիդ մատաղ լինեմ	37
Երանի ձեզ	38
Իկա անքննելու	38
Եկ, տուր օրհնութիւնդ	39
Թող, Սանամ, երեսիդ մտիկ տամ	40
Ղարիբի հրաժեշտը	41
Ղարիբի մոր և Սանամի ողբը	41
Մնաս բարով, Թավրիզ քաղաք	42
Շահ Սանամի դիմումը Ղարիբին	43
Ստեղծողից սրտով խնդրեցի	43
Քեզ որ տեսա	44
Օտար երկրից վերադարձա	45
Երեսը մի տեսնի նախանձոտ մարդի	45
Ինձնից միք նեղանա	46
Ով նազելի	46
 ՍԻԱՅԻ	 48
Մարինա	52
Լեղբուրի մոտ	52
Շող է տալիս	53
Սարի շէյրան	53
Մուհամմա	54
Աշուղ Սիային խրատում է իր աշակերտ Մաթևոսին	56
 ԹԻՖԼԻ	 58
Աշուղ	62
Պեվա	62
Երազ	63
Ջավախք	63
Արի, սիրեկան, որտե՞ղ ես	64
Ով փերի	65
Լեղբուրից չուր տանող աղջիկ	65
Կեփամայրը	66
Երանի երազիս գայիր	67
Հովհ. Թումանյանին	67

Սիաշուն	68
Նիվանուն	69
Վարդան Մամիկոնյանին	69
Բիֆիլին՝ իր աշակերտ Հովաստուն	70
Կարոտել հմ	71
Բող ևս կարոտով մնամ	72
Դուր մնալ բարով	72
Հարսանիքից	73
Գողանիւր շունեմ	74
Գեղեցիկ է շոյն արեւի	74
Սիրո խոստովանութիւն	75
Յար անուշիկ	76
Յարս մոռես անցով	76
Պարտել մոռ	77
Հրաշքի սկես հայտնվեցավ	78
Ժամփին տեսա	78
Յար քեզանից վերբ առա	79
Խնամի, օճախդ շեն է	79
Հաղար մաղից հաց հմ կերել	80
Իմ սաղը	81
Ինքս՝ ինձ	83
Թամազա	83
Պարերդ	83
Հանդես է բացվում	84
ԱՅԹԻՆ	86
Սիրուններ	88
Ինչ անեմ	89
Ես հույս չունեմ	89
Սիրտս հովանա	90
Հով է այրվիմ	91
Զմեաց	91
Խրատական	92
Իմ խոսքերին ականջ արա	92
Դու անիրավ	93

ՖԻՐԱՂԻ	95
Գիշեր-ցերեկ	98
Խարապա	98
Ես կերթամ	99
Ավախ	99
Ինչ անեմ	100
Ով մատաղ լինի	100
ՍՈՒՔԱՆԻ	101
Սիրուհի	102
Բաղմոթյան մեջ	103
Եղաւ Լս	104
Ցիրուցան եղան	104
Ես ինչ անեմ	105
Փաղցրալեզու	105
Մերժեց յարս	106
Անկիրթ աշակերտ	107
ՀԱՎԱՍԻ	108
Երդ խաղաղության	113
Երիտասարդ Հայաստան	113
Հայրենիք	114
Հայաստանի սիրուն սարեր	115
Ուշացած նամակ	116
Գնանք Երևան	116
Կոլխոզի շորան	117
Հայաստանցի	118
Ինչ ասեմ յարիս	119
Չոլի չեյրան	120
Յայլավոր յարս	120
Զեյիլու, բարե տար	121
Եղնիկի պես ծուռ մի աշե	122
Աննման տարազով	122
Ջավախեցի սիրուն աղջիկ	123
Անգութ աշխարհ	124
Հավասին սաղ է Լվիրում իր վարպետ Թիֆլուն	125
Խաղով անցավ	125

Գարնան ծաղիկ ես	126
Վարդերի մեջ, դարդերի մեջ	127
Յար, ո՞ւր ես դու	128
Ջուր կերթաս	129
Կարոտ կերթամ	129
Ա՛խ, մի անգամ էլ գիշերի	130
Քեզ էլ չի մնա	131
Կարոտել եմ ես	132
Չորանչ խանում	132
Քսենի գարուն է	135
Ցարը մարդու յարա կուտա	136
Հարսանյաք երգ	137
Ախպեր չան	138
Խալդ	139
Անուշ դառնիկ ես	139
Ինչո՞ւ սիրեցիր	140
Դու մի արև ես	141

ՋԱՎԱԽՓԻ ԳՈՒՍԱՆՆԵՐԻ

ԵՐԳԵՐ

Խմբագիր՝ Հ. Չորանյան, Նկարիչ՝ Լ. Վարդանյան, Գեղ. խմբագիր՝ Բ. Կո՛ւրե՛ծէ, տեխնիկական խմբագիր՝ Է. Աղսա, խալլան, սրբագրիչ՝ Ա. Բոստանջյան

HP 4018

Հասնելուժ է շարժվածքի 1.07. 1987 թ. ստորագրված է տպագրության 11.08.1987 թ., ՈԻԷ 01923, ֆորմատ 70X100 էջ 32 թուղթ № 1 տատանակ՝ զրակահն Տպագրությանը՝ բարձր Պուլմ. տպոգրական մամուլ 5,97: Հաշվ. հրատ. մամուլ 5,21: Տիրած 2500 օրինակ: Պատվեր 897:

Գիտը՝ 65 կռպ.

Մերանիա հրատարակչություն, 380008 Քրիլիսի, Ռուս-
կապիկու պոչոտա 42: Վրացական ՍՍՀ հրատարակչություն-
նելը, պոլիգրաֆիայի և գրքերի առևտրի գործերի պետական
կոմիտեի Ախալցախի տպարան, Գործարանային փող. 11

ჯავახეთის აზულების სიძღვრები

(ლომხური ენაზე)

შეადგინა, წინასიტყვაობა და დახასიათებები დაწერა
ბაბრატუნი დ. ვ.

გამომცემლობა „მერანი“, 380004 თბილისი, რუსთაველის
გამზ. - 12 საქართველოს სსრ გამსახვომის ახალქალაქის სტამბა
ქარხნის ქუჩა 11

ПЕСНИ АНУГОВ ДЖАВАХЕТИ

(На армянском языке)

Составил, написал предисловие
и автобиографии БАГРАТУНИ Д. В.

Издательство «Мерани», 380008 Тбилиси. проспект
Руставели 42. Ахалкалакская типография Госкомитета Грузинской ССР по делам издательств, поли-
графии и книжной торговли, Ахалкалаки, ул. За-
водская 11.